

14108





ԼԵՎ ՏՈՒՍՏՈՅ

17 9 NOV 2010

# ՀՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՊՏՈՒՂՆԵՐԸ

ԿՈՄԵԳԻՍԻ 4 ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՄԲ

891.71  
S-80



891.71

S-80

իր

ԼԵՎ ՏՈՒՍՏՈՅ

ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ  
ՊՏՈՒՂՆԵՐԸ

ԿՈՄԵԿԻՍԵ Կ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՄԲ

Թարգմանություն  
Կ. ԼԵՎՈՆՅԱՆԻ

1010  
40996



Գ Ն Ս Կ Ա Ն Ն Ը Ր Ա Տ Ա Ր Ա Գ Չ Ք Ն Գ Թ Յ Ա Ի Ե  
Յ Ե Բ Ե Կ Ա Ն 1936



Տեխ. խմբ. Տ. Խ ա ' Վ ա ն Բ յ ա ն  
 Սրբազրիչ՝ Հ. Մ ա ն ա ւ Կ յ ա ն  
 Պատերազմի ապարան, II դնունի 4  
 Գլավիլիա 1073, Պատվեր 19,  
 Հրատ. 2545, Տիրաժ 5000

### Գ Ո Ր Ծ Ո Ղ Ա Ն Ձ Ի Ն Ք

Լեոնիդ Ֆետոբորովիչ Զվեգդինցեվ.— Հեծելազորի գնդի պաշտոնաթող սպա. (отставной поручик конной гвардии) զանազան նահանգներում 24000 դեսյատին հողերի տեր: Առույզ աղամարդ, մոտ 60 տարեկան, մեղմ, հաճելի ջենտլմեն: Հավատում է սպիրիտիզմին և սիրում է ուրիշներին զարմացնել իր պատմություններով:

Աննա Պավլովնա Զվեգդինցեվա.— Նրա ամուսինը, լիք, ջահել ձեացող կին, աշխարհիկ կարգերին առանձին նշանակութուն ավող, ատող իր ամուսնուն և կուրորեն հավատացող բժշկության. բնավորությամբ դյուրագրգիռ:

Բեդաի.— Նրանց աղջիկը, աշխարհիկ որիորդ, մոտ 20 տարեկան, տղամարդկանց նման սանձարձակ շարժումներով. պենսյեյով, կոկիտ և քրքչացող: Խոսում է շատ արագ, պարզ, արտասանմանցու պես շրթունքները սեղմած:

Վասիլիյ Լեոնիդիչ.— Նրանց վորդին, 25 տարեկան, իրավաբանական գիտությունների կանդիտատ, առանց վորոշ զբաղմունքի: Վելոսիպեդիստների ընկերության, ձիարշավների ընկերության և վորսկան շների աճեցումը խրախուսող ընկերության անդամ: Լիակատար առողջության և անխորտակելի ինքնահավանության տեր չերիտասարդ: Խոսում է բարձր և կրակոտ: Յերբեմն բոլորովին լուրջ. համարյա մռայլ է, չերբեմն աղմկալից, ուրախ և քրքչում է բարձրաձայն:

Ալեքսեյ Վլադիմիրովիչ Կրուգոսվեսլով.— Պրոֆեսոր, ուսումնական, մոտ 50 տարեկան: Հանդարտ, ինքնահավան շարժումներով, խոսում է դանդաղ, չերգանման ձայնով, սիրում է խոսել: Իրեն հետ չհամաձայնողներին վերաբերվում է մեղմ ատելությամբ: Ծխում է շատ, նիհար, շարժուն մարդ:



Բժիշկ. — Մոտ 40 տարեկան, առողջ, հաստ, կարմրադեմ: Սոսուս ե բարձր, կոպիտ ձևերով, շարունակ ինքնագոհ, ժպիտը դեմքին:

Մաքիա Կոստանդինովնա. — 20-ի մոտ որիորդ: Կոնսերվատորիայի սանուհի, յերաժշտության վարժուհի. ճակատին խոպոպիկներ, չափազանց քաղցր մոզայական տուալետով: Աշխատող ուրիշներին դուր գալ և հաճելի յերևալ. շուտ նեղացող և քաշվող:

Պետրիլով. — Մոտ 28 տարեկան: Լեզվաբանական գիտությունների կանգնատա, գործունեությունն ասպարեզ վորոնող: Անդամ նույն ընկերությունների, ինչ վոր Վասիլևյ Լեոնիդիչը. և բացի դրանից՝ անդամ չլեզեն և կալինկորեզեն պարահանդեսներ կազմակերպող ընկերության: Ճաղատ գազաթով, շարժումների և խոսելու ժամանակ շտապ, շատ քաղաքավարի:

Բաբոնսա. — Իրեն ծանր պահող կին, մոտ 50 տարեկան, շատ դանդաղաշարժ, խոսում է միապաղաղ ձայնով:

Իսխանագուհի. — Աշխարհիկ որիորդ, ծամածուռությունների սիրող, հյուր:

Իսխանուհի. — Աշխարհիկ տիկին, և հյուր:

Կոմսուհի. — Շատ պառավ ու մաշված կին. դժվարություններ շարժվող. կեղծ մաղերով և ատամներով:

Գրոսման. — Սեռաբեմ տղամարդ հրեական տիպի. սաստիկ արագաշարժ, ջղային, խոսում է շատ բարձր:

Հասակավաճ սիկին Մաքիա Վասիլևնա Տալուխինա. — Իրեն շատ ծանր պահող, հարուստ և պարզասիրտ կին. ծանոթ բոլոր նախկին և ժամանակակից նշանավոր մարդկանց: Շատ հաստ, խոսում է շտապ, աշխատելով լեզվակոխ անել ուրիշներին: Ծըխում է:

Բաբոն Կլիմեն. — (Կոկո) Պետերբուրգի համալսարանի կանգնատա. կամեր-չունկեր, դեսպանատան ծառայող: Լիովին կորեկա է, դրա համար ել հողով հանգիստ է և ուրախ:

Մի սիկին. — Անխոս:

Սախասով, Սերգեյ Իվանովիչ. — Մոտ 50 տարեկան, նախկին ոգնական մինիստրի, հաճոյատես, ելեզանտ պարոն. լեզրոպական լաչն կրթությունը: Վոչնչով չի պարապում և ամեն բանով հետաքրքրվում է. իրեն պահում է արժանավայել և մինչև անգամ մի քիչ խիստ:

Ֆեոդոր Իվանիչ-կամերդիներ. — Մոտ 60 տարեկան, կրթված և կրթութունը սիրող մարդ, ի չարն է գործ դնում պեսանայի և թաղիկնակի գործածությունը: Ամեն անգամ թաղիկնակը գործ

ձածելիս, խնամքով բաց է անում և ծալում: Հետևում է քաղաքականություն: Խելոք և բարի մարդ:

Գրիգորի. — Լակեյ, մոտ 28 տարեկան. շատ գեղեցիկ, ցոփ կյանք վարող, նախանձոտ և համարձակ:

Յակոբ. — Մոտ 40 տարեկան, բուժիտաշիկ, շարունակ գրագված է: Բարեսիրտ, միայն գյուղական ընտանեկան հոգսերով ապրող:

Սիմեոն. — Բուժիտի ծառան, մոտ 20 տարեկան: Առողջ, թարմ, գյուղական ջահել, շիկահեր, դեռ անմորուս: Հանգիստ, ժպիտը չերեսին:

Կառապան. — Մոտ 35 տարեկան: Պճնասեր (ЩЕГОЛЬ) միայն բխերով, կոպիտ և վճռական:

Մեք խոհարար. — Մոտ 55 տարեկան, փոշոտ, չածիլված, փքված, դեղնագույն, դողողացող, ամառային պատառտած վերարկույով և կեղտոտ շալվարով, կապիճներով: Սոսում է խըպոտ ձայնով: Բառերը բերանից դուրս են գալիս մեծ դժվարություններ:

Խոհարարուհի. — Շատախոս, անբավական, մոտ 30 տարեկան:

Շվեյցար. — Պաշտոնաթող զինվոր:

Տանյա. — Աղախին, մոտ 19 տարեկան, յեռանդուն, կորովի, ուրախ և տրամադրությունը շուտ փոփոխող աղջիկ: Սաստիկ ուրախության միջոցներին ճիչեր է արձակում:

Ա. Գյուղացի. — Մոտ 60 տարեկան: Յեղել է տանուտեր: Յենթադրում է թե գիտե բարձր դերքի մարդկանց հետ վարվել և սիրում է չերը իրեն լսում են:

Բ. Գյուղացի. — Մոտ 45 տարեկան: Սեփական տնտեսություն տեր, ճշմարտախոս, խոսելիս չի սիրում ավելորդ բան ասել: Սիմեոնի հայրը:

Գ. Գյուղացի. — 70 տարեկան, տրեխներով, ջղային, անհանգիստ, շտապող, յերկչոտ և խոսակցությունը ծածկող իր վախկոտությունը:

Կոմսուհուն կառավ ուղեկցող լակեյ. — Հին դարի ծերունի լակեյական հպարտությունը:

Յերկորդ լակեյ. — Ահագին, առողջ, անտաշ:

Արեխիչի. — Սանուկից. կապույտ բլուզով, մաքուր, կարմրաթուշ յերեսով, խոսում է հաստատուն, տպավորիչ և պարզ:

Գործողությունը կատարվում է մայրաքաղաքում, Զվեգլինցիկներ տանը:



## ԱՐԱՐՎԱԾ I

Քեմը ներկայացնում է Մոսկվայում մի հարուստ սան նախասննդակ: Յերեք դուռ՝ դրսի, Լեոնիդ Ֆեոդորովիչի առանձնատեղակի յեվ Վասիլի Լեոնիդիչի սենյակի: Գեպի վերին սենյակները սանոզ սանդուխտներ: Յեսելում դեպի բուժներ սանոզ միջանց:

### ՏԵՍԻԼ 1

**ԳՐԻԳՈՐԻՅ**—(Յերիսասարդ յեվ գեղեցիկ լակեյ, նայում է հայելուն յեվ ախասում է ավելի գեղեցկանալ): *Ա՛յ ախոսս իմ բեխերը, լակեյին բեխերը չի սազում, ասում է: Ինչո՞ւ, վորպեսզի յերևա վոր դու լակեյ յես: Վոր չլինի թե յես նրա սիրելի վորդուց լավ յերևամ: Ո՞ւմ են գտել: Թեկուզ առանց բեխերի ել լինեմ, ելի նա ինձ չի հասնի: (Նայում է ժպտալով) յեվ քանի քանիսն են իմ հետեից ընկնում: Բայց վոչ վոք ինձ այնպես դուր չի գալիս, ինչպես այդ Տանյան: Հասարակ աղախին է, աչո, բայց սես վոր մեր որիորդից ել լավն է: (Ժպտում է) և սիրունիկ ել է: (Ականջ է դնում) ահա ինքն է վոր կա: (Ժպտում է) ա՛յ սես ինչպես կրունկները տկտկացնում ե... վ-վա:*

### ՏԵՍԻԼ 2

Գրիգորի յեվ Տանյա (ձեռքին մուսակ յեվ կոբիկներ)  
**ԳՐԻԳՈՐԻՅ**—Տառյանա Մարկովնային հարգանքս:  
**ՏԱՆՅԱ**—Ի՞նչ է, հենց միշտ հայելուն եք նայում, կարծում եք շատ գեղեցիկն եք:  
**ԳՐԻԳՈՐ**—Ի՞նչ է վոր, անդուրեկան եմ:  
**ՏԱՆՅԱ**—Վոչ դուրեկան, վոչ ել անդուրեկան, այլ այդ յերկուսի մեջ տեղը: Այդ ի՞նչ է, դեռ մուշտակները կախված են աչտեղ:

**ԳՐԻԳՈՐ**—Այս բոպելին, տիրուհիս, այս բոպելին կհավա-



քեմ: (Վար ե առնում միմուտեակ յեվ նրանով ծածկելով Տանյայիև փարարվում ե նրան) Տանյա, լսիր, ինչ եմ ասում...

ՏԱՆՅԱ.— Դե, բավական ե, լավ, ելի ինչ ե կպել սա ինձա-

նից: (Բարկացկոս դուրս ե պրծնում): Թողեք, ասում եմ:

ԳՐԻԳՈՐ.— (Աչքը նրանից չհեռացնելով) Համբուրեցեք գոնե:

ՏԱՆՅԱ.— Այդ ի՞նչ ե, դուք ինձանից վազ չեք գալիս, չես ձեզ աչնպես կհամբուրեմ վոր... (քեվը լայն բաց ե անում):

ՎԱՍ. ԼԵՈՆ.— (Բեմի հետեվից լսվում ե զանգահարության յեվ ապա նրա ձայնը) Գրիգորի՛յ...

ՏԱՆՅԱ.— Ահա տեսա՞ք, դե գնացեք, Վասիլիյ Լեոնիդիչը վառնչում ե:

ԳՐԻԳՈՐ.— Կսպասի, նա դեռ նոր ե միայն աչքերը արորել: Լսիր, այ աղջիկ, ինչո՞ւ ինձ չես սիրում:

ՏԱՆՅԱ.— Այդ ինչ սիրահարութուն հնարեցիր, չես վոչ վոքի չեմ սիրում:

ԳՐԻԳՈՐ.— Սուտ ե, Սյոմկային ես սիրում, համա մարդ ես գտել սիրելու, բուժեաի թաթալոչ մուժիկին:

ՏԱՆՅԱ.— Դե ինչ կա վոր, տեսնում ես վոր դու նախանձում ես:

ՎԱՍ. ԼԵՈՆ.— Գրիգորի՛յ:

ԳՐԻԳՈՐ.— Դե լավ... քիչ ել սպասիր... նա ի՞նչ մարդ ե, վոր չես նրան նախանձեմ: Ախար դու նոր-նոր սկսել ես զարգանալ և ուժ հետ ես կապ հաստատում: Ուրիշ բան, չեթե ինձ սիրեցիր, Տանյա...

ՏԱՆՅԱ.— (Բարկացկոս յեվ խիստ) Ասում եմ ձեզ համար վոչինչ չիլինի:

ՎԱՍ. ԼԵՈՆ.— Գրիգորի՛ց:

ԳՐԻԳՈՐ.— Դուք արդեն ձեզ շատ խիստ եք պահում:

ՎԱՍ. ԼԵՈՆ.— (Բեմի հետեվից կհրուկ, միասեսակ յեվ ամբողջ ուժով գոռում ե) Գրիգորի՛ց, Գրիգորի՛ց, Գրիգորի՛ց:

ՏԱՆՅԱ և ԳՐԻԳՈՐԻՅ.— (Միծաղում են):

ԳՐԻԳՈՐ.— Գիտես ինձ ինչպիսիներն են սիրել: (Զանգահարություն):

ՏԱՆՅԱ.— Դեհ, ուրեմն գնացեք նրանց մոտ, իսկ ինձ թողիք:

ԳՐԻԳՈՐ.— Հիմար աղջիկ, կտեսնենք, ախար չես Սիմեոնը չեմ:

ՏԱՆՅԱ.— Սիմեոնը ամուսնանալ ե ուզում, վոչ թե հիմարութուններ անել:

ՏԵՄԻՆ 3

Գրիգորիյ, Տանյա յեվ արսելչիկ

ԱՐՏԵԼՇ.— (Բերում ե կարսնի մեծ արկղով զգեստներ) Բարի լույս ձեզ:

ԳՐԻԳՈՐ.— Բարև ձեզ, այդ ումից ե:

ԱՐՏԵԼՇ.— Բուրդեից, զգեստներ են, այ տոմս խանութին:

ՏԱՆՅԱ.— (Վերցնում ե տոմսը) Նստեցեք աչստեղ: Յես կաամ: (Գնում ե):

ՏԵՄԻՆ 4

Գրիգորիյ, արսելչիկ յեվ Վասիլիյ Լեոնիդիչ

ՎԱՍ. ԼԵՈՆ.— (Դուրս ե ցցվում սենյակի դռնից ռապիով յեվ սուֆլիներով) Գրիգորի՛ց:

ԳՐԻԳՈՐ.— Այս լոպեչին:

ՎԱՍ. ԼԵՈՆ.— Գրիգորի՛ց, միթե չեյլը լուժ:

ԳՐԻԳՈՐ.— Յես հիմա չեկա:

ՎԱՍ. ԼԵՈՆ.— Զուր բեր ասք՝ և թեյ:

ԳՐԻԳՈՐ.— Իսկույն Սիմեոնը կբերի:

ՎԱՍ. ԼԵՈՆ.— Ա՛յդ ինչ բան ե, Բուրդեից ե:

ԱՐՏԵԼՇ.— Հրամեք եք:

(Վասիլիյ Լեոնիդիչը յեվ Գրիգորին գնում են: Զանգահարություն):

ՏԵՄԻՆ 5

Արսելչիկ յեվ Տանյա

ՏԱՆՅԱ.— (Զանգի ձայնից ներս ե վազում յեվ բաց ե անում դուռը. արսելչիկին) Սպասեցեք:

ԱՐՏԵԼՇ.— Արդեն սպասում եմ:

ՏԵՄԻՆ 6

Նույն յեվ Սախասով

ՏԱՆՅԱ.— Ներեցեք, այս լոպեչին գնաց լակեյը, հրամեցեք, թույլ տվեք: (Հանում ե մուտեսակը):

ՍԱՍԱՏ.— (Ուղղվելով) Տանն ե Լեոնիդ Յետորովիչը. վեր և կացեք (Զանգահարություն):

ՏԱՆՅԱ.— Ի՞նչպիսի չե, վաղուց:

ՏԵՄԻՆ 7

Նույն յեվ բժիշկը

ԲԺԻՇԿԸ.— (Փնտրում ե լակեյին յեվ տեսնելով Սախասովին) Ահ... հարգանքներս...



**ՄԱԽԱՏ.**—(Սեվեռած նայելով) Բժիշկն է կարծեմ...

**ԲԺԻՇԿ.**—Իսկ լես կարծում ելի, թե դուք արտասահմանում եք: Լեոնիդ Ֆեոդորովիչի մոտ...

**ՄԱԽԱՏ.**—Այո, իսկ դուք ինչո՞ւ, հիվանդ կա միթե:

**ԲԺԻՇԿ.**—(Մազրանով) Իսկապես ասած, հիվանդ չե, ա գիտե՞ք, կրակ է այդ տիկիներնրի հետ... ամեն ոք մինչև ժամը չերեքը նստում են վիստ խաղալու, իսկ աչքը դեպի գինու բաժակն է: Ինքն ել գիրուկ, հաստամարմին և տարիներն ել պետք է ասել քիչ չեն:

**ՄԱԽԱՏ.**—Դուք ուրեմն Աննա Պավլովնայի մասին եք աշուճում ձեր դիագնոզը: Այդ նրան այնքան ել դուր չի գա, կարծում եմ:

**ԲԺԻՇԿ.**—(Ծիծաղելով) Ինչ արած, ճիշտ է: Բոլոր այդ կատակներն անում են և հետո առաջ է դալիս մարտդական գործարանների խանդարում, լյարդի ճնշում, իսկ նյարդերը. ել աստված մի արասցե, դե արի ու բժշկիք: Կրակ է այդպիսիների հետ գործ ունենալը (ծաղր է անում) իսկ դուք ինչ. կարծեմ սպիրիտ եք նույնպես:

**ՄԱԽԱՏ.**—Յես, վոչ, յես սպիրիտ չեմ նույնպես. դեհ, հարգանքս: (Ուզում է գնալ, բայց բժիշկը կանգնեցնում է):

**ԲԺԻՇԿ.**—Վոչ, յես ել լիովին չեմ հերքում այդ բանը, չերբ այնպիսի մի մարդ, ինչպես Կրոկոսովետովն է, նույնպես մասնակցություն ունի: Չի կարելի, մարդը պրոֆեսոր է, լեվրոպական հոչակ ունի, ուրեմն ինչ վոր մի բան կա: Ուզում ելի մի կերպ տեսած լինել, բայց ափսոս, ժամանակ չունեմ: Ուրիշ գործ ունեմ:

**ՄԱԽԱՏ.**—Այո, այո, հարգանքս: (Գնում է քեքել գլուխ տալով)

**ԲԺԻՇԿ.**—(Տանալի) Վեր կացանվ:

**ՏԱՆՅԱ.**—Ննջարանումն է, հրամեցեք:

(Սախասովը յեվ բժիշկը անցնում են գանազան կողմերից)

ՏԵՍԻՒ 8

Արսելչիկ, Տանյա, Ֆեոդոր Իվանիչ

**ՖԵՈՒԴ. ԻՎ.**—(Մտնում է լրագիրը ձեռքին: Արսելչիկին) Դուք ինչ:

**ԱՐՏԵԼՇ.**—Բուրդեից, զգեստներ եմ բերել, հետն ել մի տոմս, պատվիրեցին սպասել:

**ՖԵՈՒԴ. ԻՎ.**—Ա... Բուրդեից (Տանյային) այդ ո՞վ եք չեկավ

**ՏԱՆՅԱ.**—Սախասովը, Սերգեյ Իվանիչը և մեկ ել բժիշկը: Նրանք այստեղ կանգնած խոսում ելին, շարունակ սպիրիտուալյան մասին:

**ՖԵՈՒԴ. ԻՎ.**—(Ուզողով) Ուզում ես ասել սպիրիտիզմի մասին:

**ՏԱՆՅԱ.**—Այո, յես ել ասում եմ սպիրիտուալյան մասին: Իսկ դուք լսեցի՞ք Ֆեոդոր Իվանիչ, ինչպես անցյալ անգամ փորձը հաջող կատարվեց, (ծիծաղելով) համ տկոկոցներ եր լսվում, համ էլ իրեղեններն ելին թռչկոտում:

**ՖԵՈՒԴ. ԻՎ.**—Իսկ դու վերտեղից գիտես:

**ՏԱՆՅԱ.**—Ինձ Լիզավետա Լեոնիդովնան է պատմել:

ՏԵՍԻՒ 9

Նույն յեվ Յակոմ

**ՅԱԿՈՅ.**—(Վազում է մի բաժակ քեյ ձեռքին, արսելչիկին) Բարև ձեզ:

**ԱՐՏԵԼՇ.**—(Տխուր) բարև ձեզ:

**ՅԱԿՈՅ.**—(Բաղխում է Վասիլիյ Լեոնիդիչի դուռը):

ՏԵՍԻՒ 10

Նույն և Գրիգորիյ

**ԳՐԻԳՈՐ.**—Դե տար:

**ՅԱԿՈՅ.**—Իսկ յերեկվա բաժակները դեռ չբերիք. Վասիլիյ Լեոնիդիչի մոտից ել մատուցարանը. չե՞ վոր ինձնից կուզեն:

**ԳՐԻԳՈՐ.**—Մատուցարանի վրա նա իր սիգարներն է դրել:

**ՅԱԿՈՅ.**—Դուք ել վերցրեք մի ուրիշ տեղ դրեք, ախար ինձանից կպահանջեն:

**ԳՐԻԳՈՐ.**—Կբերեմ, կբերեմ:

**ՅԱԿՈՅ.**—Ասում եք կբերեմ ու չեք բերում. չերեկ յես բան պետք է ներս տանելի՞ մատուցարան չկար:

**ԳՐԻԳՈՐ.**—Ասում եմ կբերեմ. այ քեզ դատարկ բան:

**ՅԱԿՈՅ.**—Դուք լավ եք ասում, իսկ յես, տեսնում եք, ահա յերրորդ թեյն եմ տալիս, քիչ հետո ել արի նախաճաշ տուր, քաշ ես գալիս ամբողջ որը. տան մեջ ինձնից շատ ո՞վ գործ ունի: Հետո ել ասում են լավը չեմ:

**ԳՐԻԳՈՐ.**—Սրանից լավ ել ի՞նչ պիտի լինի. այ ինչ լավըն եմ:



ՏԱՆՅԱ.—Ձեզ համար ամենքը վատ են, միայն դուք եք լավը:

ԳՐԻԳՈՐ.—Քեզ չհարցրին: (Գնում է):

ՏԵՍԻՒ 11

Տանյա, Յակոբ, Ֆեոդոր Իվանիչ և արսելչիկ

ՅԱԿՈՅ—Եհ, չես չեմ նեղանում... Տատյանա Մարկովնա, տիրուհին վոչինչ չասեց յերեկվա պատահածի մասին:

ՏԱՆՅԱ.—Ի՞նչ բանի, լմժպի մասին:

ՅԱԿՈՅ—Եզ ինչպես չեղավ, վոր անտերը դուրս պրծավ ձեռքիցս, աստված գիտե: Նոր եյի սկսել սենյակը մաքրել, ուղում եյի լամպը վերցնել, ինչպես չեղավ, դուրս պրծավ... ու ջարդ ու փշուր չեղավ, իմ շար բախտիցն է: Նրան, Գրիգոր Միխայիլովիչին հեշտ է այդպես խոսելը, նա մի շոր գլուխ ունի, ապա չեթե ընտանիք ունենար: Ձե՞ վոր պետք է մտածել նրան պահելու, կերակրելու մասին: Յես աշխատանքից չեմ փախչում: Ե, ասում ես վոչինչ չի՞ ասել, դե, փառք ասածու, իսկ, Ֆեդոդոր Իվանիչ, ձեզ մոտ գրալ մեկն է, թե յերկուսը:

ՖԵՈՒ.—Մեկն է, մեկը: (Լրագիր է կարդում):

ՅԱԿՈՅ.—(Գնում է):

ՏԵՍԻՒ 12

Տանյա, Ֆեոդոր Իվանիչ և արսելչիկ

(Լսվում է զանգի ձայն. մտնում է Գրիգորի մատուցարանը ձեռքին և շվեյցար):

ՇՎԵՅՅ.—(Գրիգորիին) Հայտնեցեք պարոնին, վոր գյուղացիներ են յեկել:

ԳՐԻԳՈՐ.—(Յույց սալով Ֆեոդոր Իվանիչին) Այ, ում պետք է ասել, չես ժամանակ չունեմ: (Գնում է):

ՏԵՍԻՒ 13

Տանյա, Ֆեոդոր Իվանիչ, արսելչիկ, շվեյցար

ՏԱՆՅԱ.—Վորտեղացի՞ յեն գյուղացիք:

ՇՎԵՅՅ.—Կուրսկի նահանգից են կարծեմ:

ՏԱՆՅԱ.—(ձիչեր է արձակում) Նրանք են... այդ Սիմեոնի հայրն է. հող առնելու համար է յեկել, գնամ տեսնեմ:

ՏԵՍԻՒ 14

Ֆեոդոր Իվ. շվեյցար, արսելչիկ

ՇՎԵՅՅ.—Ուրեմն ի՞նչ եք ասում, ներս թողնեմ նրանց, թե չե. ասում են հողի մասին խոսելու են յեկել. աղեն գիտե: ՖԵՈՒ. ԻՎ.—Հա, հող գնելու համար. այդպես, այդպես, բայց նրա մոտ հյուր կա. այ ինչ, ասա թող սպասեն:

ՇՎԵՅՅ.—Վերտեղ սպասեն:

ՖԵՈՒ. ԻՎ.—Թող բակում սպասեն, չես իմաց կտամ:

ՇՎԵՅՅ.—(Դուրս է գնում):

ՏԵՍԻՒ 15

Ֆեոդոր Իվ. Տանյա (նրա հետ մտնում են յերեք գյուղացի) Գրիգորի, արսելչիկ

ՏԱՆՅԱ.—Այ կողմ, այստեղ, այ այստեղ:

ՖԵՈՒ. ԻՎ.—Յես չեյի թույլ տալ դրանց այստեղ:

ԳՐԻԳՈՐ.—Իհարկե, ինչպես կարելի յե:

ՏԱՆՅԱ.—Վոչինչ, Ֆեոդոր Իվանիչ, սրանք այստեղ, այս անկյունում կկանգնեն:

ՖԵՈՒ. ԻՎ.—Հատակը կկեղտոտեն:

ՏԱՆՅԱ.—Վտաքերը սրբել են, չես ել կմաքրեմ: (Գյուղացիներին) այ, հենց այստեղ կանգնեցեք: (Գյուղացիները մտնում են բաշկիմակներով ընծաները ձեռքերին, կուլիչ, ձու, յերեսաբլիներ, վորոնում են քե ինչ բանի խաչակնեմ: Խաչակնում են սանդուխներին, գուլս են սալիս Ֆեոդոր Իվանիչին յեվ վստահ կանգնում են):

ԳՐԻԳՈՐ.—(Ֆեոդոր Իվանիչին) Ֆեոդոր Իվանիչ, այ, ասում են Պիրոնի գեղեցիկ ֆաստնով կոշիկներ են բերել, սրանք նրանցից հո ավելի լավն են: (Յույց սալով Գ. գյուղացու քաղիքի վստամանները):

ՖԵՈՒ. ԻՎ.—Դու հենց մարդկանց ծաղրել գիտես:

ԳՐԻԳՈՐ.—(Գնում է):

ՏԵՍԻՒ 16

Տանյա, Ֆեոդոր Իվանիչ, յերեք գյուղացիներ

ՖԵՈՒ. ԻՎ.—(Վեր է կենում յեվ մտնում է գյուղացիներին) Ուրեմն դուք կուրսկից եք, հող առնելու համար:

Ա. ԳՅՈՒՂ.—Հրամեք ես, մենք յեկել ենք ինչպես կարգն է, հող գնելու գործով: Մի կերպ իմաց տալիք:

ՖԵՈՒ. ԻՎ.—Այո, այո, գիտեմ, գիտեմ. սպասեցեք այստեղ, չես իսկույն իմաց կտամ պարոնին: (Գնում է):



Տանյա, յերեք գյուղացիներ. Վասիլիյ Լեոնիդիչը (բեմի հետեվից) (գյուղացիները դիտում են իրենց չորս կողմը, չգիտեն ուր դնեն իրենց բնձաները):

Ա. ԳՅՈՒՂ.—Ախար, ինչպես անենք, ինչպես եր, չգիտեմ, ինչ են ասում, ինչի՞ վրա դնենք այս բաները, աղին կարգին հրամայներու համար: Մի սինի կամ մի ուրիշ բան:

ՏԱՆՅԱ.—Իսկուչն, իսկուչն ավելք այստեղ, առայժմս այ, այսպես: (Դնում է բազմոցի վրա):

Ա. ԳՅՈՒՂ.—Այդ ի՞նչ մարդ է, որինակ, ասենք, այն պատվելին, վոր մեզ հետ խոսում եր:

ՏԱՆՅԱ.—Նա կամերդինն է:

Ա. ԳՅՈՒՂ.—Իրուստ վոր կամերդին. ուրեմն մեծ ծառայության մեջ է (Տանյային) իսկ դուք ել, ինչպես կարգն է, մի ծառայություն ունի՞ք:

ՏԱՆՅԱ.—Յես աղախին եմ, ախար չես ել ձեր գյուղից եմ: Յես ձեզ ճանաչում եմ, ձեզ ել եմ ճանաչում, միայն այս քեռուն չեմ ճանաչում: (Յույց է ցալիս Գ. գյուղացուն):

Գ. ԳՅՈՒՂ.—Նրանց ճանաչեցիր, ինձ չես ճանաչում:

ՏԱՆՅԱ.—(Ա. գյուղացուն) Դուք Յեֆիմ Անտոնիչը չե՞ք:

Ա. ԳՅՈՒՂ.—Իրուստ է:

ՏԱՆՅԱ.—Դուք ել Միմեոնի ծնո՞ղն եք, Ձախար Տրիֆոնիչը:

Բ. ԳՅՈՒՂ.—Իսկը լայդպես է:

Գ. ԳՅՈՒՂ.—Յես ել, ասենք Միտրիյ Չիլիկինն եմ, ճանաչեցի՞ր:

ՏԱՆՅԱ.—Հիմա ձեզ ել կճանաչենք:

Բ. ԳՅՈՒՂ.—Դու ո՞ւմ աղջիկն ես:

ՏԱՆՅԱ.—Ձինվորի կին Ակոնելայի, վորք:

Ա. և Գ. ԳՅՈՒՂ.—(Ձարմանով) Ի՞նչ ես ասում:

Բ. ԳՅՈՒՂ.—Ձուր չես ասած, մի գրոշ ասուր խողովկին է լավ զու ասուր բազուկին, նա կդառնա թանգազին:

Ա. ԳՅՈՒՂ.—Իրուստ է, շատ նմանակ է. իսկ վոր մամ-դել:

Գ. ԳՅՈՒՂ.—Ինքն է վոր կա, տեր աստված:

ՎԱՍ. ԼԵՈՆ.—(Բեմի յետեվից զանգահարում է յեվ հետո բազմում) Գրիգորի:

Ա. ԳՅՈՒՂ.—Այդ մի է, որինակ, այդքան իբան անհանգը-սացնում է:

Գ. ԳՅՈՒՂ.—Տեր աստված, ասեցի վոր լավ կլիներ չեթե դուրսը սպասեյինք: (Լուռ քյուն):

Բ. ԳՅՈՒՂ.—Միմեոնը քեզ առնել է ուղում:

ՏԱՆՅԱ.—Միթե նա նամակ է գրել: (Գոզնոցով ծածկում է յտեսը)

Բ. ԳՅՈՒՂ.—Հալբաթ վոր գրել է... համա բան չե վոր մը-տածել է. տեսնում եմ յերես ե առել այդ սղան:

ՏԱՆՅԱ.—Ձե, նա իսկի ել չերես չե առել. ուղարկեմ նը-րան այստեղ:

Բ. ԳՅՈՒՂ.—Ի՞նչ ուղարկես, ժամանակը չե, դեռ ժամա-նակ կունենանք տեսնելու:

(Լավում է Վասիլիյ Լեոնիդիչի սասիկ բարձր ձայնը) Գը-րիգորի, գրողը քեզ տանի, խլացել ես, ինչ է:

Նույն և դուրից Վասիլիյ Լեոնիդիչը

ՎԱՍ. ԼԵՈՆ.—(Շապիկով, դնում է պենսեն) Մեռե՞լ եք, ի՞նչ է:

ՏԱՆՅԱ.—Այստեղ չե, Վասիլիյ Լեոնիդիչ: Այս բողեյին կուղարկեմ: (Գնում է դեպի դուռը):

ՎԱՍ. ԼԵՈՆ.—Դե չես լսում եմ, վոր խոսում են. մյս ինչ խրավիլակներ են այստեղ, հմ, ինչ է:

ՏԱՆՅԱ.—Գյուղացիներ են, կուրսկից, Վասիլիյ Լեոնի-դիչ:

ՎԱՍ. ԼԵՈՆ.—(Արեւելիկին) Սա ո՞վ է. ախ հա, Բուրգեյից է: (Գյուղացի գուլս են ցալիս. Վասիլիյ Լեոնիդիչը ուսադուրքյուն չի դարձնում նրանց վրա: Գրիգորիյն դուրի մոտ հանդիպում է Տանյային: Տանյան մնում է):

Նույն և Գրիգորիյ

ՎԱՍ. ԼԵՈՆ.—Յես քեզ ասեցի, այն կոշիկները. որանք չեմ կարող հագնել:

ԳՐԻԳՈՐ.—Նրանք ել այնտեղ են, պարոն:

ՎԱՍ. ԼԵՈՆ.—Վորտեղ են, յես չգիտեմ:

ԳՐԻԳՈՐ.—Հենց այնտեղ:

ՎԱՍ. ԼԵՈՆ.—Սնւս ես խոսում:

ԳՐԻԳՈՐ.—Այ կտեսնեք:

ՎԱՍ. ԼԵՈՆ. և ԳՐԻԳՈՐԻՅ—(Գնում են):



Տանյա, յերեք գյուղացիները, արեւելչիկ

Գ. ԳՅՈՒՂ. — Կարելի չե թե, ասենք, հիմա ժամանակը չե, դնայինք դուրս, սպասելիք մի քիչ:

ՏԱՆՅԱ. — Չե, վոչինչ, սպասեցեք, այ, յես իսկույն ավստեներ կբերեմ: (Գնում է):

Նույնք, Սախասով, Լեոնիդ Ֆեոդորովիչ յեվ նա յեսովից Ֆեոդորովանիչ: (գյուղացիները վերցնում են ընծաները յեվ լուրջ դիտք ընդունում):

ԼԵՈՆ. Ֆ. — (Գյուղացիներին) Իսկույն, իսկույն... սպասեցեք: (Արեւելչիկին նայելով) սո ով է:

ԱՐՏԵԼՇ. — Բուրդեից:

ԼԵՈՆ. Ֆ. — Ա, Բուրդեից:

ՍԱՆԱՍ. — (Ժպտալով) Յես չեմ ժխտում, բայց համաձայնեցեք, վոր ձեր պատմածներից վոչինչ չտեսած, ինձ պես այդ բանին անտեղյակ մարդը, դժվար թե հավատա:

ԼԵՈՆ. Ֆ. — Դուք ասում եք թե չեք կարող հավատալ և մենք ել չենք պահանջում, վոր հավատաք: Մենք պահանջում ենք ուսումնասիրություն: Յես հո չեմ կարող հավատալ այս մտտանուն, իսկ մատանին ստացել եմ այնտեղից:

ՍԱՆԱՍ. — Ինչպես թե այնտեղից, վոր տեղից:

ԼԵՈՆ. Ֆ. — Մյուս աշխարհից, այո:

ՍԱՆԱՍ. — (Ժպտալով) Շատ հետաքրքրական է, շատ հետաքրքրական է:

ԼԵՈՆ. Ֆ. — Բայց ընդունենք, ինչպես դուք եք կարծում, վոր յես շատ վտակորվող մարդ եմ, յերևակացող այնպիսի բաներ, ինչ վոր չկան: Բայց ահա Ալեքսի Կլադիմիրովիչ Կրուդոպետովը, կարծեմ, ինչքան վոր չլինի մարդը պրոֆեսոր է, այ նա ել է ընդունում այդ բանը: Բայց նա չե միայն, իսկ Կրուկսը, Վալասը...

ՍԱՆԱՍ. — Դե յես հո չեմ հերքում այդ բանը. միայն յես ասում եմ թե շատ հետաքրքրական է: Հետաքրքիր է իմանալ ինչպես է բացատրում Կրուդոպետովը:

ԼԵՈՆ. Ֆ. — Նա իր թեորիան ունի: Դե, այն ժամանակ չեք եք այս յերեկոյան, նա անպատճառ մեզ մոտ կլինի: Դեռ ասա՞ Պրոսմանը կլինի, ճանաչեմ եք, նա մտքերի հայտնի դուշակող է:

ՍԱՆԱՍ. — Հա, յես լսել եմ, բայց վոչ մի անգամ չի պատահել նրան հանդիպել:

ԼԵՈՆ. Ֆ. — Դե, ուրեմն յեկեք, նախ Պրոսմանը կլինի հետո ել Կապչիչը, և մեր մեղումիական սեանսը... (Ֆեոդորովիչին) Կապչիչի ուղարկած մարդը չվերադարձավ:

ՖԵՈՒ. ԻՎ. — Դեռ վոչ:

ՍԱՆԱՍ. — Ուրեմն յես ինչպես իմանամ:

ԼԵՈՆ. Ֆ. — Դե դուք յեկեք, միևնույն է, յեկեք: Յեթե Կապչիչն ել չգն, մենք փորձ անելու համար ուրիշ մարդ գրանենք, Մարիա Իդնատիվնան ել փորձում է, վոչ այնպես ուժեղ ինչպես Կապչիչն է, բայց և այնպես...

Նույնք և Տանյա (մտնում է ընծաների համար բերած ավստեները մեռֆին. ակամջ է դնում խոտակցուրյան)

ՍԱՆԱՍ. — (Ժպտալով) Այո, այո, բայց տեսեք հանգամանքը, ինչո՞ւ մեղիումները միշտ, այսպես ասած, կրթված շրջանից են լինում: Թե Կապչիչը թե Մարիա Իվանովնան: Յեթե վոր դա մի սուսնձին ույժ է, այն ժամանակ այդ ույժը պետք է յերևա ամեն տեղ և ժողովրդի մեջ և մուժիկի մեջ:

ԼԵՈՆ. Ֆ. — Այդպես ել լինում է և այնքան հաճախ է լինում, վոր այ, մեր տան մեջ մի մուժիկ կա, նա ել մեղիում դուրս յեկավ: Այս որբես մենք նրան կանչեցինք սեանսի ժամանակ: Պետք էր բազմոցը տեղափոխելիք և նրան մոռացանք սեանսում: Նա ել յերեկ քնել էր. և յերեվակայեցեք մեր սենսսը համարյա վերջացել էր, Կապչիչը արթնացավ և հանկարծ մենք նկատում ենք մեր սենյակի մյուս անկյունում այդ տղայի մոտ սկսվում են մեղիում յերևույթներ, սեղանը տեղից շարժվեց և սկսեց գնալ:

ՏԱՆՅԱ. — (Կոպով) Այդ այն էր, յերբ վոր յես սեղանի տակից դուրս յեկա:

ԼԵՈՆ. Ֆ. — Յերևում է նա ել մեղիում է, մանավանդ նա դեմքով շատ նման է Յուսիին... դուք հիշե՞մ եք Յուսիին, շիկաներ, միամիտ:

ՍԱՆԱՍ. — (Ուսերը քալաճարելով) Ահա թե ինչ, դա շատ հետաքրքրական է, դե, ուրեմն, հենց նրան ել փորձեցեք:


ԼԵՈՆ. Ֆ. — Յես կփորձեմ: Վերջապես միայն նա չե: Մեղիումներն անթիվ են: Միայն մենք չենք ճանաչում նրանց: Այ, այս որբես մի հիվանդ պառավ տեղից շարժեց քարե պատը:

ՍԱՆԱՍ. — Տեղից շարժեց քարե պատը:

ԼԵՈՆ. Ֆ. — Այո, այո, պառկած էր անկողնում և բոլորովին չգիտեր, վոր ինքը մեղիում է: Չե՞քքը հենց պատին և պատը հեռահեռ գնաց:

ՍԱՆԱՍ. — Յեվ չքանդվեց:

10101  
40496





ԼԵՈՆ. Ֆ.—Յեկ չքանդվեց:

ՍՍԽԱՏ.—Չարմանալի յե: Դե, ուրեմն յես յերեկոյան կը-  
գամ:

ԼԵՈՆ. Ֆ.—Յեկեք, յեկեք, սեանսը համենայն դեպս կլինի:  
ՍՍԽԱՏ.—(Հազմվում է):

ԼԵՈՆ. Ֆ.—(Ճանապարհ է դնում):

ՏԵՍԻԼ 23

Նույնք, առանց Սախասովի

ԱՐՏԵԼԸ.—(Տանյային) Իմաց տվեք տանտիրուհուն. ի՞նչ,  
յես այստեղ գիշերելու յեմ, ի՞նչ է:

ՏԱՆՅԱ.—Սպասեցեք. նա հիմա որիորդի հետ տեղ է գնա-  
լու, շուտով դուրս կգան: (Գնում է):

ՏԵՍԻԼ 24

Նույնք, առանց Տանյայի

ԼԵՈՆ. Ֆ.—(Մտնում է գյուղացիներին. նրանք գլուխ են քա-  
լիս յեկ մատուցում բնծաները) Դա հարկավոր չէ:

Ա. ԳՅՈՒՂ.—(Ժպտալով) Սա հո մեր առաջին պարտականու-  
թյունն է, ինչպես վոր աշխարհի սովորությունն է:

Բ. ԳՅՈՒՂ.—Դա արդեն սովորությունն է:

Գ. ԳՅՈՒՂ.—Գլխիցդ մի բաներ դուրս տա. այդ նրա  
համար է, վոր մենք շատ շնորհակալ ենք... ասենք, ինչպես  
մեր ծնողները, ասենք ծառայել են ձեր ծնողներին, այնպես ել  
մենք սրտանց ցանկանում ենք... վոչ թե այսպես կամ այնպես:  
(Գլուխ է քալիս):

ԼԵՈՆ. Ֆ.—Ի՞նչ էք անում, իսկապես ի՞նչ էք ուզում:  
Ա. ԳՅՈՒՂ.—Ձեր վողորմածությունը կցանկանայինք:

ՏԵՍԻԼ 25

Նույնք, Պետրիչեկ

ՊԵՏՐ.—(Արագ մտնելով հանում է շինելը) Վասիլիյ Լեոնի-  
չիչը վեր կացել է: (Տեսնելով Լեոնիչի Ֆետրովիչին բարեվում է  
միայն գլխի Եարժումով):

ԼԵՈՆ. Ֆ.—Դուք վորդուս մտա...  
ՊԵՏՐ.—Յեա, այո, մի բոպեյով Վովոյի մոտ:

ԼԵՈՆ. Ֆ.—Անցեք, անցեք:  
ՊԵՏՐ.—(Հանում է շինելը յեկ արագ Եարժումով անցնում է  
Վասիլիյ Լեոնիչի սենյակը):

ՏԵՍԻԼ 26

Նույնք, առանց Պետրիչեկի

ԼԵՈՆ. Ֆ.—(Գյուղացիներին) Այ՛տա. դե դուք ի՞նչ էք ասում:  
Բ. ԳՅՈՒՂ.—Ընդունիր մեր ընծաները:

Ա. ԳՅՈՒՂ.—(Ժպտալով) Այսինքն գյուղական բաներ են:  
Գ. ԳՅՈՒՂ.—Ի՞նչ էս դուրս տալիս, ի՞նչ է վոր, մենք ցան-  
կանում ենք ինչպես հարազատ հորը... բաներ մի խոսիր:

ԼԵՈՆ. Ֆ.—Նու, ինչ արած, Ֆետրով, ընդունիր:  
ՖԵՏՐ. ԻՎ.—Դե, տվեք այս կողմ: (Վերցնում է բնծաները):

ԼԵՈՆ. Ֆ.—Ասացեք ուրեմն, ի՞նչ էք ուզում դուք:  
Ա. ԳՅՈՒՂ.—Մենք ձեր վողորմածության մոտ ենք յե-  
կել:

ԼԵՈՆ. Ֆ.—Տեսնում եմ, վոր ինձ մոտ էք յեկել: Բայց  
ի՞նչ էք ուզում:

Ա. ԳՅՈՒՂ.—Հողի վաճառման մասին մի բան անել:  
ԼԵՈՆ. Ֆ.—Ի՞նչ է, դուք հող էք ուզում առնել, ինչ է:

Ա. ԳՅՈՒՂ.—Դրուտտ է, այդ այդպես է, նշանակում է հողի  
անփականության առնելու մասին: Մեր հասարակությունը հենց  
ասենք, մեկ իրավունք է տվել, ինչպես կարգն է, պետական  
քանկի միջոցով հողն առնել, խնդրին խփելով նաև մարկաներ,  
վորքան որենքով պահանջվում է:

ԼԵՈՆ. Ֆ.—Այսինքն դուք ցանկանում էք պետական բան-  
կի միջոցով հող գնել, այդ էք ասում, չե՞:

Ա. ԳՅՈՒՂ.—Հենց այդպես է. ինչպես վոր հերու դուք մեր  
միտքը հասկացաք, կլինի ուրեմն ամբողջ [գումարը 32,864  
ռուբլի հողի սեփականությունը գնելու համար:

ԼԵՈՆ. Ֆ.—Այդ այդպես է, իսկ վճարի մասին ի՞նչ կասեք:  
Ա. ԳՅՈՒՂ.—Իսկ վճարը մեր հասարակությունն առաջար-  
կում է, վոր ինչպես հերու ասված է, մաս-մասի բաժանել  
կանխիկ ստանալով, ինչպես որենքն ել պահանջում է, 4,000  
ռուբլ. լիովին:

Բ. ԳՅՈՒՂ.—Չորս հազար ռուբլի փողը հիմա ստացիր, իսկ  
մնացածի համար, պետք է վոր սպասես:

Գ. ԳՅՈՒՂ.—(Ի՛նչ քաջ է անում փողերի փաթեթը) Դրա մա-  
սին անհող յեղեր. մեկ գրավ կգնենք և ուրիշ կերպ չենք անի,  
ասենք, այնպես... ինչպես պետքն է:

ԼԵՈՆ. Ֆ.—Այդ այդպես է, իսկ վճարի մասին ի՞նչ կասեք:  
Ա. ԳՅՈՒՂ.—Իսկ վճարը մեր հասարակությունն առաջար-  
կում է, վոր ինչպես հերու ասված է, մաս-մասի բաժանել  
կանխիկ ստանալով, ինչպես որենքն ել պահանջում է, 4,000  
ռուբլ. լիովին:

Բ. ԳՅՈՒՂ.—Չորս հազար ռուբլի փողը հիմա ստացիր, իսկ  
մնացածի համար, պետք է վոր սպասես:

Գ. ԳՅՈՒՂ.—(Ի՛նչ քաջ է անում փողերի փաթեթը) Դրա մա-  
սին անհող յեղեր. մեկ գրավ կգնենք և ուրիշ կերպ չենք անի,  
ասենք, այնպես... ինչպես պետքն է:

ԼԵՈՆ. Ֆ.—Այդ այդպես է, իսկ վճարի մասին ի՞նչ կասեք:  
Ա. ԳՅՈՒՂ.—Իսկ վճարը մեր հասարակությունն առաջար-  
կում է, վոր ինչպես հերու ասված է, մաս-մասի բաժանել  
կանխիկ ստանալով, ինչպես որենքն ել պահանջում է, 4,000  
ռուբլ. լիովին:

Բ. ԳՅՈՒՂ.—Չորս հազար ռուբլի փողը հիմա ստացիր, իսկ  
մնացածի համար, պետք է վոր սպասես:

Գ. ԳՅՈՒՂ.—(Ի՛նչ քաջ է անում փողերի փաթեթը) Դրա մա-  
սին անհող յեղեր. մեկ գրավ կգնենք և ուրիշ կերպ չենք անի,  
ասենք, այնպես... ինչպես պետքն է:



ԼԵՈՆ. Ֆ.—Յես չե՞ վոր գրել ելի ձեղ, վոր կհամաձայնեմ  
միայն այն դեպքում, չերբ կհավաքեք ամբողջ գումարը:

Ա. ԳՅՈՒՂ.—Այդ դրուստ ե. ավելի լավ կլիներ, բայց ճար  
չունենք, այսինքն...

ԼԵՈՆ. Ֆ.—Հապա ինչպե՞ս անենք:

Ա. ԳՅՈՒՂ.—Մեր հասարակութունը, ինչպես կարգն է,  
այն հույսով եր, վոր դուք ինչպես հերու առաջարկել ելիք,  
փողերը մաս-մաս վճարի:

ԼԵՈՆ. Ֆ.—Դա անցյալ տարի չեր. այն ժամանակ յես հա-  
մաձայնում ելի, իսկ հիմա չեմ կարող:

Բ. ԳՅՈՒՂ.—Ինչպե՞ս աչդպես, հույս տվեցիր, մենք ել թուղ-  
թըն ուղարկեցինք, փողն հավաքեցինք:

Գ. ԳՅՈՒՂ.—Գթասիրտ յեղիր, հայր. մեր հողը քիչ է, վոչ  
թե տավար, հովն ի՞նչ է, նրա համար ել պահելու տեղ չունենք:  
(Գլուխ ե սալիս) մեղք մի անիր, հայր:

ԼԵՈՆ. Ֆ.—Դա ասենք, ճիշտ է, վոր յես անցյալ տարի հա-  
մաձայն ելի փողը մի քանի նվազ ստանալ, իսկ այստեղ ինչ  
վոր ուրիշ հանգամանք պատահեց. այնպես վոր այժմ անհար-  
մար է:

Բ. ԳՅՈՒՂ.—Առանց այդ հողի մենք մեր կյանքից ձեռք  
պիտի քաշենք:

Ա. ԳՅՈՒՂ.—Դրուստ է, առանց հողի մեր ապրուստը ապ-  
րուստ չե, մենք կքանդվենք բոլորովին:

Գ. ԳՅՈՒՂ.—(Գլուխ ե սալիս) Հայր, հողը սակավ է, վոչ թե  
տավար, այլ ասենք մի հավ ել բաց թողնելու տեղ չունենք, վո-  
ղորմած յեղիր, ստացիր փողերը, հայր...

ԼԵՈՆ. Ֆ.—(Գեռյեվս ցայում ե բուրբ) Յես հասկանում  
եմ, յես ել ելի ուղում ձեզ մի բարիք արած լինել: Դուք սպա-  
սեցեք: Յես կես ժամից պատասխան կտամ... Ֆեռոյր, ասա, վոր  
վոչ վոքի չընդունեն:

ՖԵՐՈՅ. ԻՎ.—Շատ լավ:

ԼԵՈՆ. Ֆ.—(Գնում ե):

ՏԵՍԻԼ 27

Նույնք, առանց Լեոնից Ֆեռոյրովիչի (գլուղացի հուսահատված են)

Բ. ԳՅՈՒՂ.—Տեսնում ես բանը, բոլորը, ասում ե, տվեք.  
վորտեղից ասնք վոր չկա:

Ա. ԳՅՈՒՂ.—Թե վոր հերու մեզ հույս տված չլիներ, ախր

մենք այնպես հույս ունեցինք. դրուստ վոր, ինչպես հերվանից  
խոսած եր...

Գ. ԳՅՈՒՂ.—Տեր աստված, յես ել փողերի կապոցն ելի  
քանդում: (Նորից փաթարում ե կապոցը) հիմա ի՞նչ պիտի ա-  
նենք:

ՖԵՐՈՅ. ԻՎ.—Մի ասեք տեսնեմ, ի՞նչ բանի յեք:

Ա. ԳՅՈՒՂ.—Ինչ բանի պիտի լինենք, պատվելի. վոր նա  
հերու մեզ առաջարկեց մաս-մաս վճարել: Մեր հասարակու-  
թյունը համաձայնության յեկամ կ մեզ իրավունք տվեց, վոր  
գանք, գործը վերջացնենք: Հիմա նա առաջարկում է, ինչպես  
կարգն է, ամբողջ գումարը լիովին վճարել: Չե, յերևում է բանը  
դուրս չի գալու:

ՖԵՐՈՅ. ԻՎ.—Փողը շատ է:

Ա. ԳՅՈՒՂ.—Ամբողջ գումարը, վոր պետք է ասնք՝ չորս  
հազար է, ուրեմն...

ՖԵՐՈՅ. ԻՎ.—Ի՞նչ կա վոր, մի լավ քամքմեցեք՝ կհա-  
վաքվի:

Ա. ԳՅՈՒՂ.—Առանց այդ ել ինչքան կարելի յեր հա-  
վաքել ենք, հնար չկա, պարոն, ժողովրդին սպանելու հո չենք:

Բ. ԳՅՈՒՂ.—Յերբ վոր չկա, ատամներով հո չես կարող  
դուրս քաշել:

Գ. ԳՅՈՒՂ.—Մենք շատ կուզենայինք տալ, ասենք դա ել  
ավելով ենք հավաքել, բերել:

ՏԵՍԻԼ 28

Նույնք, Վասիլիյ Լեոնիպիչ և Պետրիչեվ

(Ֆեռելում են դրան մեջ, յերկուսն ել ծխախոսք ձեռքերին)  
ՎԱՍ. ԼԵ.—Դե յես ասացի, վոր պետք է աշխատեմ, այո,  
կաշխատեմ, ինչքան հնարավոր ե:

ՊԵՏՐ.—Հասկացիր, վոր յեթե դու չճարես, այդ նշանա-  
վում է, թե ստանան դիտե ինչ խաչատառակութուն կլինի:

ՎԱՍ. ԼԵ.—Յես ասացի, թե կաշխատեմ, ուրեմն կաշխատեմ,  
հա՛, ի՞նչ է վոր:

ՊԵՏՐ.—Վոչինչ. յես միայն ասում եմ թե ինչպես ել լի-  
նի ձեռք բեր անպատճառ: Յես կսպասեմ: (Գնում ե փակելով  
գուրը):



Նույնի, առանց Պետրոսի

ՎԱՍ. ԼԵ.— (Ձեռք բախտահարելով) Սատանան գիտե, թե սա ինչ գրուած լինի ե: (Գլուղացի գլուխ եմ տալիս):

ՎԱՍ. ԼԵ. (Նայում ե արեւելից յիմ Ֆեոդոր Իվանիչին) Այս ի՞նչ ե, դուք այդ բուրդերի տղային չեք արձակում: Նա արդեն մեզ մոտ ապրելու յե յեկել ինչպես յերևում ե, նայեցեք, նա արդեն քնել ե: Հը, ի՞նչ ե վոր:

ՖԵՈՒԴ. ԻՎ.— Հանձնեցին սոմսը, պատվիրել են սպասել, մինչև Աննա Պավլովնան դուրս կգա:

ՎԱՍ. ԼԵ.— (Նայում ե գլուղացիներին յիմ աչք գցում փողերին) Դա ի՞նչ բան ե, փող ե, այդ ո՞ւմ... մե՞զ. (Ֆեոդոր Իվանիչին) Ովքեր են սրանք:

ՖԵՈՒԴ. ԻՎ.— Գլուղացիներ են. կուրսկից, հող են գնում:

ՎԱՍ. ԼԵ.— Ե, ի՞նչ, գնեցի՞ն:

ՖԵՈՒԴ. ԻՎ.— Վոչ, դեռ համաձայնութեան չեն յեկել, սրանք մի քիչ ժլատութուն են անում:

ՎԱՍ. ԼԵ.— Հո, այդ պետք ե նրանց համոզել: (Գլուղացիներին) դուք ի՞նչ հող եք գնում, հո:

Ա. ԳՅՈՒԴ.— Դրուստ ե, մենք առաջարկում ենք, վոր ձեռք բերենք հողի սեփականութեան իրավունքը:

ՎԱՍ. ԼԵ.— Դուք ել ուրեմն ժլատութուն մի անեք, յես ձեզ ասում եմ, գլուղացուն հողը շատ հարկավոր ե: Հո, ինչ ե, շատ ե հարկավոր:

Ա. ԳՅՈՒԴ.— Դրուստ ե, հողը գլուղացու համար առաջին բանն ե, հենց այդպես ե:

ՎԱՍ. ԼԵ.— Դե, ուրեմն դուք ել ժլատութուն մի անեք, գիտեք հողն ինչ ե, նրա վրա, յես ձեզ ասեմ, չե վոր ցորենը կարելի յե ցանել մարգերով, յերեք հարյուր փութ կարելի յես ստանալ, փութը մի ուրբով, յերեք հարյուր ըստըլի, հո, ինչ ե վոր, կամ թե դողձ, յես ձեզ ասեմ, մի դեսպատինից կարելի յես հազար ըստըլի ստանալ:

Ա. ԳՅՈՒԴ.— Դրուստ ե, այդ այդպես ե. ամեն բուսեղեն կարելի յե ցանել ե ոգուտ ստանալ, ով հասկացողութուն ունի:

ՎԱՍ. ԼԵ.— Այո, անպատճառ դողձ—ախար յես սովորել եմ այդ մասը: Դա գրքերումն ել տպւած ե. յես կարող եմ ցույց տալ ձեզ: Հո, ի՞նչ ե վոր:

Ա. ԳՅՈՒԴ.— Դրուստ ե, դրա վերաբերյալ, յերևում ե ձեզ

գրքերից ավելի հայտնի յե: Ուսումնականութուն նշանակում ե: ՎԱՍ. ԼԵ.— Դե, առեք հողը, ժլատութուն մի անեք, փողը տվեք, (Ֆեոդոր Իվանիչին) ո՞ւր ե պապան:

ՖԵՈՒԴ. ԻՎ.— Տանն ե. նա ինչպեք այժմ իրեն անհանգիստ չանել:

ՎԱՍ. ԼԵ.— Ի՞նչ արած, հավանական ե հողիններին ե հարց ու փորձ անում—հողը ծախել թե չե:

ՖԵՈՒԴ. ԻՎ.— Յես այդ չգիտեմ, գիտեմ վոր այստեղից գընաց շատ տարտամ գրութեան մեջ:

ՎԱՍ. ԼԵ.— Ի՞նչ ես կարծում, Ֆեոդոր Իվանիչ, նա փող ունի՞, հո:

ՖԵՈՒԴ. ԻՎ.— Չգիտեմ, հազիվ թե, ի՞նչ պետք ե անեք. չե վոր անցյալ շաբթին ստացաք բաժնական կտրիկ գումար:

ՎԱՍ. ԼԵ.— Նրանով յես արդեն շնոր գնեցի, իսկ հիմա դու գիտես մեր նոր ընկերութունը, Պետրիչչեվն ել ե ընտրւած, իսկ յես նրանից փող եմ վերցրել, իսկ այժմ հարկավոր ե ընկերութեան փողը վճարել իմ և նրա տեղ:

ՖԵՈՒԴ. ԻՎ.— Այդ ի՞նչ նոր ընկերութուն ե, վերսիպեղիստները:

ՎԱՍ. ԼԵ.— Վոչ, յես այս բոլորին քեզ կասեմ. դա նոր ընկերութունն ե. յես քեզ ասեմ, շատ լուրջ ընկերութունն ե, և դու գիտես ով ե նախագահը, հո, ինչ ես ասում:

ՖԵՈՒԴ. ԻՎ.— Իսկ այդ ի՞նչ նոր ընկերութունն ե:

ՎԱՍ. ԼԵ.— Ռուսական հին տեսակի թավ գամբու շների բաղմացումը խրախուսող ընկերութունն: Հո, ինչ ե, և յես քեզ կասեմ, այսոր առաջին նիստն ե և հանդիսավոր նախաճաշը. բաց արի տես, վոր փող չկա. գնամ նրա մոտ փորձեմ: (Մըսնում ե հոր սենյակը):

Գլուղացիներ, Ֆեոդոր Իվանիչ և արեւելիկ

Ա. ԳՅՈՒԴ.— (Ֆեոդոր Իվանիչին) Այդ ո՞վ ե վոր կա, պատվելի:

ՖԵՈՒԴ. ԻՎ.— (Ժպտալով) Յերիտասարդ պարոնն ե:

Գ. ԳՅՈՒԴ.— Ժառանգն ե, ասել ե թե. տեր աստված, (պահում ե փողերը) թողցնել պետք ե:

Ա. ԳՅՈՒԴ.— Իսկ մեզ ասեցին, թե գինվորական ե, հեծելազորքի ծառայութեան մեջ ե, ինչպես կարգն ե:



ՅԵՈՒԻ. ԻՎ.—Վոչ, նա վորպես մինուճար վորդի ազատվել է զինվորադրությունից:

Գ. ԳՅՈՒԻՂ.—Ծնողներին պահելու համար ե մնացել, դա արինավոր բան է:

Բ. ԳՅՈՒԻՂ.—(Գլուխը Եարժում է) Դձ պեսք ե կերակրի:

Գ. ԳՅՈՒԻՂ.—Ո՛յ, տեր աստված:

ՏԵՍԻՒ 31

Ֆեոդոր Իվանիչ, յերեք գյուղացիներ, Վասիլիյ Լեոնիդիչ և Գրանց հետեվից Լեոնիդ Ֆեոդորովիչը

ՎԱՍ. ԼԵ.—Ահա միշտ ել այդպես, իսկապես զարմանալի է ե ինձ ասում են, թե ինչո՞ւ վոչ մի գործի չեմ լինում: Իսկ հիմա յերբ յես դտել եմ մի գործունեություն և զբաղված եմ, հիմնվել ե վսեմ նպատակների ծառայող մի լուրջ ընկերություն, խնայում են վորևե վորորմելի 300 ըուրլի:

ԼԵՈՆ. Ֆ.—Ասեցի վոր չեմ կարող, չունեմ:

ՎԱՍ. ԼԵ.—Ձե՞ վոր հող վաճառեցիք:

ԼԵՈՆ. Ֆ.—Նախ վոր հողը չեմ վաճառել և գլխավորը՝ թող ինձ հանդիստ: Բեզ ասեցի, վոր յես ժամանակ չունեմ: (Խփում է դուռը):

ՏԵՍԻՒ 32

Նույնի, առանց Լեոնիդ Ֆեոդորովիչի

ՅԵՈՒԻ. ԻՎ.—Յես ձեզ ասեցի, վոր այժմ ժամանակը չե:

ՎԱՍ. ԼԵ.—Ահա ձեզ դրություն. հա, կգնամ մամայի մոտ, միակ փրկությունը՝ թե չե սա խենթի նման զբաղված ե իր սպիրիտիզմով և ամենքին մոռացել է: (Գնում է վերել):

ՅԵՈՒԻ. ԻՎ.—(Նսում է, ուզում է լրագիր կարգալ):

ՏԵՍԻՒ 33

Նույնի, վերելից իջնում են Բեդսի յեվ Մարիա Կոնստանտինովնա (Առանց հետեվից Գրիգորիյ)

ԲԵԴՍԻ.—Կարեալը պատրաստ է:

ԳՐԻԳՈՐ.—Արդեն գալիս ե:

ԲԵԴՍԻ.—(Մարիա Կոնստանտինովնային) Գնանք, գնանք. յես տեսա, վոր այդ նա չեր:

ՄԱՐ. Կ.—Ո՞վ է նա:

ԲԵԴՍԻ.—Շատ լավ գիտեք, վոր Պետրիչչեվը:

ՄԱՐ. Կ.—Ո՞ւր է նա:

ԲԵԴՍԻ.—Վովոյի մոտ է, կտեսնեք:

ՄԱՐ. Կ.—Հանկարծ նա չլինի:

(Գյուղացիները յեվ արեելիկը գլուխ են ցալիս)

ԲԵԴՍԻ.—(Արեելիկին) Դուք Բուրդեի խանութից. զգեստ էք բերել:

ԱՐՏԵԼՇ.—Այո, հրամայեցեք արձակել ինձ:

ԲԵԴՍԻ.—Յես չգիտեմ, այդ մայրիկն ե...:

ԱՐՏԵԼՇ.—Ո՛վ է, յես չգիտեմ, մեզ հրամայված ե սալրանքը բերել և փողերն ստանալ:

ԲԵԴՍԻ.—Դե, ուրեմն սպասեցեք:

ՄԱՐ. Կ.—Այդ դեռ այն զգեստն է, վոր զխձականանդեսի համար ե պատվիրած:

ԲԵԴՍԻ.—Այո, հիանալի զգեստ է, իսկ մայրիկը չէ վերցնում և փողը չի ուզում վճարել:

ՄԱՐ. Կ.—Ինչո՞ւ:

ԲԵԴՍԻ.—Այդ իրեն հարցրեք, Վովոյին շների համար տալիս է 500 ըուրլի՝ թանգ չե, իսկ զգեստը 100 ըուրլի՝ թանգ չե:

Իսկ յես չեմ կարող հասարակության մեջ խրատվիլակի պես գուրս գալ: (Գյուղացիներին նայելով) Մըմնք ովքեր են:

ԳՐԻԳՈՐ.—Գյուղացիներ են, ինչ վոր հող են գնում:

ԲԵԴՍԻ.—Իսկ յես կարծում ելի վորսորդներ են, դուք վորսորդներ չեք:

Ա. ԳՅՈՒԻՂ.—Ձե, ախրուհի, չե, մենք հողի վաճառման գործի պատճառով, Լեոնիդ Ֆեոդորովիչի մոտ:

ԲԵԴՍԻ.—Ինչպե՞ս թե, Վովոյի մոտ պեսք ե վորսորդներ գային: Դուք իսկապես վորսորդներ չեք: (Գյուղացիք լուռ են) Ինչ հիմարներն են, (մոտենում է դուան) Վովո, (հեղում է):

ՄԱՐ. Կ.—Նրան չե, վոր մենք վերևում տեսանք:

ԲԵԴՍԻ.—Ո՞վ է հիշում, թե վորտեղ տեսանք: Վովո, դու այդտե՞ղ ես:

ՏԵՍԻՒ 34

Նույնի և Պետրիչչեվ

ՊԵՏՐ.—Վովոն այստեղ չե, յես պատրաստ եմ նրա տեղ կատարել այն, ինչ վոր հարկավոր է, բարև ձեզ Մարիա Կոնստանտինովնա: (Յերկար յեվ ուժեղ քալով քորպիում է Բեդսիի ձեռք, հետո Մարիա Կոնստանտինովնային):

Բ. ԳՅՈՒԻՂ.—Մ՛յ, տես, կարծես ջրհորից ջուր են քաշում:



ԲԵՒՍԻ—Փոխարինել նրան չեք կարող, բայց և այնպես ալելի լավ է, քան վոչինչը (բրջում է) այդ ինչ գործեր ունիք Վոլոյի հետ:

ՊԵՏՐ.—Գործեր գործեր ֆինանսական, այսինքն, այդ մեր գործերը ֆի, նույնպես նանսական են և դրա հետ է ֆինանսական:

ԲԵՒՍԻ—Ի՞նչ է նշանակում նանսական:

ՊԵՏՐ.—Այ քեզ հարց, հենց բանն էլ նրանում է, վոր վոչինչ չի նշանակում:

ԲԵՒՍԻ.—Նու, այդ չեղավ, բոլորովին բանի չնմանեց: (Գրքջում է):

ՊԵՏՐ.—Հո չի կարելի, վոր ամեն անգամ մի բանի նման լինի: Իա, այսպես ասած, ալեգրի չե, վիճակախաղ, ալեգրի, ալեգրի, հետո էլ այդ ալեգրուց կարելի յե մի բան դուրս գա:

Նույնի, առանց Ֆեոդոր Իվանիչի

ԲԵՒՍԻ.—Ձե, այդ չեղավ, հա, ասացեք խնդրեմ, դուք չերեկ չեղա՞ք Մերգասովների մոտ:

ՊԵՏՐ.—Վոչ այնքան *mère Casseff-ի մոտ վորքան père Casseff-ի և նույն իսկ վոչ թե père Casseff-ի այլ fils Casseff-ի մոտ:*

ԲԵՒՍԻ.—Ձե՞ք կարող առանց *jeu de mots?* դա հիվանդութունն է: Գնչու՞նե՞րն էլ այնտեղ էլին:

ՊԵՏՐ.—(Յերգում է) На фартучках петушки золотые гребешки:

ԲԵՒՍԻ.—Այ յերջանիկներ, իսկ մենք ձանձրանում էլինք Վոլոյի մոտ:

ՊԵՏՐ.—(Շարունակելով յերգն) И божилась и клялась—побывать ко мне... Ինչպես է, հետո, Մարիա Կոնստանտինովնա, հետո ի՞նչպես է:

ՄԱՐ. Կ.—Ко мне на час...

ՊԵՏՐ.—Ինչպե՞ս, ինչպե՞ս, Մարիա Կոնստանտինովնա (բրջում է):

ԲԵՒՍԻ.—Cessez, vous devenez impossible!

ՊԵՏՐ.—J'ai cessé, j'ai bebe, j'ai dede...

ԲԵՒՍԻ—Յես մի միջոց գիտեմ ձեր ուրախութունից ազատվելու—այդ այն է, վոր ձեզ ստիպենք չերգել: Գնանք Վոլոյի սենյակը նա կիթառ էլ ունի, գնաք, Մարիա Կոնստանտինովնա, գնանք: (Բեղսին, Մարիա Կոնստանտինովնան յեվ Պետրեյելը գնում են Վասիլիյ Լեոնիդիչի սենյակը):

Գրիգորիյ, յերեք գյուղացի և արեւելիկ

Ա. ԳՅՈՒՂ.—Սրանք ի՞նչ մարդիկ են:

ԳՐԻԳՈՐ.—Մեկը մեր որիորդն է, մյուսը մամուլ է, յեւրաժտության դասեր է տալիս:

Ա. ԳՅՈՒՂ.—Գիտութունն է սովորեցնում, նշանակում է, և ինչ կոկլիկն է, իսկ վոր պատկեր:

Բ. ԳՅՈՒՂ.—Ի՞նչու մարդու չեն տալիս, տարին արդեն կարծյոք թամամել է:

ԳՐԻԳՈՐ.—Կարծում ես ինչպես ձեզանում է, տասն և հինգ տարեկան:

Ա. ԳՅՈՒՂ.—Իսկ այն տղամարդը ինչպես կարգն է, ջուլիկաները ք:

ԳՐԻԳՈՐ.—(Չարմանալով) Մուզիկանտ, դուք վոչինչ չեք հասկանում:

Ա. ԳՅՈՒՂ.—Այդ դրուստ է, մեր հիմարութունից, նշանակում է անկրթութուն:

Գ. ԳՅՈՒՂ.—Ոյ, տեր ասաված:

(Վասիլիյ Լեոնիդիչի սենյակից լսվում է գնչուական յերգերի յեղականեր կիթառի ձայնակցութամբ)

Գրիգորիյ, յերեք գյուղացի, արեւելիկ, Սիմեոն յեվ նրա հետեւից Տանյան (Տանյան դիտում է հոր յեվ վորդու հանդիպումը)

ԳՐԻԳՈՐ.—(Սիմեոնին) Դու ինչ ես...

ՍԻՄԵՈՆ.—Պարոն Կապչիչի մոտ էլին ուղարկել:

ԳՐԻԳՈՐ.—Ե, ի՞նչ:

ՍԻՄԵՈՆ.—Հրամայեցին բերանացի ասել, վոր այսոր բոլորովին չեն կարող գալ:

ԳՐԻԳՈՐ.—Լավ, յես իմաց կտամ: (Գնում է):

Նույնի, առանց Գրիգորիյի

ՍԻՄԵՈՆ.—(Հորը) Բարով ապի. Յեֆիմ քեռի, Միտրի քեռի, բարով եք յեկել:

Բ. ԳՅՈՒՂ.—Բարով, Սիմեոն:

Ա. ԳՅՈՒՂ.—Բարով, վորդի:

Գ. ԳՅՈՒՂ.—Բարով ջահելս, վճղ յես:

ՍԻՄԵՈՆ.—(Փայտալով) Ի՞նչ էք կանգնել, ապի, գնանք թե իմենք:



Բ. ԳՅՈՒՂ. — Սպասիր պրծնենք, չեմ տեսնում, վոր հիմա ժամանակ չունենք:

ՄԻՄԵՈՆ. — Դե լավ, չես դուրսը կսպասեմ: (Գնում է):

ՏԱՆՅԱ. — (Վազում է նրա հետևից) Ի՞նչ է, դու վոչինչ չսասցիր:

ՄԻՄԵՈՆ. — Ինչպե՞ս ասելի հիմա ժողովրդի մեջ, համբերիր, կգնանք թեյ խմելու, այնտեղ ել կասեմ: (Գնում է):

ՏԵՍԻՂ 39

Նույնք, առանց Սիմեոնի

ՖԵՈՒ. ԻՎ. — (Սեղանից դուրս է գալիս յեվ նստում է լուսամուտի առաջ, լրագիրք մեռփին):

Ա. ԳՅՈՒՂ. — Ի՞նչ է, պատվելի, ի՞նչպես ե լինում մեր գործը:

ՖԵՈՒ. ԻՎ. — Սպասեցեք, հիմա դուրս կգա, վերջացնում է:

ՏԱՆՅԱ. — (Ֆեոուր Իվանիչին) Իսկ դուք վճարակից դեմք, Ֆեոուր Իվանիչ, վոր վերջացնում է:

ՖԵՈՒ. ԻՎ. — Յես գիտեմ, յերբ վոր նա հարցերը վերջացնում է, այն ժամանակ նա բարձր ձայնով կարդում է հարցերը և պատասխանները:

ՏԱՆՅԱ. — Միթե՞ ձիշտ է, վոր ասեոով կարելի չե խոսել վոգիների հետ:

ՖԵՈՒ. ԻՎ. — Յերեի ձիշտ է:

ՏԱՆՅԱ. — Ե, ի՞նչ է, նրանք պարոնին կասեն ստորագրեր և նա կստորագրի:

ՖԵՈՒ. ԻՎ. — Բա ի՞նչ ես կարծում:

ՏԱՆՅԱ. — Բայց ախր նրանք բառերով չեն խոսում:

ՖԵՈՒ. ԻՎ. — Տառերով, վոր տասի դեմ վոր կանգնի, նա ել կնշանակի:

ՏԱՆՅԱ. — Իսկ չեթե սեանսի ժամանակ...

ՏԵՍԻՂ 40

Նույնք յեվ Լեոնիդ Ֆեոուրովիչ

ԼԵՈՆ. Ֆ. — Ե, բարեկամներս, չեմ կարող: Շատ կցանկանայի, բայց չեմ կարող: Թե վոր բոլոր փողերը, դա ուրիշ հարց է:

Ա. ԳՅՈՒՂ. — Դա դրուստ է, ել ի՞նչ կուզեյինք, համա ձար չունի մեր ժողովուրդը. բոլորովին չենք կարող:

ԼԵՈՆ. Ֆ. — Չեմ կարող, չեմ կարող սիրելիներս, ահա այս ել ձեր թուղթը: Չեմ կարող ստորագրել:

Գ. ԳՅՈՒՂ. — Խղճան մեզ, հայր, վորորմասերս յեղիր:  
Բ. ԳՅՈՒՂ. — Ինչո՞ւ չես այդպես վարվում. դա մեզ վիրավորանք է:

ԼԵՈՆ. Ֆ. — Այստեղ, չեղբայրներս, վիրավորանք չկա: Յես այն ժամանակ, ամառը ձեզ ասեցի, թե չեթե ուզում եք, առեք չուղեցիք. հիմա անկարելի չե:

Գ. ԳՅՈՒՂ. — Հայր, գթասիրտ յեղիր. ի՞նչպես անենք հիմա, հողը քիչ է, վոչ թե տավար, հավ ել, ասենք, պահելու տեղ չկա:

ԼԵՈՆ. Ֆ. — (Գնում է յեվ կանգ է առնում դրան մոտ):

ՏԵՍԻՂ 41

Նույնք, քանիտունին յեվ բժիշկը ցած են գալիս վերելից, նրանց հետևից Վասիլի Լեոնիդիչը ուրախ յեվ վառվում քամադրուրյալք, փողերը սեղավորում է քաշի մեջ

ՏԻՐՈՒՆԻ. — (Չուգված, գլխարկով) Այդպե՞ս ընդունել:

ԲԺԻՇԿ. — Յեթե վոր նորից կրկնվեն, անպատճառ ընդունեցեք, իսկ վոր գլխավորն է, ձեզ լավ պահպանեցեք: Թե չե, ինչպես եք ուզում դուք, վոր թանձր սիրույը անց կենա բարակ մազային խողովակից: Այն ել չերբ մենք սեղմենք այդ խողովակը: Չի կարելի, այդպես ել մաղձային անցքն է: Ամեն բան, հավատացեք, շատ պարզ է:

ՏԻՐՈՒՆԻ. — Դե լավ, շատ լավ:

ԲԺԻՇԿ. — Լավ, լավ ասում եք, բայց միշտ ել նույնն էք կրկնում, տիրուհի, չի կարելի, չի կարելի, դեհ, մնաք բարով:

ՏԻՐՈՒՆԻ. — Վոչ թե «մնաք բարով» այլ ցտեսութունն, յերեկոյան այնուամենայնիվ ձեզ կսպասեմ, առանց ձեզ չեմ համարձակվի:

ԲԺԻՇԿ. — Լավ, շատ լավ, չեթե ժամանակ ունենամ կհանդիպեմ: (Գնում է):

ՏԵՍԻՂ 42

Նույնք, առանց բժեկի

ՏԻՐՈՒՆԻ. — (Տեսնելով գյուղացիներին) Սա ի՞նչ է, ի՞նչ բան է սա: Այս ի՞նչ մարդիկ են: (Գյուղացիք գլուխ են ցալիս):

ՖԵՈՒ. ԻՎ. — Գյուղացիներ են, կուրսից, Լեոնիդ Ֆեոուրովիչի մոտ են յեկել հող գնելու համար:

ՏԻՐՈՒՆԻ. — Յես տեսնում եմ, վոր գյուղացիներ են, բայց ո՞վ է ներս թողել սրանց:

ՖԵՈՒ. ԻՎ. — Լեոնիդ Ֆեոուրովիչը հրամայեց, նա այս բոլորներն խոսում եր սրանց հետ, հողի վաճառման մասին:



ՏԻՐՈՒՀԻ—Ի՞նչ վաճառում, բորբոսովին հարկավոր չե վաճառել: Իսկ վոր գլխավորն ե, ինչպե՞ս կարելի յե հենց փողոցից մարդկանց տուն թողնել: Ուղղակի փողոցից տուն: Չի կարելի ներս թողնել այնպիսի մարդկանց, վորոնք աստված դիտե թե վորտեղ են գիշերել: (Ավելի ու ավելի տախտակ ե) դրանց շորերում, յես կարծում եմ, ամեն ծալը լի յե բացիլներով: Սկարլատինի բացիլ, ծաղկի բացիլ, դիֆտերիտի բացիլ, Կուրբուսկից են ասացիլ, Կուրսկի նահանգից, վորտեղ դիֆտերիտի համաճարակ ե: Բժիշկ, բժիշկ... հետ կանչեցեք բժշկին: (Լեոնիդ Ֆեոդորովիչը գնում ե, ծածկելով դուրս: Գրիգորիյն դուրս ե գնում բժիշկին կանչելու):

ՏԵՍԻԼ 43

Նույնի, առանց Լեոնիդ Ֆեոդորովիչի յեվ Գրիգորիյ  
ՎԱՍ. ԼԵ.—(Մխում ե, ծխախոտի ծուխը փչում գլուղացիների դերեսներին) Վոչինչ, մամա, կուղեք յես սրանց այնպես ծուխ տամ, վոր բորբ բացիլները սատկեն, հա՛, ինչ ե: (Տիկիներ լուռ ե յեվ սպասում ե բժեկի վերադարձին):

ՎԱՍ. ԼԵ.—(Գլուղացիներին) Իսկ դուք խող պահում եք, այ՛ ոգտակար բան:

Ա. ԳՅՈՒՂ.—Դրուստ ե, այդ ել ենք անում, յերբ վոր խողացին մասն ե:

ՎԱՍ. ԼԵ.—Այս տեսակ, չե, խո, խո, խո (խոզի ձայն ե հանում):

ՏԻՐՈՒՀԻ—Վո՛վո, բավական ե:

ՎԱՍ. ԼԵ.—Նման ե, հա՛, ի՞նչ ե:

Ա. ԳՅՈՒՂ.—Դրուստ ե, նմանակ ե:

ՏԻՐՈՒՀԻ—Վո՛վո, բավական ե քեղ ասում եմ:

Բ. ԳՅՈՒՂ.—Դա ինչո՞ւ համար ե:

Գ. ԳՅՈՒՂ.—Ախար ասում ելի, թե հալա մեկ դուրսը սպասենք:

ՏԵՍԻԼ 44

Նույնի, բժիշկ յեվ Գրիգորիյ

ԲԺԻՇԿ—Ելի ի՞նչ ե, ի՞նչ կա վոր:

ՏԻՐՈՒՀԻ—Դե, դուք ասում եք թե չվրդովեմ, դե, ի՞նչպես հանգիստ լինեմ այտեղ: Յես յերկու ամիս ե քրոջս չեմ տեսնում, յես զգուշանում եմ ամեն մի կասկածելի այցելուից ե

հանկարծ մարդիկ՝ Կուրսկից յեկած, ուղղակի Կուրսկից, վորտեղ դիֆտերիտի համաճարակ ե ե իմ տան մեջ...

ԲԺԻՇԿ—Այսինքն այս քաջերը:

ՏԻՐՈՒՀԻ—Այո, այո, ուղղակի դիֆտերիտային տեղ:

ԲԺԻՇԿ—Հա, յերբ դիֆտերիտային տեղից են, իհարկե, անըզդույշ բան ե, բայց ե այնպես շատ անհանգստանալու հարկ չկա:

ՏԻՐՈՒՀԻ—Դե, դուք եք միշտ ասում, վոր զգույշ մնամ:

ԲԺԻՇԿ—Դե այո, այո, միայն շատ վրդովվելու հարկ չկա:

ՏԻՐՈՒՀԻ—Հապա ինչպե՞ս, ամբողջովին պետք ե ախտահանել այտեղ:

ԲԺԻՇԿ—Վոչ, ինչո՞ւ ամբողջովին, դա չափազանց թանկ ե, մինչև իսկ 300 կնատի, իսկ յես շատ եծան ե հասարակ բան կասեմ, վերցրեք մի մեծ շիշ ջուր...

ՏԻՐՈՒՀԻ—Յեռացրե՛մ:

ԲԺԻՇԿ—Միևնու՛նս ե, յեռացրածը լավ ե, մի շիշ ջրին խառնեցեք մի հացի գդալ սալիցիլյան թթվուտ ե պատվիրեցեք լվանալ ամեն բան, մինչև անգամ ինչ բանի վոր քավել են սրանք: Իսկ այս քաջերին իհարկե դուրս: Ուրիշ վոչինչ, այն ժամանակ համարձակ: Նույնիսկ խառնուրդից պուլվերիզատորով ողի մեջ սրսկել տվեք մի յերկու յերեք բաժակ, ե կտեսնեք, թե ինչպես լավ կլինի: Բոլորովին անվտանգ ե:

ՏԻՐՈՒՀԻ—Տանցմն վորտեղ ե, կանչեցեք Տանցալին:

ՏԵՍԻԼ 45

Նույնի յեվ Տանյա

ՏԱՆՅԱ.—Ի՞նչ եք հրամայում:

ՏԻՐՈՒՀԻ—Գիտե՞ս դու զուգարանում մի մեծ շիշ կա:

ՏԱՆՅԱ.—Այո, վորից յերեկ լվացարարին ջուր սրսկիցինք:

ՏԻՐՈՒՀԻ—Դե հա, հապա ել վո՛րը, հա, առ այդ շիշը ե բեր այտեղ, նախ սապոնով լվա այնտեղը՝ վորտեղ կանգնած են դրանք, ապա նրանով...

ՏԱՆՅԱ.—Շատ բարի, յես գիտեմ ինչպես հարկավորն ե:

ՏԻՐՈՒՀԻ—Հետո վերցրու պուլվերիզատորը... դե լավ, յես կվերադառնամ ե ինքս կասեմ:

ԲԺԻՇԿ—Այդպես ել արեք ե մի վախենաք: Դե, ուրեմն ցատեալ-թյուն մինչև յերեկո: (Գնում ե):



Նույնք, առանց բժիշկի

ՏԻՐՈՒՀԻ—Իսկ դուք դուրս կորեք, դուրս, այստեղ հոտերդ  
չերևա, դուրս ասում եմ, ի՞նչ եք նայում:

Ա. ԳՅՈՒԴ.—Դրուսա ե, մեր կողմանից հիմարություն եր,  
ինչպես մեզ առաջարկում են...

ԳՐԻԳՈՐ.—(Դուրս անելով նրանց) Դե, գնացեք, գնացեք...

Բ. ԳՅՈՒԴ.—Աղլուխս տուր, աղլուխս...

Գ. ԳՅՈՒԴ.—Ոյ, տեր աստված, ասում եյի թե դուրսը  
սպասենք հալա մի քիչ:

ԳՐԻԳՈՐ.—(Դուրս ե հրում նրան):

Տիրուհի, Գրիգորի, Ֆեոդոր Իվանիչ, Տանյա, Վասիլիյ Լեոնիլիչ յեվ  
արսելչիկ

ԱՐՏԵԼՇ.—(Մի քանի անգամ ույծ ե անում խոսելու) Մի  
պատասխան կլինի թե չե:

ՏԻՐՈՒՀԻ—Ա, Բուրդեի՞ց ե (սափանալով) վոչ մի պատասխան,  
վոչ մի հետ տարեք, չես նրան ասել եմ, վոր այդպիսի զգեստ  
չես չեմ պատվիրել և իմ աղջկանս ել թույլ չեմ տալ, վոր  
հագնի:

ԱՐՏԵԼՇ.—Յես չգիտեմ, ինձ ուղարկել են:

ՏԻՐՈՒՀԻ—Գնացեք, գնացեք և տարեք յետ, չես ինքս  
կանցնեմ:

ՎԱՍ. ԼԵ.—(Հանդիսավոր կերպով) պարոն գեսպան Բուր-  
դեի, կարող եք հեռանալ:

ԱՆՏԵԼՇ.—Դե շուտ կասեյիք ելի, ել ինչո՞ւ ելի հինգ ժամ  
նստում այստեղ:

ՎԱՍ. ԼԵ.—Բուրդեի գեսպան, գնացեք:

ՏԻՐՈՒՀԻ—Թող, խնդրում եմ:

ԱՐՏԵԼՇ.—(Գնում ե):

Նույնք, առանց արսելչիկի

ՏԻՐՈՒՀԻ—Բեդսի, վորտեղ ե, մի՞շտ պետք ե նրան սպա-  
սեմ:

ՎԱՍ. ԼԵ.—(Բղավում ե բոլոր ուժով) Բեդսի, Պետրիչչիկ  
յեկեք շուտով, յեկեք, յեկեք, հա՛, ի՞նչ ե:

Նույնք, Բեդսի, Մառիա Կոնստանտինովնա, Պետրիչչիկ

ՏԻՐՈՒՀԻ—Դու միշտ պետք ե սպասեցնել տաս:

ԲԵԴՍԻ.—Ընդհակառակը, չես ելի ձեզ սպասում:

ՊԵՏՐ.—(Բարեվում ե գլխի քեթեվ շարժումով յեվ համբու-  
րում ե սիկնոզ ձեռքը):

ՏԻՐՈՒՀԻ—Բարե ձեզ, (Բեդսիին) միշտ պետք ե պատաս-  
խանես:

ԲԵԴՍԻ.—Մայրիկ, յեթե վոր դու տրամադրություն չունես,  
ավելի լավ ե չես չեմ դա:

ՏԻՐՈՒՀԻ—Գնում ենք, թե չենք գնում:

ԲԵԴՍԻ.—Դե, գնանք, ի՞նչ արած:

ՏԻՐՈՒՀԻ—Տեսա՞ր Բուրդեի ուղարկած տղային:

ԲԵԴՍԻ.—Տեսա և շատ ուրախ ելի: Յես պատվիրել եմ նոր  
զգեստ և կհագնեմ, յերբ կվճարեն նրա արժեքը:

ՏԻՐՈՒՀԻ—Յես չեմ վճարի. և չեմ ել թույլ տա, վոր հագ-  
նես այդ անվայելուչ զգեստը:

ԲԵԴՍԻ.—Այդ ինչպես վոր նա անվայելուչ դարձավ: Մեկ  
վայելուչ եր մեկ անվայելուչ. դուք այժմ ավելի քան խստապա-  
հանջ եք:

ՏԻՐՈՒՀԻ—Չե, խստապահանջ չեմ, այլ պետք ե նորից կա-  
րել ամբողջ լիֆը, այն ժամանակ կարելի չե:

ԲԵԴՍԻ.—Մամա, իսկպես, վոր այդ անկարելի չե:

ՏԻՐՈՒՀԻ—Դե, հագիր տեսնեմ: (Նստում են):

ԳՐԻԳՈՐ.—(Հազցնում ե կոբիկները):

ՎԱՍ. ԼԵ.—Մառիա Կոնստանտինովնա, դուք տեսնում եք,  
ինչ դատարկություն ե այստեղ, նախասենյակում:

ՄԱՐ. Կ.—(Միծաղում ե) Ինչպե՞ս թե:

ՎԱՍ. ԼԵ.—Բուրդեի պատգամավորը գնաց, հա՛, ինչ ե: (Մի-  
ծաղում ե բարձր):

ՏԻՐՈՒՀԻ—Դե, գնանք: (Դուրս ե գալիս դռնից յեվ իսկույն  
վերադառնում ե) Տանյա:

ՏԱՆՅԱ.—Ի՞նչ եք հրամայում:

ՏԻՐՈՒՀԻ—Ֆիֆկային առանց ինձ չմրսեցնեք: Թե վոր  
կուզենա դուրս գալ, անպատճառ հազցրու վերնազգեստը, գե-  
ղինը, խեղճ շնիկս, մի քիչ տկար ե:

ՏԱՆՅԱ.—Շատ լավ:

Տիրուհին, Բեդսին, Մառիա Կոնստանտինովնա յեվ Գրիգորին գնում են):



Պեճրիչեվ, Վասիլիյ Լեոնիդիչ, Տանյա, Ֆեոդոր Իվանիչ  
ՊԵՏՐԻՇ. — Նու, Ի՞նչ արիր, ճարեցի՞ր:

ՎԱՍ. ԼԵ. — Յես քեզ ասեմ, մեծ դժվարությամբ: Նախ վրա  
ընկա հորս. գոռգոռաց և վռնդեց, հետո գնացի մորս մոտ և կա-  
տարվեց (խփում է գրպանին) այստեղ է: Թե վոր մի բան հանձն  
եմ առնում, իմ ձեռքից դժվար է ազատվել: Կուխը՝ որհասական  
եր: Համ, Ի՞նչ է, չէ՞ վոր այսոր կրեբեն իմ գայլախեղդ շնեբին:  
(Պեճրիչեվ յեվ Վասիլիյ Լեոնիդիչը հագնվում են յեվ գնում):

Ֆեոդոր Իվանիչ (մենակ)

ՖԵՈՒԴ. ԻՎ. — Այո, միշտ անախորժություններ: Ի՞նչպես այդ  
մարդիկ չեն կարողանում համերաշխ ապրել: Ճիշտն ասած, այս  
յերիտասարդ սերունդն ել այն չէ. իսկ կանանց թագավորու-  
թյո՞ւնը. Ի՞նչպես, քիչ առաջ Լեոնիդ Ֆեոդորովիչը ուզում եր  
պաշտպան կանգնել, բայց տեսավ, վոր նա եքստազի մեջ է, դուռը  
ըրխկացրեց: Հազվագյուտ, բարի մարդ է. այո, հազվագյուտ  
բարությամբ: Սա ինչ բան է, Տանյան նորից բերում է սրանց:

Ֆեոդոր Իվանիչ, Տանյա և յեբք գյուղացիներ

ՏԱՆՅԱ. — Յեկեք, յեկեք, քեռիներ, վոչինչ:

ՖԵՈՒԴ. ԻՎ. — Ելի ինչո՞ւ բերիր դու այդ մարդկանց:

ՏԱՆՅԱ. — Դե ինչպե՞ս անենք, Ֆեոդոր Իվանիչ, սիրելիս,  
պեաք է մի կերպ սրանց համար միջնորդել. իսկ յես արդեն  
կլվանամ միանգամից:

ՖԵՈՒԴ. ԻՎ. — Չեմ կարծում թե գործը գլուխ գա, արդեն  
յերևում է:

Ա. ԳՅՈՒԴ. — Ի՞նչպես անենք, պատվելի, վոր մեր գործը  
գլուխ բերենք: Դուք, ձերդ հարգություն, մի քիչ նեղություն  
քաշեք մեզ համար: Իսկ ձեր չարչարանքի վարձատրությունը  
մեր հասարակությունից շնորհակալություն կուղարկենք:

Ա. ԳՅՈՒԴ. — Աշխատիր, քեզ մատաղ, մենք ապրել չենք  
կարող: Հողը քիչ է, վոչ թե տավար, հավ պահելու տեղ ել չու-  
նենք: (Գլուխ է ցալիս):

ՖԵՈՒԴ. ԻՎ. — Իմ մեղքս տալիս է ձեզ, բայց չգիտեմ, յեղ-  
բայրներս, յես լավ եմ հասկանում, բայց ախար մերժեց նա:  
Հիմա ի՞նչպես անենք: Տիկի՞նն ել համաձայն չե, հաղիվ թե. հա-  
պա մի թուղթը ավեք, գնամ, կփորձեմ, կխնդրեմ նրան: (Գր-  
նում է):

Տանյա և յեբք գյուղացիներ  
(Գյուղացիները հոգոց են քառում)

ՏԱՆՅԱ. — Դե, ինձ ասացեք դուք, ի՞նչ բան է ձեր գործի  
յեղեղությունը:

Ա. ԳՅՈՒԴ. — Այ, հենց մի ստորագրություն, վոր ձեռք քա-  
շե թղթի վրա:

ՏԱՆՅԱ. — Հենց ա՞յդ, վոր աղեն ստորագրի՞, հա՞:

Ա. ԳՅՈՒԴ. — Հենց միայն ձեռք քաշե և փողերը ստանա—  
ու ամեն ինչ, կվերջանա:

Գ. ԳՅՈՒԴ. — Գրեր միայն թե ինչպես գյուղացիք, ասենք,  
ուզում են այսպես, ասենք, և յես ուզում եմ, յեվ ամբողջ գոր-  
ծը, վերցրեց, ձեռք քաշեց և շարաշ:

ՏԱՆՅԱ. — Միայն վոր ստորագրի՞, թղթի վրա, վոր աղեն  
ստորագրի՞, հա՞: (Միտ է անում):

Ա. ԳՅՈՒԴ. — Դրուստ է, հենց դրանից ել կախված է գործը,  
ստորագրել և ուրիշ վոչ մի բան:

ՏԱՆՅԱ. — Դուք սպասեցեք դեռ տեսնենք Ֆեոդոր Իվանիչն  
ինչ կասի: Յեթե նա չհամոզի, յես կփորձեմ մի խաղ խաղալ:

Ա. ԳՅՈՒԴ. — Ոչի՞ն պիտի սարքես:

ՏԱՆՅԱ. — Կփորձեմ:

Գ. ԳՅՈՒԴ. — Այ աղջիկ, միջնորդել է ուզում, դու գործին  
ողնիլ, մեր կյանքում, ասենք, հասարակությունով քեզ պահե-  
լու կպարտավորվինք, այ ինչ:

Ա. ԳՅՈՒԴ. — Թե վոր գործը գլուխ բերիլ, դրուստ վոր քեզ,  
վոսկու մեջ կպահենք:

Բ. ԳՅՈՒԴ. — Դե ել ի՞նչ ասենք:

ՏԱՆՅԱ. — Հաստատ չեմ խոստանա, ինչպես ասում ես, կը-  
փորձեմ. յեղավ յեղավ, չեղավ չեղավ: Հ՞ը:

Ա. ԳՅՈՒԴ. — Փորձ անելը վնաս չե, այդ դրուստ է:

Նույնի յեվ Ֆեոդոր Իվանիչ

ՖԵՈՒԴ. ԻՎ. — Չե, յեղբայրներս. ձեր գործը գլուխ չի գա,  
չհամաձայնեց և չի համաձայնի. առեք թուղթը և գնացեք:

Ա. ԳՅՈՒԴ. — (Վեցնում է քուլքը. Տանյային) Մեր հույսը  
քեզ վրա, ինչպես կարգն է մտաց:



ՏԱՆՅԱ.— Իսկույն, իսկույն, դուք դուրս գնացեք, փողոցում  
սպասեցեք, իսկ յես այս բոպեյին դուրս կգամ և կասեմ:

ՏԵՍԻԼ 55

Ֆեոդոր Իվանիչ յեվ Տանյա

ՏԱՆՅԱ.— Ֆեոդոր Իվանիչ, հոգիս, իմաց տվեք պարոնին, վոր  
դուրս գա. յես մի խոսք ունիմ ասելու:

ՖԵՈԴ. ԻՎ.— Ա՛յդ ի՞նչ նորությունն է:

ՏԱՆՅԱ.— Դե, հարկավոր է, Ֆեոդոր Իվանիչ, իմացրեք,  
խնդրում եմ, վնչ մի վատ բան, աստված վկա:

ՖԵՈԴ. ԻՎ.— Ա՛յդ ի՞նչ գործ է:

ՏԱՆՅԱ.— Մի փոքրիկ գաղտնիք է, յես հետո ձեզ կասեմ,  
դուք միայն իմաց արեք:

ՖԵՈԴ. ԻՎ.— (Ժպտալով) Ի՞նչ էս պատրաստում, չեմ հաս-  
կանում. դե, ի՞նչ անեմ, կասեմ, կասեմ: (Գնում է):

ՏԵՍԻԼ 56

Տանյա մենակ

ՏԱՆՅԱ.— Ա՛յ թե չանեմ, ախար հենց ինքն եր ասում, վոր  
Սիմեոնի մեջ ույժ կա, իսկ յես հո գիտեմ, թե ինչպես պետք է  
անել, այն ժամանակ վոչ վոք գլխի չ՛ընկավ: Իսկ հիմա Սիմե-  
ոնին կսովորեցնեմ: Յեթե բանը չհաջողվի ել, հոգ չե, մեղք  
հո չե:

ՏԵՍԻԼ 57

Տանյա, Լեոնիդ Ֆեոդորովիչ, նրա յեսեվից Ֆեոդոր Իվանիչ.

ԼԵՈՆ. Ֆ.— (Ժպտալով) Ա՛յ քեզ խնդրատու, այդ ի՞նչ գործ  
է քո գործը:

ՏԱՆՅԱ.— Մի փոքրիկ գաղտնիք է, Լեոնիդ Ֆեոդորովիչ,  
թույլ տվեք ինձ, վոր ձեզ հետ խոսեմ առանձին:

ԼԵՈՆ. Ֆ.— Ի՞նչ արած, Ֆեոդոր, դուրս գնա մի ըոպեով:

ՏԵՍԻԼ 58

Լեոնիդ Ֆեոդորովիչ յեվ Տանյա

ՏԱՆՅԱ.— Յես ապրել եմ, մեծացել եմ ձեր տանը, Լեոնիդ  
Ֆեոդորովիչ, շատ շնորհակալ եմ դրա համար և ինչպես հարա-  
զատ հայր՝ բաց եմ անում իմ սիրտը ձեր առաջ: Ձեր տանը  
սպրում ե Սիմեոն՝ աղան, նա ուզում է ինձ հետ ամուսնանալ:

ԼԵՈՆ. Ֆ.— Ահա թե ինչ:

ՏԱՆՅԱ.— Ձեր առաջ յես բաց եմ անում իմ սիրտը, ինչպես

աստծու առաջ. ուրիշ վոչ վոք չունեմ խորհուրդ հարցնելու,  
վորը եմ յես ու մենակ:

ԼԵՈՆ. Ֆ.— Ինչո՞ւ չե, նա կարգին, լավ տղա յե:

ՏԱՆՅԱ.— Այդ ճիշտ է, նա վոչինչ, լավ է, միայն մի բա-  
նում յես կասկածում եմ և ուզում եմ ձեզ հարցնել, վոր նա  
մի տեսակ բան ունի, յես չեմ հասկանում... չլինի դա վատ է:

ԼԵՈՆ. Ֆ.— Ի՞նչ է վոր, խմում ե:

ՏԱՆՅԱ.— Վոչ, աստված չանե, միայն գիտեմ, վոր նա  
սպիրիտուալ յունն ունի:

ԼԵՈՆ. Ֆ.— Գիտեմ:

ՏԱՆՅԱ.— Ի՞նչպես չե, յես լավ հասկանում եմ. ուրիշները,  
ուզիդ է, անկրթությունից այդ բանը չեն հասկանում:

ԼԵՈՆ. Ֆ.— Ե, ի՞նչ կա վոր:

ՏԱՆՅԱ.— Դե այդ է ելի, վոր յերկյուզ եմ կրում Սիմեոնի  
մասին, նրա հետ այդ բանը պատահում է:

ԼԵՈՆ. Ֆ.— Ի՞նչ է պատահում:

ՏԱՆՅԱ.— Այն ելի, սպիրիտուալ յան պես մի բան... այ, հար-  
ցրեք ծառաներին, հենց վոր նա սեղանի մոտ նստած քիչ քունը  
տանում է, իսկույն սեղանը շարժվում է, ամբողջովին ճրճում  
է, այսպես ճրճ, ճրճ, ճրճ, ճրճ... բոլորը լսեցին:

ԼԵՈՆ. Ֆ.— Այ, հենց այն է, վոր յես առավոտյան Սերգեյ  
Իվանիչին ասում ելի, հետո...

ՏԱՆՅԱ.— Հետո այն է, վոր, յերբ եր այդ, հա, չորեքշաբ-  
թի, նստել էյինք ճաշի. հենց վոր նա նստավ սեղանի մոտ,  
իսկույն գդալը թռավ նրա ձեռքը:

ԼԵՈՆ. Ֆ.— Ա՛յ, դա հետաքրքրական է, ուղղակի թուով ձեռ-  
քը, իսկ ինքը քնե՞լ եր:

ՏԱՆՅԱ.— Այդ արդեն չնկատեցի, կարծեմ քնել էր:

ԼԵՈՆ. Ֆ.— Հետո:

ՏԱՆՅԱ.— Դե այդ է, վոր յես հիմա յերկյուզ եմ կրում և  
դրա համար ուզում էյի ձեզ հարցնել, թե դրանից մի վնաս չի՞  
պատահի: Ապրեմ պետք է հետը և նա այդպես բան անի:

ԼԵՈՆ. Ֆ.— Ձե, մի վախենար, այստեղ վոչ մի վատ բան  
չկա: Դա միայն նշանակում է, վոր նա մեղիում է, իսկ վոր  
մեղիում: Յես առաջ ել գիտեյի, վոր նա մեղիում է:

ՏԱՆՅԱ.— Ա՛յ թե ինչ, իսկ յես վախենում էյի:

ԼԵՈՆ. Ֆ.— Վոչ, մի վախենար, վոչինչ չկա: (ԻճճԻճԻճ) Այ, հի-  
անալի յե, կապիչը չի դա, մենք այսոր հենց նրան ել կփո-



ձեռք: Չե, սիրելիս, դու մի վախենար, նա քեզ լավ մարդ կլինի  
և ուրիշ վոչինչ: Իսկ դա մի առանձին ու՛ժ է, վոր ամեն մար-  
դու մեջ կա, միայն վոմանց մեջ շատ, վոմանց մեջ քիչ:

ՏԱՆՅԱ.—Շատ ու՛շատ շնորհակալ եմ: Ե՛կ հիմա ել հոգս  
չեմ անի: Թե չե յեւ վախենում եյի. այ թե ինչ է նշանակում  
անկիրթ լինել:

ԼԵՈՆ. Ֆ.—Վնչ, վոչ, մի վախենար... Ֆեոդոր:

ՏԵՍԻՒ 59

Նույնի յեվ Ֆեոդոր Իվանիչ

ԼԵՈՆ. Ֆ.—Յես տանից դուրս եմ դնում, յերեկոյան ամեն  
բան պատրաստ լինի սեանոի համար:

ՖԵՈՒ. ԻՎ.—Կարծեմ կապչիչը չի բարեհաճում դա:

ԼԵՈՆ. Ֆ.—Վոչինչ, վոչինչ, միկնուցն է (հագնում է շինելը)  
փորձնական սեանսը կլինի, մեր մեղիումով: (Գնում է):

ՖԵՈՒ. ԻՎ.—(ձանապարհ է դնում նրան):

ՏԵՍԻՒ 60

Տանյա մեմակ

ՏԱՆՅԱ.—Հավատաց, հավատաց, (նիչե է արձակում յեվ  
քոչկոսում է). Աստված վկա հավատաց, այ քեզ հրաշք (նիչե)  
այժմ կանեմ ինչ վոր մտածել եմ, ախ, միայն թե Սիմեոնը  
չվախենա:

ՏԵՍԻՒ 61

Տանյա յեվ Ֆեոդոր Իվանիչ

ՖԵՈՒ. ԻՎ.—Դեհ, ի՞նչ արիւր, ասեցի՞ր քո գաղտնիքը:

ՏԱՆՅԱ.—Այո, քեզ ել կասեմ, միայն հետո: Բեզ ել Ֆեո-  
դոր Իվանիչ, ինդիր ունեմ:

ՖԵՈՒ. ԻՎ.—Այդ ի՞նչ խնդիր է վոր:

ՏԱՆՅԱ.—(Ամաչկոս) Դուք ինձ համար յերկրորդ հայր եք  
յեղել, յես ձեր առաջ, ինչպես աստծու առաջ, կբանամ իմ սիրտը:

ՖԵՈՒ. ԻՎ.—Դե, մի դես ու դեն ընկնիր, ուղղակի գործին  
անցիր:

ՏԱՆՅԱ.—Ինչ գործին անցնեմ, գործն այն է, վոր Սիմե-  
ոնը ուզում է ինձ հետ ամուսնանալ:

ՖԵՈՒ. ԻՎ.—Ա՛յ քեզ բան, գիտեմ վոր, ինչ-վոր նկա-  
տում եմ:

ՏԱՆՅԱ.—Ե՛, և ինչու ծածկեմ, յես վորը, խեղճ աղջիկ եմ,

իսկ դուք ինքներդ գիտեք քաղաքի բանը: Ով ասես յետես  
ընկնում, թեկուզ Գրիգորի Միխայելովիչը, հանգիստ չի տա-  
լիս: Մեկ ել նա... ճանաչում եք, նրանք կարծում են, թե հոգի  
չունեմ, վոր յես միայն նրանց զվարճացնելու համար եմ ծնված:  
ՖԵՈՒ. ԻՎ.—Ապրես, խելքը աղջիկ ես, դե ել ի՞նչ կա  
վոր:

ՏԱՆՅԱ.—Սիմեոնը գրել եր հորը, հայրը այսոր ինձ տեսավ  
և... յերես է առել ասում է, վորդու մասին: Ֆեոդոր Իվանիչ  
(զուլիս է արիւս) յեղեք ինձ հոր հավասար, խոսեցեք ձերուհու՝  
Սիմեոնի հոր հետ: Յես նրանց խոհանոց եմ տարել: Դուք մըտ-  
նեյիք այնտեղ ու խոսեյիք ձերուկի հետ:

ՖԵՈՒ. ԻՎ.—(Փայտալով) Դա նշանակում է խնամախոս պի-  
տի լինեմ. ինչ է վոր, կարելի յե:

ՏԱՆՅԱ.—Ֆեոդոր Իվանիչ, սիրելիս, յեղեք հարազատ հոր  
տեղ, իսկ յես հավիտյան ձեզ համար աղոթք կանեմ:

ՖԵՈՒ. ԻՎ.—Լավ, լավ, կանցնեմ, խոստանում եմ, կկատա-  
րեմ: (Վերցնում է լրագիրը):

ՏԱՆՅԱ.—Ինձ յերկրորդ հայր կլինեք:

ՖԵՈՒ. ԻՎ.—Լավ, լավ:

ՏԱՆՅԱ.—Ուրեմն յես հույսով կլինեմ: (Գնում է):

ՏԵՍԻՒ 62

Ֆեոդոր Իվանիչ մեմակ

ՖԵՈՒ. ԻՎ.—(Գլուխը շարժելով) Ի՞նչ անուշ աղջիկ է. լավ  
աղջիկ է: Մարդ մտածում է, թե վորքան այդպիսիներ կորչում  
են: Հենց մի անգամ սայթաքում են՝ և գնաց, մինչև վերջը:  
Հետո ցեխի մեջ ել նրան չեն կարող գտնել: Նատալիայից վոչ  
պակաս բարեսիրտ է, նա ել լավ աղջիկ եր, նրան ել մայր եր  
ծնել, գգվել եր, մեծացրել... (Վերցնում է լրագիրը) Հապա տես-  
նենք մեր Ֆեդրիանդը ինչպես է իր գլուխն ազատում:

Վ. Ա. Ր. Ա. Գ. ՈՒՅՐ



ԱՐԱՐՎ ԱԾ II

Տեսարանք ներկայացնում է ծառաների խոհանոցը. գյուղացիները շուրջը համաձայն յեվ քրտնած նստած են սեղանի շուրջը յեվ քեյ են խմում: Ֆեոդոր Իվանիչը սիգարը ձեռքին գցնվում է բեմի մյուս ծայրում: Վառարանի վրա յե խոհարարը, վորն առաջին չորս տեսիլների միջոցին չի յերեվում:

ՏԵՍԻՒ 1

Ֆեոդ. գյուղացիներ յեվ Ֆեոդոր-Իվանիչ

Ֆեոդ. Իվ.—Յես խորհուրդ եմ տալիս, վոր դու արգելք չդառնաս: Թե վոր տղան ցանկութուն ունի, աղջիկը նույնպես, դեհ, աստված նրանց հետ: Աղջիկը լավ աղջիկ է, մաքուր բարձի տեր: Մի նայիր, վոր նա զուգվում է այդպես, դա քաղաքի սովորութունն է, առանց դրան չի լինի: Աղջիկը խելացի աղջիկ է:

Բ. ԳՅՈՒՂ.—Ի՞նչ արած, թե վոր նա հավանում է, նա պետք է աղջկա հետ ապրի, յես չես. միայն այնպես, շատ մաքրասեր է, ինչպես պետք է մեր խրճիթը ներս տանենք: Սկեսերովը չի ել թույլ տա իրան մտանալ:

Ֆեոդ. Իվ.—Դա, բարեկամս մաքրասիրութունից չես, այլ բնավորութունից. թե վոր լավ բնավորության տեր է, նա կըլինի հնազանդ և վարվեցող:

Բ. ԳՅՈՒՂ.—Դե կառնեմ, յեթե վոր տղան այդքան ուզում է անպատճառ: Չսիրածի հետ ապրելն ել տանջանք է: Պառավի հետ խորհուրդ անենք և աստված իրենց հետ:

Ֆեոդ. Իվ.—Դե ձեռքդ տուր տեսնեմ:

Բ. ԳՅՈՒՂ.—Հա, յերևում է, վոր այդպես պիտի լինի:

Ա. ԳՅՈՒՂ.—Բախտդ բանում է Չախար, յեկար գործ կատարելու, տեսար ինչ խանում հարս ձարեցիր: Միայն թե

պետք էր մի քիչ բողազներս թաց անելիք, վոր ամեն ինչ կարգին լիներ:

Ֆեոդ. Իվ.—Չե, դա հարկավոր չես:

(Անհարմար լուրջուն)

Ֆեոդ. Իվ.—Յես ձեր կյանքը, գյուղական կյանքը շատ լավ եմ հասկանում: Յես, ասեմ ձեզ, ինքս եմ մտածում, թե վորտեղից մի կտոր հող առնեմ: Մի փոքրիկ տուն շինելի ու գյուղացիութուն անելի, թեկուզ ձեր կողմերում:

Բ. ԳՅՈՒՂ.—Շատ սիրելի բան կլինի:

Ա. ԳՅՈՒՂ.—Դրուստ է, փողով կարելի յե գյուղում ամեն տեսակ բավականութուն ստանալ:

Գ. ԳՅՈՒՂ.—Ի՞նչ ասել է, գյուղական գործը ասենք, ամեն բանի մեջ ազատ է, այն չե ինչ-վոր քաղաքում:

Ֆեոդ. Իվ.—Ի՞նչ, կընդունե՞ք ինձ ձեր հասարակության մեջ, յեթե յես ձեզ մոտ տեղափոխվեմ:

Բ. ԳՅՈՒՂ.—Ի՞նչու չենք ընդունի: Ծերունիներին լավ կխմացնես իսկույն կընդունեն:

Ա. ԳՅՈՒՂ.—Գինետուն, ինչպես կարգն է, կամ արակալի բաց անես, այնպիսի կյանք կունենաս, վոր ել ասել հարկավոր չես: Դյուզի տերը կլինես, պրծավ գնաց:

Ֆեոդ. Իվ.—Այդ այնտեղ կտեսնենք, միայն այն եմ ուզում, վոր ձերության հասակում հանգիստ ապրեմ, թե չե այստեղ ել եմ լավ ապրում, ափսոս է վոր թողնեմ, Լեոնիդ Ֆեոդորովիչը հազվագյուտ բարությամբ մարդ է:

Ա. ԳՅՈՒՂ.—Այդ դրուստ է, հապա ել ի՞նչու նա մեր գործը... մի՞թե հենց այնպես, անհետևանք պիտի մնա:

Ֆեոդ. Իվ.—Նա ուրախ կլինի վերջացնել...

Բ. ԳՅՈՒՂ.—Յերևի կնոջից է վախենում:

Ֆեոդ. Իվ.—Չի վախենում, միայն համաձայնութուն չկա:

Գ. ԳՅՈՒՂ.—Իսկ դու, յեղբայր, աշխատելի, թե չե ինչպես պետք է ապրենք, հողը քիչ է:

Ֆեոդ. Իվ.—Դե, տեսնենք ինչ դուրս կգա Տատյանայի ջանքերից, ախար նա հանձն առավ:

Գ. ԳՅՈՒՂ.—(Թեյ է խմում) Յեղբայր, ի սեր աստծո, հողը քիչ է, վոչ թե տավար, ասենք, հավ ել չի կարելի պահել:

Ֆեոդ. Իվ.—Թե վոր գործը իմ ձեռքում լինի, (Բ. գյուղացուն) Դե ուրեմն այդպես, յեղբայր, մենք քեզ հետ խնամի դարձանք, խոսքը գիտես Տատյանայի մասին է:



Բ. ԳՅՈՒՂ.—Դե վոր յես ասեցի, խոսքիցս հետ դարձողը չեմ. թեկուզ առանց խմացնելու, միայն թե մեր գործը հաջողվեր:

ՏԵՍԻՒ 2

Նույնք յեվ խոնարարունի

ԽՈՂԱՐ.—(Մտնում է, մտիկ է ցայիս, վառարանի վրա ինչ վոր նեաններ է անում դեպի այն կողմը յեվ սկսում է սափ-սափ խոսել Ֆեոդոր Իվանիչի հետ: Շասախոս կլին է, անբավական): Այս բուսակներն մյուս խոհանոցից Սիմեոնին կանչեցին վերև, աղեն, մեկ էլ այն պարոնը, վոր միշտ վիճում է, ճաղատ գլխով, նստացրին նրան և պատվիրեցին Կապիչիչի փոխարեն փորձ անել:

ՖԵՈՒԴ. ԻՎ.—Ի՞նչ էս սուտ խոսում:

ԽՈՂԱՐ.—Այո, այո, հիմա Տանյային Յակոֆն է ասել:

ՖԵՈՒԴ. ԻՎ.—Չարմանալի յե:

ՏԵՍԻՒ 3

Նույնք յեվ կառապան

ՖԵՈՒԴ. ԻՎ.—Դու ի՞նչ էս ուզում:

ԿԱՌԱՊ.—(Ֆեոդոր Իվանիչին) Այդպես էլ ասացեք, վոր յես փորձված չեմ շների հետ ապրել: Թող ուրիշն ապրի, ով ուզում է, իսկ յես շների հետ ապրելու համաձայն չեմ:

ՖԵՈՒԴ. ԻՎ.—Ինչպե՞ս թե շների հետ:

ԿԱՌԱՊ.—Ներս ևն բերել մեր սենյակը վասիլ Լեոնիդովիչի կարգադրությամբ ցերեք մեծ շուն. կեղտոտեցին, վոռնում են, մոտենալ չի կարելի, կծոտում են, շատ չար են անտերները, մեկ էլ տեսար կուլ տվեցին: Կամ թե չե փայտով վոտքերը կջարգեմ:

ՖԵՈՒԴ. ԻՎ.—Այդ յե՞րբ են բերել:

ԿԱՌԱՊ.—Այսօր են բերել ցուցանանդեսից, առում են ինչ վոր թանգանոց բաներ են, գրողը տանի, կամ շներին մեր սենյակը, կամ մեզ կառապաններին հանգստություն: Այդպես էլ ասացեք:

ՖԵՈՒԴ. ԻՎ.—Հա, այդ անկարգություն է, կգնամ կխոսեմ:

ԿԱՌԱՊ.—Կարելի յեր այստեղ բերել, խոհարարուհու մոտ:

ԽՈՂԱՐ.—(Տախաղած) Այստեղ մարդիկ են ճաշում, իսկ դու ղո՞ւն էս ուզում կապել: Առանց այդ էլ...

ԿԱՌԱՊ.—Իսկ ինձ մոտ խալաթներ, կառքի ամեն տեսակ սարք ու կարգ, հետո էլ մաքրություն են պահանջում: Դե թող

տանեն դռնապանների սենյակը, կամ թե...

ՖԵՈՒԴ. ԻՎ.—Պետք է վասիլի Լեոնիդովիչին ասել:

ԿԱՌԱՊ.—(Բարկացած) Այդ շներին վրեցեղ կախ կտայիր, հետները ման կգայիր, թե չե ինքդ ել, կարծեմ, սիրում էս ձեռով ման գալ, այն գեղեցիկ ձիուն այնպես էս փչացրել, իսկ ձին ինչ ձի յեր, ախ, սա էլ կհանք ե: (Գնում է օրխաղաներով դուռը):

ՏԵՍԻՒ 4

Նույնք առանց կառապանի

ՖԵՈՒԴ. ԻՎ.—Այո, անկարգություն է, անկարգություն: (Գյուղացիներին) Դե, ուրեմն այդպես, աղերք, մնաք բարով:

ԳՅՈՒՂԱՅ.—Ատաված քեզ հետ:

ՖԵՈՒԴ. ԻՎ.—(Գնում է):

ՏԵՍԻՒ 5

Նույնք, առանց Ֆեոդոր Իվանիչի

(Հենց վոր Ֆեոդոր Իվանիչը գնում է, վառարանի վրայից լսվում է ծեղ խոնարարի մրմուռը)

Բ. ԳՅՈՒՂ.—Տեսա՞ր, ինչ զուգված է, կարծես եներալ ե:

ԽՈՂԱՐ.—Ել ի՞նչ ասել կուզե, առանձին սենյակ, վրացքը ամբողջովին աղոնց վրա յե, թե լը, շաքարը նույնպես, կերակուրըն էլ նրանց սեղանից:

ՀԻՆ. ԽՈՂ.—Ինչո՞ւ լավ չապրի քոփակը, լավ էլ տակու՞մ է արել:

Բ. ԳՅՈՒՂ.—Դե ով է վառարանի վրա:

ԽՈՂԱՐ.—Հենց այնպես, մի խեղճ մարդ: (Լուսքյուն):

Ա. ԳՅՈՒՂ.—Դե, դուք էլ ձեզ համար լավ կաք: Յես քիչ առաջ տեսա լավ ընթրեցիք, ինչպես կարգն է:

ԽՈՂԱՐ.—Գանգատվելու տեղ չունենք այդ բանի համար, խանումը ժլատ չե, կերակրի որերը մի-մի սպիտակ բուլկի, պաս որերը տոներին ձուկ, և ով էլ վոր կուզե, կարող է ուտիսի կերակուր ուտել:

Բ. ԳՅՈՒՂ.—Մի՞թե այստեղ պասերն ուտում են:

ԽՈՂԱՐ.—Ե՛, համարյա թե բոլորը, պաս են պահում միայն կառապանը, դա չե վոր յեկավ, մյուսը, ծերը, մեկ էլ Սիմեոնը, մեկ էլ յես ու ծախսարարուհին, թե չե մնացածները բոլորն էլ ուտիսուց են խժռում:

Բ. ԳՅՈՒՂ.—Իսկ ի՞նչըն:

ԽՈՂԱՐ.—Այ լավ դտար: Նա միտքը բերելն էլ մոռացել է, թե պասն ինչ բան է:



Գ. ԳՅՈՒՂ.—Ու, տեր աստված:

Ա. ԳՅՈՒՂ.—Աղաչական գործ է, գրքերից ե սովորել, դրա համար ել գիտություն կա:

Գ. ԳՅՈՒՂ.—Յերեկ որական ել միմի բոմբի հաց են ուտում:

ԽՈՂԱՐ.—Ո՛ր, բոմբի հաց, նրանք չեն ել տեսել քո բոմբի հացը: Մեկ նրանց կերակուրները տեսնելիք, ել ինչեր ասես, վոր չկան:

Ա. ԳՅՈՒՂ.—Աղա մարդկանց կերակուրները հայտնի բան է, մի տեսակ ոգաչին են:

ԽՈՂԱՐ.—Որպիչը-որպիչն են, բայց այ թե խժուում են:

Ա. ԳՅՈՒՂ.—Լավ խնորժակ ունեն կերեի:

ԽՈՂԱՐ.—Դրա համար ել խմում են անուշ-անուշ գինիներ, արաղներ, ֆշֆշացող խմիչքներ, ամեն կերակրին իր տեսակը, ուտում են ու խմում են, ուտում են ու խմում:

Ա. ԳՅՈՒՂ.—Սանումդ, ասել է, թե կերակուրները բաժին բաժնի հետևից բերում է:

ԽՈՂԱՐ.—Յեզ գիտե՞ք, ինչ չափազանց են ուտում, նրանք հո այնպես չեն, վոր նստեն, ուտեն, խաչակնքեն ու վեր կենան, ալ անհաշիվ ուտում են ու ուտում:

Բ. ԳՅՈՒՂ.—Ասա ինչպես խոզերը չորս վոտքով դաշտն ընկնեն ելի:

ԳՅՈՒՂԱՅ.—(Ծիծաղում են):

ԽՈՂԱՐ.—Առավոտ, տեր իմ աստված, հենց վոր աչքերը բաց են անում իսկույն սամավար, թեյ, սուրճ, շոկոլադ, յերկու սամավար խմում են, յերրորդը պատրաստիր: Հետո նախաճաշ, հետո ճաշ, դարձյալ սուրճ, մի քիչ կողքի չեն ընկնում, ելի թեյ, վրան ել տեսակ-տեսակ ուտելեղեններ, կոնֆետներ, մոլորապաներ—վերջ չկա, անկողնում պառկած ժամանակ ել ուտում են:

Գ. ԳՅՈՒՂ.—Ա՛յ թե ինչ: (Ծիծաղում է):

Ա. ԳՅՈՒՂ. և Բ. ԳՅՈՒՂ.—Քեզ ինչ վոր:

Գ. ԳՅՈՒՂ.—Գոնե մի որ աղպես ապրելիք:

Բ. ԳՅՈՒՂ.—Ե, ապա գործերը յերբ են անում:

ԽՈՂԱՐ.—Ի՞նչ գործեր ունեն, վոր անեն: Թղթախաղ և ֆորտոպիան, ալք է նրանց գործը: Որիորդը ախպես ե լինում, վոր հենց աչքերը բաց ե անում թե չե՛ ֆորտոպիանի մոտ, և աժուում ե ու աժուում: Իսկ են մյուսը, վոր ապրում ե նրանց մոտ,

վարժուհին, լինում ե, վոր կանգնում սպասում ե թե յերբ պետք ե աղատ լինի ֆորտոպիանը և հենց վոր նա վեր ե կենում, դա յե սկսում գնկգնկոցը: Կամ լինում ե յերկու ֆորտոպիան են դնում ու յերկ-յերկու հոգի՛ չորս ձեռքով զլզլացնում են: Ահպես են գոռում գոչյուն հանում, վոր ձայնը գալիս ե մինչև այստեղ:

Գ. ԳՅՈՒՂ.—Ա՛յ տեր աստված:

ԽՈՂԱՐ.—Այս ե միայն նրանց գործը. ֆորտոպիան, և հենց վոր հավաքվեցին, իսկույն կարտ, գինի, ծխել և այսպես կերթաւամբողջ գեշերը: Առավոտը յերբ վեր կացան, ելի ուտել խմելը կսկսեն:

ՏԵՍԻԼ 6

Նույնի յեվ Սիմեոնը

ՍԻՄԵՈՆ—Բարի իրեկուն ձեզ:

Ա. ԳՅՈՒՂ.—Ասու բարին, նստիր:

ՍԻՄԵՈՆ—(Մոտենում ե սեղանին) Շատ շնորհակալ եմ:

Ա. ԳՅՈՒՂ.—(Թեյ ե ածում Սիմեոնի համար):

Բ. ԳՅՈՒՂ.—Ո՛ւր եյիր:

ՍԻՄԵՈՆ—Վերեն եյի:

Բ. ԳՅՈՒՂ.—Ի՞նչ կար, ինչպես են գործերը:

ՍԻՄԵՈՆ—Չեմ հասկանում, չգիտեմ ինչ ասեմ:

Բ. ԳՅՈՒՂ.—Ի՞նչ է, ինչ բան ե վոր:

ՍԻՄԵՈՆ—Յես ել չգիտեմ ինչ ասեմ, իմ մեջ ինչ վոր ույժ են գտել, փորձում են, չեմ հասկանում: Տատյանան ասում է, ինչ վոր ասում են արա, մեր գյուղացոց գործը գլուխ կրերենք, ասում է:

Բ. ԳՅՈՒՂ.—Ի՞նչպես պետք ե գլուխ բերի:

ՍԻՄԵՈՆ—Նրանից բան չեմ հասկանում, չի ասում, միայն ասում ե արա, ինչ-վոր պատվիրում եմ:

Բ. ԳՅՈՒՂ.—Ի՞նչ անես:

ՍԻՄԵՈՆ—Հիմա վոչինչ, նստացրին ինձ, ճրագները հանցըրին, պատվիրեցին քնել, իսկ Տատյանան այնտեղ ել թագ կացավ, նրանք չեն տեսնում, յես տեսնում եմ:

Բ. ԳՅՈՒՂ.—Ի՞նչ բան ե դա, ինչո՞ւ համար ե:

ՍԻՄԵՈՆ—Աստված գիտե, յես չեմ հասկանում:

Ա. ԳՅՈՒՂ.—Պարզ բան է, ժամանակ անցկացնելու համար:



Բ. ԳՅՈՒՂ.—Դե յերևի այդպիսի բաները մեր խելքի բանը  
չեն, դու այն ասա, փող շատ առել ես:

ՄԻՄԵՈՆ—Չեմ առել, բոլորը նրանց մոտ է, 28 բուրբի կը  
լինի:

Բ. ԳՅՈՒՂ.—Ե, լավ է, յերբ վոր աստված կտա, հողի գոր-  
ծը կվերջացնենք, Միմեոն, քեզ տուն կտանեմ:

ՄԻՄԵՈՆ—Շատ լավ կլինի:

Բ. ԳՅՈՒՂ.—Յերես ես առել, կարծեմ, հող վարել չես ու-  
զում:

ՄԻՄԵՈՆ—Հենց հիմա ել ուզում եմ, տար, հսձել, վարել,  
այդ ամենը ձեռքիցս կզս:

Ա. ԳՅՈՒՂ.—Այդ բաները, յերևի քաղաքի կյանքից հետո  
չեն դուր գա քեզ:

ՄԻՄԵՈՆ—Վոչինչ, գյուղում ել կարելի չէ ապրել:

Ա. ԳՅՈՒՂ.—Այ, քեռի Միտրին քո տեղին աչք ունի, ու-  
զում է աղայի կյանք վարել:

ՄԻՄԵՈՆ—Չե, քեռի Միտրի, կձանձրացնե, այդպես յե-  
րևում է, թե հեշտ է, բայց այս ու այն կողմ վազելն ել հեշտ  
բան չե, մարդ գլուխը կորցնում է:

ԽՈՂԱՐ.—Այ թե դու, քեռի Միտրի, տեսնելիք սրանց պա-  
րահանդեսները. իսկ վոր կղարմանայիր:

Գ. ԳՅՈՒՂ.—Ի՞նչ, հենց ուտում են ու ուտում:

ԽՈՂԱՐ.—Ի՞նչ ես ասում, մեկ տեսնելիք թե ինչ եր, ինձ  
Ֆեոդոր Իվանիչը տարավ, յես մտիկ տվի, խանումներ ինչքան  
կուղես, այնպես վոտքից գլուխ դուզված-զարգարված էյին, վոր  
ասել չի լինի, իսկ մինչև այստեղերը բաց էյին, թեվերն ել  
էյին բաց:

Գ. ԳՅՈՒՂ.—Այ տեր աստված:

Բ. ԳՅՈՒՂ.—ԹՖյճ, ինչ խայտառակություն:

Ա. ԳՅՈՒՂ.—Բաս չեն մրսում:

ԽՈՂԱՐ.—Յես ել, քեռի, լավ մտիկ տվի, ի՞նչ բան է, տե-  
սա, բոլորը մերկ—կհավատաս, պառավները, այ մեր խանումը  
թոռների տեր է, նա ել եր մերկացել:

Գ. ԳՅՈՒՂ.—Ո՞ր տեր աստված:

ԽՈՂԱՐ.—Դեռ այդ ի՞նչ է վոր, հենց յերաժշտությունը  
խփում է թե չե, իսկույն պարոնները ամեն մեկը մոտենում է  
իրենին, փաթաթվում է և պտույտ-պտույտ ման ածում:

Բ. ԳՅՈՒՂ.—Պառավներն ել:

ԽՈՂԱՐ.—Պառավներն ել:

ՄԻՄԵՈՆ—Չե, պառավները նստում են:

ԽՈՂԱՐ.—Ի՞նչպես չե, յես աչքովս եմ տեսել:

ՄԻՄԵՈՆ—Դե յես ասում եմ:

ԾԵՐ. ԽՈՂԱՐ.—(Գլուխը դուրս հանելով յեվ խոսոյս) Դա պո-  
կա մազուրկա չե, ախճախը չգիտե. այդպես պարում են:

ԽՈՂԱՐ.—Ել դու պարպաշի, ձեռք կտրիք, վճյ, այդ ով է  
գալիս:

### ՏԵՍԻԼ 7

Նույնի յեվ Գրիգորիյ

ԾԵՐ. ԽՈՂ.—(Արագ կերպով քազնվում է):

ԳՐԻԳՈՐ.—(Խոհարարուհուն) Թթու կաղամբից տուր, շու-  
տով:

ԽՈՂԱՐ.—Նոր եր մառանից յեկա, կլի գնա, ճւճ համար է:

ԳՐԻԳՈՐ.—Որիորդների համար է, Միմեոնի հետ ուղար-  
կիր, շուտ արա, յես ժամանակ չունեմ:

ԽՈՂԱՐ.—Այ, քաղցր այնքան են ուտում, վոր բողազնե-  
րից ցած չի գնում և թթուի զոռին են տալիս:

Ա. ԳՅՈՒՂ.—Մաքրելու համար կերևի:

ԽՈՂԱՐ.—Հա, իսկ վոր, տեղը դատարկում են, վոր ելի  
ուտեն:

(Վերցնում է պնակը յեվ գնում է):

### ՏԵՍԻԼ 8

Նույնի, առանց խոհարարուհու

ԳՐԻԳՈՐ.—(Գլուղացիներին) Այ ինչ լավ են տեղավորվել, սը-  
րանց տեսեք, թե խանումը կիմանա, այն ոյինը կհանի ձեր գըլ-  
խին, վոր առավոտվանը կմոռանաք: (Միծաղում յեվ գնում է):

### ՏԵՍԻԼ 9

Յերեք գլուղացիներ, Սիմեոն յեվ ծե Խոհարար

Ա. ԳՅՈՒՂ.—Դրուտա է, առավոտը են ոյինը հանեց մեր  
գլխին, վոր աստված ազատե:

Բ. ԳՅՈՒՂ.—Աղեն ել ուզում եր այն ժամանակ պաշտպա-  
նի, համա տեսավ, վոր կինը տունն իրար է խառնել, դուռը վրա  
դրեց ու ներս քաշվեց, յանի ինչ ուզում էս արա:

Գ. ԳՅՈՒՂ.—(Ձեռքը քափ սալով) Ե՛հ, բոլորը մեկ է, իմ  
պառավն ել, ասենք յերբեմն այնպես է տաքանում, վոր ել մի



ասեք, յես ել խրճիթից դուրս եմ գնում. գլուխը քարովը թե  
վոր մնար, խաչերկաթով գլուխդ կջարդի: Տեր աստված:

ՏԵՍԻՒ 10

Նույնք յեվ ՅակոՅ

ՅԱԿՈՅ—(Ներս ե վագում դեղատուր ձեռքին) Մյոմա, վա-  
զիր դեղատուն, շուտ, պարաշողներ խանութի համար:

ՄԻՄԵՈՆ—Ախար աղեն հրամայեց տանից տեղ չգնալ:

ՅԱԿՈՅ—Դեռ ժամանակ ունես: Գո գործը դեռ թեյից հե-  
տո յե: Բարի իրիկունն ձեզ:

Ա. ԳՅՈՒՂ.— Աստձու բարին արեդ, նստիր:

ՄԻՄԵՈՆ—(Գնում է):

ՏԵՍԻՒ 11

Նույնք, առանց Սիմեոնի

ՅԱԿՈՅ—Ժամանակ չունեմ, դե լավ. մի բաժակ ածեք կը-  
խմեմ ընկերության խաթրու:

Ա. ԳՅՈՒՂ.— Մենք այն եյինք ասում, թե ինչպես ձեր խա-  
նութը այս առավոտ իրան շատ գոռոզ պահեց:

ՅԱԿՈՅ—Ո, տաքացող ե, աստված ազատի, այնպես թուն-  
դըն ե, վոր ինքն իրա գլուխը կորցնում է: Յերբեմն ել բարկու-  
թյունից լաց ե լինում:

Ա. ԳՅՈՒՂ.— Հա, ինչ ելի ուղում հարցնել, խոսք որինակ,  
խանութդ ինչ-վոր այս առավոտ ասում եր մակրոբներ—մակ-  
րոբներ, ասում եր տուն բերին, այդ ինչի՞ մասին եր ասում  
մակրոբներ:

ՅԱԿՈՅ—Հա, դա միկրոգներ ժասին եր ասում, դրանք,  
ասում են, ճիճուներ են, նրանցից իբր հիվանդություններ են  
առաջ գալիս: Յեվ իբր թե ձեր վրա կան դրանցից: Չեզանից  
հետո լվացին, սրբեցին, շուր փչեցին, վորտեղ վոր կանգնած ե-  
յիք. այնպիսի մի դեղ կա, վոր նրանք բոլորը սատկում են:

Բ. ԳՅՈՒՂ.— Ճիճուները, ուր են թե մեր վրա կան:

ՅԱԿՈՅ—(Խմում է քեյր) Դրանք ասում են, այնպիսի մանր  
բաներ են, վոր ապակով ել չենք տեսնի:

Բ. ԳՅՈՒՂ.— Բա նա ի՞նչ գիտի, թե մեր վրա կան այդ  
անտերներից, կտրելի յե թե իրա վրա ավելի կան:

ՅԱԿՈՅ—Դե արի ու իրան հարցրու:

Բ. ԳՅՈՒՂ.— Իմ խելքով դրանք դատարկ բաներ են:

ՅԱԿՈՅ—Հայտնի բան ե, վոր դատարկ են, բժիշկներն են:

կլի, մի բան մոզոնեկ են, թե չե ինչձե համար պետք եր նրանց վորդ  
տալ: Ահա մեզ մոտ ամեն որ գալիս ե մեկը: Յեկավ, խոսեց ե  
մի տասանոց բուռը կղնեն:

Բ. ԳՅՈՒՂ.— Սուտ...

ՅԱԿՈՅ—Մեկն ել կա, վոր ստանում ե հարյուրանոց:

Ա. ԳՅՈՒՂ.— Ի՞նչ, հարյուրանոց:

ՅԱԿՈՅ—Հարյուրանոց, դու ասում ես հարյուրանոց, հա-  
զար ել ե վերցնում, յերբ քաղաքից դուրս ե գնում: Կտաս մի  
հազար, ասում ե, կգամ, չես տա, դնան ու մեռիր:

Գ. ԳՅՈՒՂ.— Ո՞չ տեր աստված:

Բ. ԳՅՈՒՂ.— Ի՞նչ ե վոր, նա մի բան գիտե:

ՅԱԿՈՅ—Յերեկ գիտե, յես ծառայում եյի առաջ մի դենե-  
րալի մոտ Մոսկվայի մոտերը: Մի բարկացկոտ մարդ եր, գո-  
ռոզ եր չափազանց զենեքալը: Մի անգամ հիվանդացալ նրա  
աղջիկը, իսկույն ուղարկեցին այդ բժշկին կանչելու: Հազար  
բուրլի ասում ե կտաք, կգամ: Դե, համաձայնեցին, լեկավ: Չը  
գիտեմ ինչ պատահեց, նրան չարացրին, ե ի՞նչ, սկսեց գորգո-  
ռալ, ըղավել, ճղավել զենեքալի վրա: Մ՛յ, ասում ե, դուն ինձ  
այդպե՞ս ես հարդում, ասում ե, վոր այդպես ե՛լ չեմ բժշկի: Գե-  
ներալը իբր գոռոզությունը մոռացավ, ամեն կերպ աղաչում եր,  
մի թողնիր մեզ...

Ա. ԳՅՈՒՂ.— Իսկ հազարը ավե՞ց:

ՅԱԿՈՅ— Բա ի՞նչ արեց:

Բ. ԳՅՈՒՂ.— Այ քեզ անտեր փողեր, դյուղացին ինչեք կա-  
ներ այդ փողերով:

Գ. ԳՅՈՒՂ.— Ե, դա դատարկ բան ե, իմ ել վոտքս մի ժա-  
մանակ դուրս ընկավ, բժշկեցի, բժշկեցի մի հինգ բուրլի ծախս  
զնաց, բան չգառավ, թողի բժշկելը, ինքն իրան լավացավ:

ՄԵՐ ԽՈՂ.— (Վառարանի վրայից հագում է):

ՅԱԿՈՅ— Ելի այստե՞ղ ե մեր պատվելին:

Ա. ԳՅՈՒՂ.— Այդ ո՞վ ե այդ մարդը:

ՅԱԿՈՅ— Մեր աղի խոհարարն եր, Լուկերիայի մոտ եր գա-  
լիս:

Ա. ԳՅՈՒՂ.— Պովեր ե, ասել ե, ի՞նչ ե, այստեղ ե ապրում:

ՅԱԿՈՅ— Չե, այստեղ թույլ չեն տալիս, մի որ այստեղ, մի  
որ այնտեղ, լեռեք կոպեկ թե ունի գնում ե ապաստարան, թե  
խճում, արբում ե, գալիս ե այստեղ:

Բ. ԳՅՈՒՂ.— Բա ինչպե՞ս պիտի լինի:



ՅԱԿՈՑ—Դե, այնպես, թուլացել ե, և գիտես ինչ մարդ եր, ադա յեր, ադա. վոսկի ժամացույց եր կախում, քառասուն բուր-լի ոսճիկ եր ստանում. իսկ հիմա վազուց քաղցածությունից կմեռնեք, յեթե Լուկերիան չլինեք:

ՏԵՍԻՒ, 12

Նույնք յեվ խոհարարուհի (կաղամբով)

ՅԱԿՈՑ—(Լուկերիային) Ինչպես տեսնում եմ, Պավել Պետ-րովիչն ելի այստեղ ե:

ԽՈՂԱՐ.— Բա սէր գնա խեղճը, դուրսը պետք ե սառչի, ինչ ե:

Գ. ԳՅՈՒՂ.— Այ թե ինչ ե անում խմիչքը, արաղը, ասենք... (Շրխկացնում ե լեզուն ցավակցությամբ):

Բ. ԳՅՈՒՂ.— Հայտնի բան ե, մարդն ամբանում ե ինչպես քար և թուլանում ե ինչպես ջուր:

ԾԵՐ ԽՈՂ.— (Յած ե գալիս վառարանից ձեռքեր յեվ վոսկեր դողողացնելով) Լուկերիա, ասում եմ տո՛ւր մի. գավաթ:

ԽՈՂԱՐ.— Ո՛ւր ես քշում, յես քեզ այնպիսի մի գավաթ կտամ, վոր...

ԾԵՐ ԽՈՂ.— Ասածուց վախեցիր, յես մեռնում եմ, չեղ-բայրներ, մի շահանոց:

ԽՈՂԱՐ.— Ասում եմ բարձրացիր վառարանի վրա:

ԾԵՐ ԽՈՂ.— Լուկերիա. կես գավաթ, Գրիստոսի սիրուն, ասում եմ, հասկանում ես, հանուն Գրիստոսի:

ԽՈՂԱՐ.— Գնա, գնա, այ, ուզում ես թեյ խմիր:

ԾԵՐ ԽՈՂ.— Թեյն ինչ ե, թուլ, դատարկ խմիչք, արաղ սուր, թեկուզ մի կուճ, Լուկերիա:

Գ. ԳՅՈՒՂ.— Ախ, խեղճ մարդ, ինչպես ե աղաչում:

Բ. ԳՅՈՒՂ.— Դե լավ, տուր, ելի:

ԽՈՂԱՐ.— (Նեւեմվ ե բերում քարիփից յեվ անում ե նրան մի գավաթ արաղ) Առ, ահա, ել չեմ տար:

ԾԵՐ ԽՈՂ.— (Վրա յե պրծնում, առնում ե ձեռքից դողողա-լով) Լուկերիա, խոհարարուհի, յես կխմեմ, դու հասկացիր...

ԽՈՂԱՐ.— Դե լավ, լավ, մի խոսիր, քաշվիր վառարանի վրա և հոտը չեքես:

ԾԵՐ ԽՈՂ.— (Բարձրանում ե վառարանի վրա, չղաղաբելով քրի սակ խոսելուց յեվ մըմըբալուց):

Բ. ԳՅՈՒՂ.— Դե ել ի՞նչ անես, մարդը բոլորովին հալից ընկել ե:

Ա. ԳՅՈՒՂ.— Դրուստ ե, մարդկային թուլություն:

Գ. ԳՅՈՒՂ.— Ել ի՞նչ ասես:

ԾԵՐ ԽՈՂ.— (Տեղավարվում ե յեվ բոլոր ժամանակ մեմում):

Բ. ԳՅՈՒՂ.— Հա, ինչ եյի ուզում քեզ ասել, այդ աղջիկը, վոր այստեղ ձեզ մոտ ապրում ե, մեր գյուղացի Ակսինյայի աղ-ջիկը, ինչպես ե պահում իրան, աղնի՞վ ե, մաքճւր ե:

ՅԱԿՈՑ— Աղջիկը լավ աղջիկ ե, գովելու արժանի:

ԽՈՂԱՐ.— Յես քեզ քեռի, ճիշտը կասեմ, յես այստեղի բանը լավ գիտեմ: Ուզում ես նրան սղալիք առնել, առ, շուտով քանի չի փչացել, թե չե, շատ հետու չե նրա գլխին մի փորձանք կբերես:

ՅԱԿՈՑ— Այդ ուղիղ, վոր այդպես ե: Այ, հերու մեղ մոտ Նատալիա անունով մի աղջիկ կար, բոլորովին կորավ, փչացավ. սյ զբա պես: (Յույց ե ցալիս խոհարարին):

ԽՈՂԱՐ.— Դրա համար ել մեր աղջիկներն այստեղ այնքան են կորչում, վոր հաշիվ ու համար չկա, ամենքին քաշում ե այս-տեղի թեթե աշխատանքն ու համեղ կերակուրները, և մեկ ել տեսար, այդ համեղ կերակուրների հետ ել աղջկա գլխին մի փորձանք բերին: Փորձանքից հետո ել այդ տեսակն այլ ևս հար-կավոր չե, հանգա, դուրս, և տեղը մի նորը կբերես: Այդպես ել խեղճ Նատաշան, փորձանքի մեջ ընկավ. իսկույն վաճառեցին: Ծնեց: հիվանդացավ և անցյալ գարնանը հիվանդանոցում ել մեռավ: Յեվ ի՞նչ աղջիկ եր:

Գ. ԳՅՈՒՂ.— Ոյ տեր աստված, թույլ արարածներ են այդ աղջիկները. պետք ե խղճալ նրանց:

ԾԵՐ ԽՈՂ.— Ինչպես չե, խղճում են այդ անաստվածները: (Վառարանի վրայից կախում ե վոսկեր) յես խոհանոցում յե-րեսուն տարի տապալկվեցի և սյ, չերբ անպետք դարձա, սատ-կիր շան պես. ինչպե՞ս չե, խղճում են...

Ա. ԳՅՈՒՂ.— Այդ դրուստ ե, դա սովորական ե:

Բ. ԳՅՈՒՂ.— Յերբ խմում եյին, ուտում եյին, քեզ ասում եյին աղավնյակ, չերբ խմեցին, կերան՝ մնաս բարով ավանակ:

Գ. ԳՅՈՒՂ.— Ո՛չ տեր աստված:

ԾԵՐ ԽՈՂ.— Շատ ես հասկանում դու, ի՞նչ ե սոսեյ ա յա բամոն, ինչ ե ընել-կողպս և յես մշտական պատրաստում եյի այդ կերակուրները: Ա՛յ վաղ ժամանակ, կայսրն ել ե կերել իմ յեփած կերակուրը: Իսկ հիմա անպետք դարձա այդ անաստված-ներին: Բայց յես ելի իմա կանեմ:

ԽՈՂԱՐ.— Դե դե, շատ խոսեցիր, սյ քեզ, քաշվիր անկյունը,



այնպես վոր քեզ չտեսնեն, թե չե Ծեռողը Իվանիչը կամ մի ուրիշը քեզ կտեսնի և ինձ ել քեզ հետ բոլորովին դուրս կանեն: (Լուսքյուն)

ՅԱԿՈՅ—Դուք դիտե՞ք մեր գլուղը, Վաղնեսնակայա:

Բ. ԳՅՈՒՂ.—Ինչպես չդիտենք, մեզանից 17 վերստ է, ավելի չե, գետով ավելի մոտ է: Ի՞նչ է, հոգ ունիս վերցրած:

ՅԱԿՈՅ—Ձե, յեղբայրս ունի հոգ, իսկ յես փող եմ ուղարկում, ինքս թեպետ այստեղ եմ, բայց տան համար հողի չեմ տալիս:

Ա. ԳՅՈՒՂ.—Դուրստ է:

Բ. ԳՅՈՒՂ.—Ուրեմն Ակսիմը քո չեղբայրն է:

ՅԱԿՈՅ—Ինչպես չե, հալալ չեղբայրս է, ես մյուս ծալրին:

Բ. ԳՅՈՒՂ.—Գիտեմ, դիտեմ, չերրորդ հացաթն է:

ՏԵՍԻՒ 13

Նույնի յեվ Տանյա

ՏԱՆՅԱ.—(Նեսու ե վազում) Յակոֆ Իվանիչ, ի՞նչ է դուք այստեղ հովանում եք: Կանչում են:

ՅԱԿՈՅ—Իսկուզն, ինչ կա վոր:

ՏԱՆՅԱ.—Ձեֆկան վոտնում է, ճաշել և ուղում, իսկ խախումը ձեզ է հայհոյում, ի՞նչ անդուժ է, ասում է, խեղճ շանը, ասում է, վաղուց պեք էր սրան ճաշ տալ, իսկ ճաշը դեռ չեն բերում: (Միծաղում է):

ՅԱԿՈՅ.—(Ուզում է գնալ) Ո՛չ, բարկացած ե. ելի մի բան չպատահի:

ԽՈՂՍՐ.—(Յակոֆին) Կաղամբը վերցրեք:

ՅԱԿՈՅ—Տուր, տուր: (Առնում է կաղամբը յեվ գնում):

ՏԵՍԻՒ 14

Նույնի, առանց Յակոֆի

Ա. ԳՅՈՒՂ.—Այդ ո՞վ պիտի ճաշի հիմա:

ՏԱՆՅԱ.—Շունը, խանութի շունը, (նսում է, ձեռք գցում քեյամանին) թեյ կո՞, թե վոչ, թե չե յես ելի յեմ բերել: (Թեյ է գցում):

Բ. ԳՅՈՒՂ.—Շունը պիտի ճաշի:

ՏԱՆՅԱ.—Հապա ինչպես, առանձին կոտլետ են պատրաստում, վոր շատ ճարպոտ չլինի, յես ել լվանում եմ այդ շան սպիտակեղենը:

Գ. ԳՅՈՒՂ.—Ո՛չ տեղ ասոված:

ՏԱՆՅԱ.—Ինչպես այն պարոնը, վոր շանը թաղեց:

Բ. ԳՅՈՒՂ.—Այդ ի՞նչպես թե:

ՏԱՆՅԱ.—Այնպես պատճում եր մեկը. սատկում է նրա գամբուրը, այդ պարոնի: Նա ել ահա ձմեռ որով կառք է նրստում, գնում է շանը թաղելու: Թաղում է, ու հետ դառնալիս ել կառքի վրա նստած է լինում: Իսկ ցուրտը, ել մի հարցնի: Կառապանի քթից ջուրը վազում է: Նա ել թաշկինակը հանում, սրբում է: Տվեք ամեն: (Թեյ է ամում) Գթից ջուրը վազում է, նա ել թաշկինակով սրբում է. պարոնը, վոր տեսնում է, ասում է, «ի՞նչ է, ասում է, ինչո՞ւ յես լաց լինում» իսկ կառապանը ասում է, ի՞նչպես լաց չլինեմ, աղա, ինչպես լավ շուն եր խեղճը: (Միծաղում է):

Բ. ԳՅՈՒՂ.—Իսկ ինքը, ո՞վ պիտե մտածում եր թե՛ վոչ թե շունդ, դու ել վոր սատկես, յես լաց չեմ լինի: (Բեհզում է):

ՄԵՐ ԽՈՂ.—Այդ դրուստ է, ուղիղ է...

ՏԱՆՅԱ.—Լավ, պարոնը տուն է գալիս և իր տիկնոջը ասում է, «այ թե ինչ բարի կառապան ենք ունեցել, նա ամբողջ ճանապարհին լաց եր լինում, աչքան վոր ցավում եր մեր շնիկի համար»: «Կանչեցեք նրան, ահա-ասում է, մի արաղ խըմիր, այս ել քեզ մի մանեթ փող-ասում է: Հիմա ել մեր խանութն է, թե Յակոֆը շան մասին չի ցավում:

ԳՅՈՒՂԱՅԻՆԵՐ.—(Բեհզում են):

Ա. ԳՅՈՒՂ.—Այ քեզ բան:

Բ. ԳՅՈՒՂ.—Այ թե ինչ:

Գ. ԳՅՈՒՂ.—Վայ աղջիկ, դու մեկ ինչ ծիծաղացրիր:

ՏԱՆՅԱ.—(Խառնյալ քեյ է ամում) Ելի անուշ արեք. ա՛յ, այդ է, վոր այդպիսի կյանքը լավ է չեղեվում. բայց չերեմն զգվելի յե այդ կեղտոտությունները տանելը, թյու, գլուղում ավելի լավ է:

ԳՅՈՒՂԱՅԻՆԵՐ.—(Բաժակները օրում են գլխավայ):

ՏԱՆՅԱ.—(Լցնում է) Անուշ արեք, Յեֆիմ Անտոնիչ, յես կածեմ, Միտրի Վասիլիչ:

Գ. ԳՅՈՒՂ.—Դե լավ, ամիր:

Ա. ԳՅՈՒՂ.—Դե, ինչպե՞ս է, խելոք աղջիկ, մեր գործերի դրությունը:

ՏԱՆՅԱ.—Վոչինչ, առաջ է գնում:

Ա. ԳՅՈՒՂ.—Սիմեոնը պատմեց:

ՏԱՆՅԱ.—(Շապ) Պատմեց:



Բ. ԳՅՈՒՂ. — Հա, պատմեց, բայց բան չհասկացանք:

ՏԱՆՅԱ.— Այժմ չի կարելի ասել, միայն կաշխատեմ, աշխատում եմ, աշխատում եմ, այ, այստեղ է ձեր թուղթը: (Յույց ե տալիս բուրբուր գոգնոցի օտկ) միայն թե ոյինը գլուխ դար, այ լավ բան կլինեք:

Բ. ԳՅՈՒՂ. — Տես, թուղթը չկորցնես, դրան ել փող ե տված:

ՏԱՆՅԱ.— Հանգիստ չեղեք, միայն այն ե, վոր նա ստորագրել:

Գ. ԳՅՈՒՂ. — Հապա ել ի՞նչ, ստորագրել ասենք և շարաշ: (Բաժակը օրջում ե) ել հերիք ե:

ՏԱՆՅԱ.— Կստորագրել, կստորագրել, կտեսնեք, ելի անուշ արեք: (Ածում ե):

Ա. ԳՅՈՒՂ. — Միայն թե աշխատիր հողի վաճառումը գլուխ դա, մեր հասարակութունով քեզ կարող ենք նշանել, պատկել: (Թեյից նրաժամովում ե):

ՏԱՆՅԱ. (Ածում ե յեվ տալիս) Անուշ արեք:

Գ. ԳՅՈՒՂ. — Միայն թե գործը գլուխ բեր, քեզ կպատկենք ել, հարսանիքիդ ել, ասենք, կգամ պարելու, թեև կյանքիս մեջ պարած չկամ, համա պիտի պարեմ:

ՏԱՆՅԱ.— (Միծաղում ե) Յես հույսով եմ, կլինի: (Լուսքյունն):

Բ. ԳՅՈՒՂ. — (Մտիկ տալով Տանյային) Այդ այդպես, համա դու գյուղական աշխատանքի համար պետք կգան:

ՏԱՆՅԱ.— Յես, ի՞նչ ե, դուք կարծում եք թե յես ույժ չունեմ: Դուք մի տեսնելիք, թե յես ինչպես եմ խանութին ձեռ տալիս, գյուղացի տղամարդն ել չի կարող այդպես ձեռ տալ:

Բ. ԳՅՈՒՂ. — Այդ ինչո՞ւ ես նրան ձեռ տալիս:

ՏԱՆՅԱ.— Այդ այնպես, ոսկոռներով ե շինած, ինչպես կուրտկա, մինչև այստեղը: Թեկերը քաշում ես ու ձգում, ինչպես լծելիս փորագրաչը ձգում են ձեռքերի մեջ թքելով:

Բ. ԳՅՈՒՂ. — Հենց իմանաս բեռ ես կապում, ելի՞:

ՏԱՆՅԱ.— Այո, այո, հենց այդպես, համա հո չեմ կարող վոտքս դեմ անել: (Միծաղում ե):

Բ. ԳՅՈՒՂ. — Իսկ ինչո՞ւ ես դու նրան հույ տալիս:

ՏԱՆՅԱ.— Ա՛յ ինչու:

Բ. ԳՅՈՒՂ. — Իցե թե նա խոստացած ունի:

ՏԱՆՅԱ.— Չե, գեղեցկության համար:

Ա. ԳՅՈՒՂ. — Ուրեմն փորը պետք ե դուրս ցցվի ձեի համար:

ՏԱՆՅԱ.— Այնպես եմ քաշում, վոր նրա աչքերը ճոթում են, դեռ ել ասում ե, «քաշիր» ձեռքերս այրվում են քաշելուց, ելի դուք ասում եք թե ույժ չունեմ:

ԳՅՈՒՂԱՅԻՆԵՐ.— (Միծաղում են յեվ գլուխները օտրծում):

ՏԱՆՅԱ.— Բայց պետք ե ասեմ, վոր յես շատ խոսեցի (Վազում ե ծիծաղելով):

Գ. ԳՅՈՒՂ. — Այ աղջիկ, ինչ ծիծաղեցրեց:

Ա. ԳՅՈՒՂ. — Յեվ ինչպես ել կոկլիկն ե:

Բ. ԳՅՈՒՂ. — Վոչինչ:

ՏԵՍԻՒ 15

Յերեք գյուղացիներ, խոհարարուհի, ծեր խոհարար (վառարանի վրա) մեկում են Սախասով յեվ Վասիլիյ Լեմնիպիչը. Սախասովի ձեռքին մի բեյի գդալ

ՎԱՍ. ԼԵ.— Վոչ թե ճաշ եր, այլ déjeuner dinatoire. Չեղ ասեմ, հիանալի նախաճաշ եր. խոզուկի ապուխտ՝ սքանչելի: Ռուս լեն հիանալի կերակուրներ ե տալիս: Յես հենց այս բոպեյին յեկա: (Տեսնելով գյուղացիներին) ա՛, գյուղացիները դարձյալ այստեղ են:

ՍԱՍԱՍ. — Լավ, լավ, այդ ամենը հիանալի յե, բայց մենք յեկանք բան պահելու, վորտե՞ղ պահենք:

ՎԱՍ. ԼԵ.— Ներեցեք, յես այս բոպեյին, (խոհարարուհուն) վորտե՞ղ են շները:

ԽՈՂԱՐ.— Կառապանների սենյակումն են, միթե՞ կարելի յե այստեղ...:

ՎԱՍ. ԼԵ.— Կառապանների սենյակում, դե լավ:

ՍԱՍԱՍ. — Յես սպասում եմ:

ՎԱՍ. ԼԵ.— Ներողութուն, ներեցեք: Հ՞ը, ի՞նչ ե, պահե՞նք: Հա Սերգեյ իվանիչ, անա թե ինչ եմ ասում, յեկեք պահենք այս գյուղացիներից մեկի գրպանում, այ, թեկուզ սրա: Ե՛, ծերուկ, հ՞ը ինչ ե, ո՞ւր ե գրպանդ:

Գ. ԳՅՈՒՂ.— Գրպանս, ի՞նչ պիտի անես իմ գրպանը: Տեսնում ես, գրպանը, իմ գրպանում փող կա:

ՍԱՍԱՍ. — Ո՞ւր ե քո քսակը:

Գ. ԳՅՈՒՂ. — Քեզ ինչ:

ԽՈՂԱՐ.— Մի վախենա, սա յերիտասարդ պարոնն ե:

ՎԱՍ. ԼԵ.— (Քեզում ե) Դուք գիտե՞ք, նա ինչո՞ւ այդպես վախեցավ: Յես իսկույն կասեմ, նա շատ, շատ փող ունի: Հ՞ը, ի՞նչ ե:



ՍՍԽՍՏ.—Այո, այո, հասկանում եմ. այ թե ինչ, դուք նրանց խոսեցրեք, մինչև վոր յես անհկատելի կերպով գդալը կգնեմ ան, այն պայտուսակի մեջ, այնպես, վոր նրանք ել չտեսնեն ու չկարողանան նրան վորեւ կերպ հասկացնել: Խոսեցրեք նրանց:

ՎԱՍ. ԼԵ.—Իսկույն, իսկույն: Դե, ինչպէս արիք, տղերք, հողը գնում եք, թե չե, հ<sup>օ</sup>ը, ինչ ե:

Ա. ԳՅՈՒՂ.—Մենք սրտանց ենք ուզում, բայց այն է, վոր գործը առաջ չի գնում, ինչպէս կարգն է:

ՎԱՍ. ԼԵ.—Դուք ել ժլատություն մի անեք, հողը շատ կակարեւոր բան է: Յես ձեզ ասացի, դաղձ ցանեցեք, կարելի յե ծըխախտ ել ցանել:

Ա. ԳՅՈՒՂ.—Այդ դրուստ է, ամեն տեսակ բան կարելի յե:

Գ. ԳՅՈՒՂ.—Դու ել, պատվելի, խնդրել հայրիկիդ, թե չե մենք ինչպէս պիտի ապրենք, հողը քիչ է, հավ ել, ասենք չի կարելի պահել, ինչպէս կտրոն է:

ՍՍԽՍՏ.—(Գդալը դնելով գ. գյուղացու պայտուսակի մեջ): Gest fait, պատրաստ է, գնանք: (Գնում է):

ՎԱՍ. ԼԵ.—Ժլատություն մի անեք: Հ<sup>օ</sup>ը, դե, մնաք բարով: (Գնում է):

ՏԵՍԻՒ 16

Յերեք գյուղացիներ, խոհարարուհի յեվ ծեր խոհարար

Գ. ԳՅՈՒՂ.—Յես ասեցի, թե գնանք մի տեղ գտնենք գիշերելու, է, ասենք մի տաստաս կողեկ կտայինք, համա հանգիստ կլինեյինք, թե չե այստեղ աստված ազատե, փողերդ տուր, ասում է, սա ինչ բան է:

Բ. ԳՅՈՒՂ.—Յերեք խմած է:

ԳՅՈՒՂԱՅԻՆԵՐ.—(Շքում են բաժակները, վեր են կենում յեվ յերեսները խաչակնում):

Ա. ԳՅՈՒՂ.—Միտքդ է, ինչպէս խոսք գցեց, թե դաղձ ցանեցեք, դրանով, գիտե՞ս թե ինչ եր ուզում ասել:

Բ. ԳՅՈՒՂ.—Ինչպէս չե, դաղձ ցանիր, տեսնում ես, դու մի փորձիր մեջքդ ձուկ, հետո դաղձի մասին խոսիր: Դեհ, շատ շնորհակալ եմք... իսկ վերտեղ պիտի պահկենք, քույրիկ:

ԽՈՀԱՐ.—Պառկեցեք մեկը վառարանի վրա, մյուսները ել տախտերի վրա:

Գ. ԳՅՈՒՂ.—Փնփ քեզ տեր: (Աղոթում է):

Ա. ԳՅՈՒՂ.—Ախ, թե աստված տար գործը վերջացնեյինք:

(Պառկում է) եզուց ճաշից հետո կընկնեյինք յերկաթուղի և յերեքշաբթի կլինեյինք տանը:

Բ. ԳՅՈՒՂ.—Ճրագը պիտի հանգցնեք:

ԽՈՀԱՐ.—Ինչպէս հանգցնենք, յերբ ամեն բոպե պետք է ներս վազեն, այս տուր, այն տուր... Դուք պառկեցեք, յես ել մի քիչ թեք կընկնեմ:

Բ. ԳՅՈՒՂ.—Մի կտոր հողի վրա ինչպէս ապրես, յես այս տարի ծննդից այս կողմ հաց եմ գնում, բոսը հասավ և հաճարին: Թե չե մի չորս տասանոց դեն կշարտեյի և Սիմեոնին կտանեյի տուն:

Ա. ԳՅՈՒՂ.—Քո գործդ տանու գործ է, կարիք չունես, յերբ հողը շատացավ լավ ել կապրես, ախ թե գործը գլուխ դար:

Գ. ԳՅՈՒՂ.—Յերկնային թագուհուն պետք է խնդրել, գուցե նա վորորմա:

ՏԵՍԻՒ 17

Լուսրյուն: Հառայներ, հետ լսելի յե դառնում վոսերի դրոփյուն, ձայների աղմուկ, դռները ամբողջովին բացվում են յեվ ուժեղ բափով ներս են մտնում: Գրամանք աչեքը կապած յեվ Սախասովի ձեռքից բռնած: Պրոֆեսորը, բժիշկը, հաստ սիկինը յեվ Լեոնիդ Ֆեոդորովիչը: Բեդաի յեվ Պետրիլեյով, Վասիլիյ Լեոնիլիչ յեվ Մարիա Կոնստանտինովնա, Կոնստանտին յեվ Բարոնուհին, Ֆեոդոր Իվանիչ յեվ

Տանյան

Յերեք գյուղացիները, խոհարարուհի յեվ հին խոհարար չեն յերեվում: (Գյուղացիք վեր են բռնում, Գրամանք մտնում է արագ քայլերով, հետ կանգ է առնում)

ՀԱՍՏ. ՏԻԿԻՆ.—Դուք անհող կացեք, յես հետևում եմ, յես հանձն առա հետեւել և ճշտությամբ կկատարեմ իմ պարտականությունները: Սերգեյ Իվանիչ, դուք չէք առաջնորդում:

ՍՍԽՍՏ.—Վոչ, վոչ:

ՀԱՍՏ. ՏԻԿԻՆ.—Դուք մի առաջնորդեք, վոչ ել հակառակ վեցեք: (Լեոնիդ Ֆեոդորովիչին) Յես գիտեմ, այս փորձերը, յես ինքս ել եմ արել, յես, պատահում եր, վոր գգում եյի ինչ վոր հոսանք:

ԼԵՈՆ. Ֆ.—Թույլ տվեք խնդրել, վոր լուսթյուն պահպանեք:

ՀԱՍՏ. ՏԻԿԻՆ.—Ախ, յես այդ շատ լավ եմ հասկանում, յես ինքս ինձ վրա եմ փորձել. հենց վոր ուշադրությունս ցրվեց, այլ ևս չեմ կարող...



ԼԵՈՆ. Ֆ.—Մ' ս ս' ս'...

(Քայլում են յեղ փնտրում ա. յեղ բ. գյուղացիների մոտերը յեղ մոտե-  
նում են գ. գյուղացուն. Գրասանը դեմ է առնում հասարակին):

ԲԱՐՈՆՈՒՀԻ—Mais dites moi, on le paye?

ՏԱՆՏԻՐ.—Je ne saurais vous dire.

ԲԱՐՈՆՈՒՀԻ—Mais e'est un monsieur?

ՏԱՆՏԻՐ.—Oh! oui.

ԲԱՐՈՆՈՒՀԻ—Ça tient du miraculeux! Nest ce pas? com-  
ment est ec quil trouve?

ՏԱՆՏԻՐՈՒՀԻ—Je ne saurais vous dire, Mon mari vous  
l'expliquera. (Նկատելով գյուղացիներին այս ու այն կողմն է  
նայում յեղ սեանում խոհարարուհուն Pardon... Մա ի՞նչ բան է:

ԲԱՐՈՆՈՒՀԻ—(Մտեանում է խմբին):

ՏԱՆՏԻՐ.—(Խոհարարուհուն) Ո՞վ ներս թողեց սրանց:

ԽՈՂԱՐ.—Յակոֆը ներս բերեց:

ՏԱՆՏԻՐ.—Յկոֆին ո՞վ պատվիրեց:

ԽՈՂԱՐ.—Չգիտեմ, Ֆեոդոր Իվանիչը տեսել է սրանց:

ՏԱՆՏԻՐ.—Լեոնիդ:

ԼԵՈՆ. Ֆ.—(Չի յում, զբաղված է վորոճումով, օվձվացնում է):

ՏԱՆՏԻՐ.—Ֆեոդոր Իվանիչ, սա ի՞նչ է նշանակում: Միթե  
դուք չտեսե՞ք, վոր յես ամբողջ նախասենյակը ախտահանեցի  
այտոր. իսկ հիմա դուք իմ ամբողջ խոհանոցն եք վարակել, սե  
հաց, կվաս:

ՖԵՈՒԴ. ԻՎ.—Յես կարծել եմ, վոր այստեղ վաճառողը չէ,  
մարդիկ գործ ունեն, մեր պիտի գնային, հեռու յե իրենց գյուղը:

ՏԱՆՏԻՐ.—Հենց բանն էլ այդ է, վոր Կուրսկի նահանգից,  
վորտեղ դիֆտիրիաից ճանճի նման ստակում են, և գլխավորը  
յես հրամայեցի, վոր նրանց հոտը չերևա մեր տան մեջ... Հրա-  
մայեցիք թե վոր: (Մտեանում է խմբին, վոր հավաքվել է գյուղացի-  
ների շուրջը) Չգուցե յեղեք, չբավեք դրանց, նրանք բոլորը դիֆտի-  
րիաով վարակված են: (Վոչ վոք չի յում, նա վեհանձնաբար հետու յե  
գնում յեղ անօտժ կանգնում է սպասողական դուրքյան մեջ):

ՊԵՏՐԻՇ.—(Սմուռ հոտ է փառում) Դիֆտիրիաով, չգիտեմ,  
բայց ողի մեջ ինչ-վոր ուրիշ վարակում կա, դուք նկատո՞ւմ եք:

ԲԵԴՄԻ.—Բավական է ստեր ստեք: Վո՞վ, վո՞ր պայտուսակի  
մեջ:

ՎԱՍ. ԼԵ.—Այն, այն, մոտենում է, մոտենում է:

ՊԵՏՐԻՇ.—Այս ի՞նչ է այստեղ духи или духи:

ԲԵԴՄԻ.—Ա՛յ, յերբ է հարկավոր ձեր պապիրոսները, ծը-  
խեցեք, ինձ ավելի մոտ ծխեցեք:

ՊԵՏՐԻՇ.—(Թեփվում է յեղ ծուխը փչում է նրանց վրա):

ՎԱՍ. ԼԵ.—Կոտնի, յես ձեզ ասեմ, հը, ի՞նչ է:

ԳՐՈՍՄԱՆ.—(Անհանգստությամբ օտափում է գ. գյուղացու  
մոտերը: Այստեղ է, այստեղ է, յես զգում եմ, վոր այստեղ է:

ՀԱՍՏ. ՏԻԿ.—Ինչ վոր հոսանք զգում եք:

ԳՐՈՍՄԱՆ.—(Կոտնում է դեպի պայտուսակը յեղ հանում է  
զրարը):

ԲՈՂՈՐԸ—Բրճվո: (Ընդհանուր վոզեվորություն):

ՎԱՍ. ԼԵ.—Ա՛յ թե վորտեղ եր թագնված մեր զրարը,  
(գյուղացուն) ա, ուրեմն դձև, այդ ինչպե՞ս, հա:

Գ. ԳՅՈՒՂ.—Ինչպես թե ինչպես, յես չեմ վերցրել քո զը-  
րարը, ինչե՞ր ես ասում, յես իսկի տեղեկությունն չունեմ, ա՛յ  
քեզ բան: Յես նկատեցի, վոր սա յեկավ. մի լավ բանի համար  
չեր գա. քսակդ տուր, ասում է. յես չեմ վերցրել, Գրիստոս  
գիտենա յես չեմ վերցրել: (Յերիսասարգները օրջապատել են յեղ  
ծիծաղում են):

ԼԵՈՆ. Ֆ.—(Վորզու վրա բարկացած) Միշտ հիմարություն-  
ներ. (գ. գյուղացուն) Անհանգիստ մի լինիր, բարեկամ, մենք  
գիտենք, վոր դու չես վերցրել, սա մենք փորձ եյինք անում:

ԳՐՈՍՄԱՆ.—(Հանում է կապը յեղ այնպես է անում, իբր թե  
արքնացավ) Չնւր, յեթե կարելի յե, թույլ ավեք... (բոլոր նրա  
մոտ հավաքված, զբաղվում են նրանով):

ՎԱՍ. ԼԵ.—Յեկեք այստեղից գնանք կառապանների սեն-  
յակը, յես ձեզ ցույց կտամ, թե այնտեղ ինչ աստակ մի գամու  
ունեն: èpâtant? հը, ի՞նչ է:

ԲԵԴՄԻ.—Յեղ ինչ տգեղ բան է, միթե չի կարելի ասել  
2 ուն:

ՎԱՍ. ԼԵ.—Չի կարելի, չե վոր քո մասին ել չի կարելի  
ասել Բեդմին մի èpâtant? մարդ է, այլ պետք է ասել աղջիկ, ու-  
րիորդ. այդպես ել նա. հը, ինչ է, ուղի՞ղ է, Մարիա Կոնստանտին-  
նովնա լավ է, չե: (Քրջում է):

ՄԱՐ. ԿՈՍ.—Դե գնանք: (Մարիա Կոնստանդինովնա, Բեդմի,  
Պետրիշեկ յեղ Վասիլիյ Լեոնիլիչը գնում են):



նույնի, առանց Բեդսիի, Մարիա Կոնս. Պետրոսեպիլի յեվ Վասիլիյ Լե-  
ննիպիչի

ՀԱՍՏ. ՏԻԿ. — (Գրումանիմ) Ի՞նչ, ինչպէս եք, հանգստա-  
ցածք:

ԳՐՈՍՄԱՆ. — (Չի պատասխանում):

ՀԱՍՏ. ՏԻԿ. — (Սախասովին) Դուք, Սերգեյ Իվանիչ, Չլալին  
ինչ-վոր հոտանք գգացիք:

ՍԱԽԱՍ. — Յես վոչինչ չգգացի, լավ ե, շատ լավ ե. բոլո-  
ւովին հաջող ե:

ԲԱՐՈՆՈՒՀԻ — Admirable. Ça ne le fait pas souffrir?

ԼԵՈՆ. Ֆ. — Pas le moins du monde

ՊՐՈՑԵՍ. — (Գրումանիմ) Թույլ ավեք ձեզ խնդրել. (սալիս ե  
չերմաչափը) փորձի սկզբին Չերմուխյունը 37 և 2 եր (բժշկին)  
այնպես չէ, բարե յեղեք զարկերակը քննել: Ուժի սպառումը  
անխուսափելի յե:

ԲԺԻՇԿ. — (Գրումանիմ) Հապա, պարոն, թույլ ավեք ձեր  
զարկերակը ստուգել. պետք ե ստուգել: (Հանում ե ժամացույցը  
յեվ բռնում ե նրա ձեռքը):

ՀԱՍՏ. ՏԻԿ. — (Գրումանիմ) Թույլ ավեք, չէ՞ վոր այս դրու-  
թյունը, վորի մեջ դուք գտնվում եյիք չի կարելի քուն համա-  
րել:

ԳՐՈՍՄԱՆ. — (Հոգնած) Նույն հիպնոզն ե:

ՍԱԽԱՍ. — Ուրեմն պետք ե այնպես հասկանալ, վոր դուք  
ինքնեզ հիպնոզացրել եք ձեզ:

ԳՐՈՍՄԱՆ. — Ինչու չե, հիպնոզ կարող ե կատարվել վոչ մի-  
այն մտքերի միտքինակության՝ աստղացիայի, տամտամի հընչ-  
յունների ժամանակ, ինչպես վոր Շարկոն ե ասում, այլ և հիպ-  
նոզի սկզբնական շրջանը մտնելիս:

ՍԱԽԱՍ. — Այդ այդպես ե ընդունենք, բայց համենայն դեպս  
ցանկալի յեր խելությամբ վորոշել, թե ի՞նչ ե հիպնոզը:

ՊՐՈՑԵՍ. — Հիպնոզը մեկի եներգիան մյուսի մեջ փոխադրող  
յերևութ ե:

ԳՐՈՍՄԱՆ. — Շարկոն այլ կերպ ե բացատրում:

ՍԱԽԱՍ. — Թույլ ավեք, թույլ ավեք այդպէս ե ձեր վարո-  
շումը, բայց Լիբոն ինքն ե ինձ ասել...

ԲԺԻՇԿԸ. — (Թողնելով զարկերակը) Լավ, լավ, այժմ տեսնենք  
ի՞նչ ե ցույց տալիս Չերմաչափը:

ՀԱՍՏ. ՏԻԿ. — (Խոսքի մեջ մտնելով) Վոչ, թույլ ավեք, յես  
համաձայն եմ Ալեքսանդր Վլադիմիրովիչի հետ և ահա ձեզ  
սպացուցներեց ամենալավը: Յերբ վոր յես իմ հիվանդություն-  
նից հետո, պառկած եյի անզգա, իմ մեջ խոսելու մի տեսակ  
պահանջ եր ծագել, յես առհասարակ սակավախոս եմ, բայց այդ  
ժամանակ յես ուղղակի պահանջ եյի զգում խոսելու և ինձ ա-  
սացին, վոր այնքան եմ խոսել, վոր բոլորը զարմացել են: Բայց  
կարծեմ յես ձեր խոսքը կարեցի:

ՍԱԽԱՍ. — (Մանրորեն) Բոլորովին վոչ. խնդրեմ, կարող եք  
շարունակել:

ԲԺԻՇԿ. — Զարկերակը 82- ե, իսկ Չերմաստիճանը բարձրացել  
ե 0,3:

ՊՐՈՑԵՍ. — Այ ձեզ սպացույց, այդպես ել պետք ե լինել:  
(Հանում ե ծոցատետրը յեվ գրում ե) 82 չէ, և 37 5°, հենց վոր յե-  
րեացել ե հիպնոզը, իսկույն սկսվել ե սրտի ուժեղ գործունե-  
յությունը:

ԲԺԻՇԿ. — Յես, վորպես բժիշկ, կարող եմ վկայել, վոր նա-  
խորք ձեր ասածները լիովին ճշտվեցին:

ՊՐՈՑԵՍ. — (Սախասովին) Այդպէս եյիք ասում դուք:

ՍԱԽԱՍ. — Յես ուզում եյի ասել, վոր Լիբոն ինքն ինձ ա-  
սաց, վոր հիպնոզը մի առանձին տեսակի հոգեկան գրություն  
ե, վոր ուժեղացնում ե ներշնչման գործունեությունը:

ՊՐՈՑԵՍ. — Այդ այդպես ե. բայց այս և այսպես եկվիվալեն-  
տի որենքը:

ԳՐՈՍՄԱՆ. — Բացի դրանից, Լիբոն մի հեղինակութուն չե,  
մինչդեռ Շարկոն բազմակողմանի ուսումնասիրել և սպացու-  
ցել ե, վոր հիպնոզը յերբ առաջանում ե ճմլվածքի հարվածից...

ՍԱԽԱՍ. — Շարկոյի կարծիքը յես չեմ ժխտում, յես ել եմ  
ճանաչում նրան, յես միայն այն եմ ասում, թե ինչ ե ասել  
Լիբոն:

ԳՐՈՍՄԱՆ. — (Տախանալով) Սակարբիբրում 3000 հիվանդ,  
և յես ել նրանց հետ լսեցինք նրա ամբողջ դասընթացը:

ՊՐՈՑԵՍ. — Թույլ ավեք պարոններ, բանն այդ չե:

ՀԱՍՏ. ՏԻԿ. — (Մեջ խառնվելով) Յերկու խոսքով ձեզ բա-  
ցատրեմ, յերբ վոր իմ մարդը հիվանդ եր, բոլոր բժիշկները՝ չե-  
թարվեցին բժշկելուց...

ԼԵՈՆ. Ֆ. — Գնանք, գնանք տուն, Բարոնեսա համեցեք:  
(Բոլորը գնում են խոսելով յեվ ընդհատելով միմյանց):



Յերեմ գլուղացիներ, խոհարարուհի, Ֆեոդոր Իվանիչ, Տանյա, ծեր խոհարար, Լեոնիդ Ֆեոդորովիչ յեվ Տանսիրուհի

ՏԱՆՏԻՐ.—(Թեվից բռնելով կանգնեցնում է Լեոնիդ Ֆեոդորովիչին) Բանի՞ անգամ չես ձեռք խնդրել եմ, վոր դուք գործերի մասին կարգադրուեթյուններ չանեք: Դուք գիտցեք միայն ձեր հիմաբուեթյունները, իսկ սուսը ամբողջապես ինձ վրա չե: Դուք բոլորին կվարակեք:

Լեոն. Ֆ.—Ի՞նչ է պատահել, վոչինչ չեմ հասկանում:

ՏԱՆՏԻՐ.—Ի՞նչպես, դիֆտիրիտով հիվանդ մարդիկ գիշերում են խոհանոցում, վոր մշտական հարաբերության մեջ է տան հետ:

Լեոն. Ֆ.—Դե յես...

ՏԱՆՏԻՐ.—Ինչպե՞ս թե յես:

Լեոն. Ֆ.—Յես վոչինչ չգիտեմ:

ՏԱՆՏԻՐ.—Պետք է գիտենաք, թե վոր դուք ընտանիքի այդ եք, այդպես չի կարելի:

Լեոն. Ֆ.—Դե յես չեմ կարծել. յես չեմ կարծել...

ՏԱՆՏԻՐ.—Անտանելի յե ձեռք լսելը: (Ֆեոդոր Իվանիչին) այս բոսիլին դուրս արա. նրանց հոտը չպիտի յերես այստեղ. սարսափելի յե, վոչ վոք չի լսում: Բոլորը, կարծես, գիտամար... Յես այնտեղից նրանց վոնդում եմ, այստեղ են տեղ տալիս: (Ավիլի յեվ ավիլի վորովում է յեվ վերջը համարյա լաց է լինում). հենց գիտամար ինձ չարացնելու համար, հենց դիտամար է իմ հիվանդ ժամանակը, բժիշկ, բժիշկ, Պետր Պետրովիչ... Նա էլ գնաց: (Հեկեկալով դուրս է գնում, նրա նետվից Լեոնիդ Ֆեոդորովիչը:

Յերեմ գլուղացի, Տանյա, Ֆեոդոր Իվանիչ, խոհարարուհի յեվ ծեր խոհարար (վառարանի վրա) պտակեր, (բոլորը լուռ կանգնած են բավական ժամանակ)

Գ. ԳՅՈՒՂ.— Դե աստված դա սրանց հախիցը, այստեղ մի քիչ էլ մնանք, վոստիկանատուն քաշ կտան, իսկ յես կյանքիս մեջ չեմ մեղադրվել: Գնանք տղերք, գնանք գիշերելու մի տեղ գանենք:

Ֆեոդ. Իվ.—(Տանյային) Բա ինչպե՞ս անենք:

ՏԱՆՅԱ.—Բան չկա, Ֆեոդոր Իվանիչ, թող գնան կառապանները սենյակը:

Ֆեոդ. Իվ.—Ի՞նչպես չե, կառապանները սենյակը, սուսնց

այդ էլ կառապանները չեկել, գանգատվում եյին, վոր այստեղ չնեքով լցրել են:

ՏԱՆՅԱ.—Դե, ուրեմն դոնապանները սենյակը:

Ֆեոդ. Իվ.—Վա՛յ թե իմանան:

ՏԱՆՅԱ.—Վոչինչ էլ չեն իմանա, դուք հանգիստ յեղեք, Ֆեոդոր Իվանիչ, միթե՞ կարելի յե սրանց այսպես, գիշերով վոնդեք: Սրանք տեղ էլ չեն գանի հիմա:

Ֆեոդ. Իվ.—Դե արա ինչպես ուզում ես, միայն թե այստեղ չմնան: (Գնում է):

Յերեմ գլուղացիներ, Տանյա, խոհարարուհի յեվ ծեր խոհարար (գլուղացիք հավաքուսում են իրենց իրերը)

ԾԵՐ. ԽՈՂ.—Տեսնում ես անիծվածներին, ախար յուղի ու մեղրի մեջ են ապրել:

ԽՈՂՄԲ.—Լուր դուն էլ, փառք ասածո վոր չտեսան:

ՏԱՆՅԱ.—Գնանք, քեռիներ, գնանք դոնապանները սենյակը:

Ա. ԳՅՈՒՂ.—Իսկ ի՞նչ յեղավ մեր գործը, ինչպե՞ս, խոսք —որինակ, ձեռք քաշելու բանը: Ի՞նչ անենք, հույս ունենանք:

ՏԱՆՅԱ.—Ա՛յ, մի ժամից հետո ամեն բան կիմանաք:

Բ. ԳՅՈՒՂ.—Կարողանա՞նք յես մի ոյիսով գործը վոլեք բերես:

ՏԱՆՅԱ.—(Նիծաղում է) Ինչպես աստված կտա:



Ա Ր Ա Ր Վ Ա Ց III

Գործողութիւնը կատարուիմ է նույն արվա յերեկոյան, փոքր հյուրանոցայնում, վորտեղ մշտապես տեղի յեն ունենում է երեկոյան ֆեդորովիչի փորձերը:

ՏԵՍԻՒ 1

Լեոնիդ ֆեդորովիչ յեվ պրոֆեսոր

ԼԵՈՆ. Ֆ.—Ուրեմն ինչպէս. փորձենք այս անգամ սեանսը կատարել մեր նոր մեղիումով:

ՊՐՈՖ.—Անպատճառ: Մեղիումն անկասկած յուր մեջ լսավական ույժ ունի: Յանկալի յեր վոր մեղիումական փորձը լինելը հենց այսօր, նույն մարդկանց մասնակցութեամբ: Գրոսմանն անպայման պետք է յենթարկվի մեղիումական փորձերի ազդեցութեան և վորով յերևույթներ ի կապակցութեան և միավորումը ավելի ախնայտի կդառնա: Դուք կտեսնեք, վոր յեթե մեղիումը կլինի այնպես ուժեղ, վորպես այժմս և, այն ժամանակ Գրոսմանը ցնցումներ կանի:

ԼԵՈՆ. Ֆ.—Դե յես ուրեմն ուղարկեմ Սիմեոնին կանչելու և կհրավիրեմ ցանկացողներին:

ՊՐՈՖ.—Այո, այո, յես միայն մի քանի նկատողութեաններ անեմ ինձ համար: (Հանում է հուշատետր յեվ ինչ-վոր գրում է):

ՏԵՍԻՒ 2

Նույնի յեվ Սախասով

ՍՍՆԱՍ.—Այնտեղ, Աննա Պավլովնայի մոտ նստեցին վրաս խաղալու. իսկ յես վորպես խաղից դուրսը մնացող և սեանսով հետաքրքրվող, ահա գալիս եմ ձեզ մոտ: Ինչ է, սեանս լինելու յե:

ԼԵՈՆ. Ֆ.—Կլինի, անպատճառ կլինի:

ՍՍՆԱՍ.—Ի՞նչպէս, առանց պարոն Կապիչի մեղիումական ույժի:

ԼԵՈՆ. Ֆ.—Vous avez la main heureuse. Յերեկոյանց քայն նույն գլուղացի տղան, վորի մասին յես ձեզ ասեցի, յերեկաց վոր մեղիում է անկասկած:

ՍՍՆԱՍ.—Ահա թե ինչ, դա ավելի ևս հետաքրքրական է:

ԼԵՈՆ. Ֆ.—Այո, այո, մենք ճաշից հետո նրա հետ կատարեցինք մի փոքրիկ, նախնական փորձ:

ՍՍՆԱՍ.—Կատարեցիք և համոզվեցի՞ք:

ԼԵՈՆ. Ֆ.—Լիակատար կերպով. և դուրս չեկավ զարմանալի ուժեղ տեսակի մեղիում:

ՍՍՆԱՍ.—(Կասկածանքով) Այո թե ինչ:

ԼԵՈՆ. Ֆ.—Բանից չերևում է, վոր ծառաների սենյակում այդ բանը վաղուց արդեն նկատել են: Նա նստում է, բաժակը վերցնում է թեյ խմելու, հանկարծ գդալը ինքը թռչում է նրա ձեռքը: (Պրոֆեսորին) Դուք լսել եք:

ՊՐՈՖ.—Վոչ, այդ բանն իսկապես յես չեմ լսել:

ՍՍՆԱՍ.—(Պրոֆեսորին) Համենայն դեպս, ուրեմն դուք ընդունում եք նման յերևույթների հնարավորութեանը:

ՊՐՈՖ.—Ի՞նչ չերևույթներ:

ՍՍՆԱՍ.—Դե, առհասարակ սպիրիտական, մեղիումական առհասարակ և գերբնական յերևույթներ:

ՊՐՈՖ.—Բանն այն է, թե ի՞նչն ենք մենք համարում գերբնական: Յերբ վոչ թե կենդանի մարդը, այլ քարի մի կտորը իրեն է քաշում մեխը, դա ի՞նչպիսի յերևույթ է նկատվում դիտողների համար, բնական թե գերբնական:

ՍՍՆԱՍ.—Դե իհարկե, միայն թե այնպիսի յերևույթներն, ինչպիսին է մագնիսի ձգողականութեանը, մշտական կրկնվում են:

ՊՐՈՖ.—Նույնն է և այստեղ: Յերևույթը կրկնվում է, իսկ մենք նրան յենթարկում ենք ուսումնասիրութեան: Բացի դրանից մենք հետազոտելի յերևույթները դնում ենք այլ յերեւույթների ընդհանուր որեւքների տակ: Յերևույթները մեզ թվում են գերբնական միայն նրա համար, վոր յերևույթները պատճառները վերադրում ենք իրեն՝ մեղիումին: Բայց դա սխալ է, յերևույթը առաջ է գալիս վոչ թե մեղիումի շնորհիվ, այլ հոգեկան ույժի ազդեցութեան, մեղիումի միջոցով—զանա-



վոնոֆիլները իրավացի յեն, բայց յես միշտ ասում եյի իմ մարդուն, թե վոչ մի բանում չպետք է չափազանցել. միջին ճանապարհը ավելի լավ է, հասկանում եք, թե չե ինչպես պնդել. թե ժողովրդի մեջ ամեն բան լավ է, յերբ ինքս տեսել եմ...

ԼեՈՆ. Փ.—Համեցեք ընդունարան:

ՀԱՍՏ. ՏԻԿ.—Ահա այսպիսի տղա յե և խմում է: Յես նըրան իսկույն հանդիմանեցի և նա վերջը շնորհակալ յեղավ. նրանք յերեխա յեն, իսկ յերեխաներին, յես միշտ ասել եմ, պետք է և սիրել և խստութիւն բանեցնել:

(Բոլոր գնում են խոսակցելով)

ՏԵՍԻԼ 7

Տանյա (մենակ)

ՏԱՆՅԱ.—(Դուրս է գալիս դռան հետևից) Ա՛խ, մի հաջողութիւն. (Կապոսում է քելեր):

ՏԵՍԻԼ 8

Տանյա յել Բեդսի

ԲԵԴՍԻ.—(Մտնում է ԵՏԱՅ) Հայրիկն այստեղ չէ: (Նայելով Տանյային) Դու այստեղ ի՞նչ ես անում:

ՏԱՆՅԱ.—Յես այնպես, Լիզավետա Լեոնիդովնա, ներս մտա, ուզում եյի... միայն չեկա... (Շփոթվում է):

ԲԵԴՍԻ.—Չե՞ վոր այստեղ այս բոպեյին սեանս պիտի լինի, (նկատում է վոր Տանյան քելեր է հավաքում, սեվեռած նայում է նրան յել հանկարծ բարձր ծիծաղում է) Տանյա, ուրեմն այս բոլորը դժու յես անում, լավ, այլ ևս մի ծածկիր: Անցյալ անգամըն էլ դու եյիր, դժու, դժու...

ՏԱՆՅԱ.—Լիզավետա Լեոնիդովնա, աղավախակա:

ԲԵԴՍԻ.—(Հիացմունքով) Ա՛յ ինչ լավ բան է, այդ չեյի ըստ ասում, ինչու ևլիր անում այդ բանը:

ՏԱՆՅԱ.—Որիորդ, սիրելիս, չբացանեք, խնդրում եմ:

ԲԵԴՍԻ.—Վոչ, վոչ, վոչ մի դեպքում: Յես չափից դուրս ուրախ եմ. այդ ինչպես ես անում:

ՏԱՆՅԱ.—Այսպես ել անում եմ, թաքնվում եմ և յերբ լույսը հանդգնում են, դուրս եմ գալիս և սկսում գործս:

ԲԵԴՍԻ.—(Յուրջ տալով քելեր) Մա ինչո՞ւ համար է: Լավ, մի ասիր, հասկանում եմ—խաղացում ես:

ՏԱՆՅԱ.—Լիզավետա Լեոնիդովնա, հոգիս, յես միայն ձեզ:

Այսեմ բանը: Առաջ յես այնպես չարածճիւթուն յի անում, իսկ այժմ գործ եմ ուզում անել:

ԲԵԴՍԻ.—Ի՞նչպես, ի՞նչ գործ:

ՏԱՆՅԱ.—Ա՛յ այն, դուք տեսաք, գյուղացիներ են յեկել, ուզում են հող գնել, իսկ հայրիկը չի ծախում և թուղթը չատուրագրեց ու վերադարձրեց: Ֆեոդոր Իվանիչն ասում է վոգիներըն են արգելել նրան այդ անելը, յես ել անա մտածեցի հնարել այս միջոցը:

ԲԵԴՍԻ.—Ա՛յ, ինչ խելոքն ես յեղել, արա, արա, բայց ի՞նչպես պետք է անես:

ՏԱՆՅԱ.—Յես այսպես եմ մտածել, յերբ նրանք ճրագները կհանդգնեն, յես կսկսեմ թխթխկացնել, առարկաները շուռ ու մուռ տալ, թելով գլխներին խփել, իսկ հետո հողի վաճառման թուղթը—ինձ մոտ է—կգցեմ սեղանի վրա:

ԲԵԴՍԻ.—Հետո ի՞նչ:

ՏԱՆՅԱ.—Այն, վոր նրանք կզարմանան, թուղթը գյուղացիների մոտ եր, հանկարծ այստեղ. յես ել կպատվիրեմ...

ԲԵԴՍԻ.—Չե վոր Սիմեոնն է այսոր մեղիումը:

ՏԱՆՅԱ.—Յես նրան կպատվիրեմ: (Չի կարող խոսել ծիծաղից քուլտցած) կպատվիրեմ ձգմել, տրորել ո՞վ ձեռքն ընկավ, միայն թե վոչ հայրիկը, այդ չի համարձակվի և թող սեղմի ուրիշներին մինչև վոր թուղթը կստորագրեն:

ԲԵԴՍԻ.—(Ծիծաղում է) Դե հո փորձը այդպես չի կատարվում, մեղիումը ինքը վոչինչ չի անում:

ՏԱՆՅԱ.—Այդ վոչինչ—միևնույն է միայն թե մի բան դուրս գա:

ՏԵՍԻԼ 9

Տանյա յել Ֆեոդոր Իվանիչ

ԲԵԴՍԻ.—(Տանյային նշան է անում յել գնում է):

ՖԵՈԴ. ԻՎ.—(Տանյային) Ի՞նչ եք անում դուք այստեղ:

ՏԱՆՅԱ.—Յես ձեզ մոտ եմ յեկել, Ֆեոդոր Իվանիչ, սիրելիս:

ՖԵՈԴ. ԻՎ.—Ի՞նչ կա:

ՏԱՆՅԱ.—Իմ գործի մասին, վոր ձեզ խնդրեցի:

ՖԵՈԴ. ԻՎ.—Նշանեցի, նշանեցի, ձեռք ձեռքի ել տվինք, միայն չխմեցինք:

ՏԱՆՅԱ.—(Ճիչեր է արձակում) Միթե՞ այդ ճիշտ է:

ՖԵՈԴ. ԻՎ.—Դե յես քեզ ասում եմ. նա ասում է պառավի հետ խորհուրդ անենք և ասոված իրենց հետ:



ՏԱՆՅԱ.—Այդպես ել ասե՞ց (նիչեռով): Ա՛խ սիրելիս Ֆեո-  
դոր Իվանիչ, հավիտյան քեզ համար պիտի արոթեմ:

Ֆեոդ. Իվ.—Դե լավ, լավ, հիմա ժամանակ չունեմ, պատ-  
վիրված ե սենյակը սարքել սեանսի համար:

ՏԱՆՅԱ.—Թողեք յես ել ոգնեմ ձեզ, ի՛նչպես սարքել:

Ֆեոդ. Իվ.—Ինչպես... Այ, սեղանը սենյակի մեջ տեղը,  
աթոռներ, կիթառը, հարմոնիկը,—լամպան հարկավոր չե, մոմեք:

ՏԱՆՅԱ.—(Իրերը դասավորում են Ֆեոդոր Իվանիչի հետ) Այս-  
պե՞ս, հա՞, այստեղ կիթառը, այստեղ թանաքամանը... դնում ե՞):  
Այսպե՞ս:

Ֆեոդ. Իվ.—Միթե՞ իսկապես Սիմեոնին պետք ե նստեց-  
նեն ալսոր:

ՏԱՆՅԱ.—Յերեկ, մի անգամ արդեն նստացրին:

Ֆեոդ. Իվ.—Զարմացք: (Գնում ե պեմսեմ) մաքճւր և  
սղան:

ՏԱՆՅԱ.—Յես ի՛նչ գիտեմ:

Ֆեոդ. Իվ.—Լսիր, ինչ եմ ասում:

ՏԱՆՅԱ.—Ի՞նչ, Ֆեոդոր Իվանիչ:

Ֆեոդ. Իվ.—Գնա վերցրու յեղունգի խողանակը և սա-  
պոնը, թեկուզ իմը, վերցրու և նրա բոլոր յեղունգները կտրի՛ր  
և ձեռքերը լավ մաքուր վրա:

ՏԱՆՅԱ.—Նա ինքը կլվանա:

Ֆեոդ. Իվ.—Դե դու ասա միայն, հա, ասա վոր սպիտա-  
կեղենն ել մաքուրը հագնի:

ՏԱՆՅԱ.—Լավ, Ֆեոդոր Իվանիչ: (Գնում ե):

ՏԵՍԻԼ 10

Ֆեոդոր Իվանիչ (մեմակ)

Ֆեոդ. Իվ.—(Նստում ե բազկաթուղի վրա) Ուսումնական-  
են, ուսումնական են, թեկուզ Ալեքսեյ Վլադիմիրովիչը, մարդը  
պրոֆեսոր ե, բայց և յերբեմն այնպես կասկածը տիրում ե ինձ:  
Ժողովրդական տղեզ սնտախապաշտությունը վոչնչանում ե, տա-  
նու վոզիների, կախարչների, վհուկների սնտախապաշտությունը:  
Իսկ յեթե մարդ լավ մտածի սա ել մի սնտախապաշտություն ե.  
դեհ, միթե կարելի բան ե, վոր մեռածների վոզիները խոսեն,  
կիթառ նվագեն: Յերեկ մեկը կա, վոր դրանց հիմարացնում ե.  
կամ հենց իրենք իրենց են հիմարացնում: Իսկ այդ Սիմեոնի  
բանը յես չեմ հասկանում, թե ինչ ե: (Մտիկ ե քալիս արբուր) Ա-  
հա նրանց սպիրիտական ալբոմը, դեհ, միթե հնարավոր ե, վոր

վոզուն կարելի լինի լուսանկարել. այ, ահա մի լուսանկար...  
մի տաճիկ և Լեոնիդ Ֆեոդորովիչը նստած... մարդկային թու-  
լություն, իրավ վոր դարմանալի յե:

ՏԵՍԻԼ 11

Ֆեոդոր Իվանիչ յեվ Լեոնիդ Ֆեոդորովիչ

Լեոն. Ֆ.—Ի՞նչ ե, պատրաստ ե:

Ֆեոդ. Իվ.—(Վեր ե կենում առանց քսապիու) Պատրաստ  
ե. (ժպտալով) միայն յես վախենում եմ, չլինի թե ձեր նոր մե-  
դիումը ձեզ ամոթով անի:

Լեոն. Ֆ.—Վոչ, մենք Ալեքսեյ Վլադիմիրովիչի հետ վոր-  
ձեցինք նրան: Զարմանալի ուժեղ մեդիում ե:

Ֆեոդ. Իվ.—Այդ արդեն չգիտեմ, միայն պետք ե տեսնել,  
թե նա մաքճւր ե արդյոք: Այ, դուք հոգ չտարաք վրանալ տալ  
նրա ձեռքերը, թե չե, համենայն դեպս անհարմար ե:

Լեոն. Ֆ.—Ձեռքերը, ախ, այո, կեղտոտ կլինի դու կար-  
ծում ես:

Ֆեոդ. Իվ.—Բա ի՛նչ կլինի, ուսմիկ մարդ ե, իսկ այստեղ  
տիկիներ, Մարիա Վասիլևիչնան...

Լեոն. Ֆ.—Դե շատ լավ:

Ֆեոդ. Իվ.—Մեկ ել յես ուզում եյի հայտնել ձեզ, վոր  
կառապան Տիմաֆեյն յեկավ գանդատվեց, վոր շների հետ չի  
կարող մաքրություն պահպանել:

Լեոն. Ֆ.—(Մտաւոր կերպով առաւկաները սեղանի վրա  
դասավորելով) Ի՞նչ շներ:

Ֆեոդ. Իվ.—Ինչպես չե. Վասիլիյ Լեոնիդիչը այսոր յե-  
րեք շուն բերեց և տեղավորվեց կառապանների սենյակում:

Լեոն. Ֆ.—(Նեղագած) Ասա Աննա Պավլովնային, ինչպես  
վոր նա կցանկանա, յես ժամանակ չունեմ:

Ֆեոդ. Իվ.—Դուք գիտեք նրա թույլ կողմը...

Լեոն. Ֆ.—Դե, ինչպես վոր նա կուզի, այնպես ել արեք,  
բացի անախորժություններից ուրիշ... վերջապես ժամանակ ել  
չունեմ:

ՏԵՍԻԼ 12

Նույն յեվ Սիմեոն

Սիմեոն.—(Գոգնցով, մեմում ե յեվ ժպտում) Հրամայել եք  
գալ:



ԼԵՈՆ. Ֆ.—Այո, այո, ցույց տուր ձեռքերդ, դե, շատ լավ է, շատ լավ. ահա այսպես, սիրելիս, դու այնպես կանես, ինչ վոր ատաջ արիր: Նստիր յենթարկվիր զգացմունքներիդ, իսկ ինքդ վնչ մի բանի մասին մի մտածիր:

ՍԻՄԵՈՆ.—Ի՞նչ պիտի մտածեմ, քանի մտածեմ, այնքան վատ:

ԼԵՈՆ. Ֆ.—Այո, այո, այո, վորքան քիչ գիտակցություն, այնքան ավելի ուժեղ կլինի: Մի մտածիր, այլ հանձնվիր տրամադրությանդ, յերբ կուզենաս քնել, քնիր: Կուզենաս ման գալ —ման արի. հասկանում ես:

ՍԻՄԵՈՆ.—Ի՞նչու չեմ հասկանում, այստեղ մի խորամանկություն հարկավոր չէ:

ԼԵՈՆ. Ֆ.—Յեղ գլխավորն ե չզիտթվես, թե չե ինքդ ել կգարմանս: Հասկացիր, վոր ինչպես մենք ենք ապրում, այնպես ել վորդիների անտեսանելի աշխարհն ե ապրում այստեղ:

ՖԵՈՂ. ԻՎ.—(Ուղղելով) Անտեսանելի զգացմունքներ, հասկանում ես:

ՍԻՄԵՈՆ.—Ինչո՞ւ չեմ հասկանում, ինչպես դուք ասացիք, այդ ամբողջն ել շատ հասարակ բան ե:

ԼԵՈՆ. Ֆ.—Կարող ես բարձրանալ ողի մեջ, կամ թե մի ուրիշ բան, չվախենաս:

ՍԻՄԵՈՆ.—Ինչո՞ւ պիտի վախենամ: Ամեն բան կարող ե պատահի:

ԼԵՈՆ. Ֆ.—Դե ուրեմն, յես գնամ կանչեմ բոլորին... Ամեն ինչ պատրաստ ե:

ՖԵՈՂ. ԻՎ.—Համարյա ամեն ինչ:

ԼԵՈՆ. Ֆ.—Իսկ քարետախտակները:

ՖԵՈՂ. ԻՎ.—Ներքեն ե, իսկույն կբերեմ:

ՏԵՍԻԼ 13

Լեոնիդ Ֆեոդորովիչ յեղ Սիմեոն

ԼԵՈՆ. Ֆ.—Այ, այդպես լավ ե, ուրեմն դու՞մի շփոթվիր և քեզ ազատ պահիր:

ՍԻՄԵՈՆ.—Լավ չի լինի գոգնոցս հանեմ. ազատ կլինեյի:

ԼԵՈՆ. Ֆ.—Գոգնոցդ վոչ, վոչ, հարկավոր չէ: (Գնում ե):

ՏԵՍԻԼ 14

Սիմեոն (մեռակ)

ՍԻՄԵՈՆ.—Ելի պատվերեց անել նույնը, իսկ ինքը պետք է բաներ դես ու դեն շարտե. ի՞նչպես ել չի վախենում:

ՏԵՍԻԼ 15

Սիմեոն յեղ Տանյա

ՏԱՆՅԱ.—(Մտնում ե առանց կոշիկների, պասի պասառների գույնի զգեստ հագած):

ՍԻՄԵՈՆ.—(Բեքում ե):

ՏԱՆՅԱ.—(Ձեռք բերանին դրած) Ս ս ս... կլսեն. ահա մտնելիդ լուցկիներ կպցրու, ինչպես ատաջ արիր. (կպցնում ե) Ի՞նչ ե, ամեն բան հիշում ես:

ՍԻՄԵՈՆ.—(Չոելով մտները) Առաջ ու առաջ լուցկիները թաց անել. թափ տալ—մեկ. մյուս գործը ատամները կրճատցնել, այսպես... չերկուս. ա՛յ, յերբորդը մոռացա...

ՏԱՆՅԱ.—Հենց յերբորդը ամենից գլխավորն ե, լավ հիշիր, յերբ վոր թողլիք սեղանի վրա կ'ընկնի—յես ել կզանգահարեմ, դուն իսկույն, ձեռքերով, ա՛յ այսպես... լայն բաց արա և ձեռքդ գցի, ով վոր մտող նստած ե, նրան ել ձեռքդ գցի, և հենց վոր կփաթաթվես, լավ սեղմի (բեքում ե) աղեն կլինի, թե խանումը —սեղմի: Հենց սեղմի և մի թողնի. իբր թե քնիդ մեջ ես, ատամներով ել կրճատցրու կամ բառաչիր, ա՛յ այսպես... (բառաչում ե) իսկ յերբ յես կիթառը կսկսեմ ածել, այնպես արա, իբր զարթնում ես, ձգվիր, գիտես այսպես և զարթիր, բոլորը հիշում ես:

ՍԻՄԵՈՆ.—Հիշում եմ բոլորը, միայն թե շատ ծիծաղելի յե:

ՏԱՆՅԱ.—Բայց դու մի ծիծաղիր. թե վոր ծիծաղես ել, դա վնաս չունի, նրանք կկարծեն թե քնի մեջ ես ծիծաղում: Մի բան միայն, իսկապես չքնես, յերբ վոր նրանք ճրագը կհանգցրնեն:

ՍԻՄԵՈՆ.—Մի վախենար, յես իմ ականջներիցս կ'կամթեմ:

ՏԱՆՅԱ.—Դե՞ ուրեմն նայիր, Սիմոնկա, սիրելիս: Արա ամենը, մի վախենար: Կստորագրի թողլիք, ա՛յ կտեսնես. գալիս են: (Մտնում ե բազմոցի տակ):

ՏԵՍԻԼ 16

Նույն, Գրոսմանը, պրոֆեսորը, Լեոնիդ Ֆեոդորովիչը, հաստ սիկիեր, բծիկը, Սախասովը, ամսխուրուհին: (Սիմեոնը կանգնած ե դռան մոտ)

ԼԵՈՆ. Ֆ.—Խնդրեմ, համեցեք, բոլոր չհավատացողներ. չնա-



յելով վոր մեղիումը նոր է, պատահական է, յես այսոր սպասում եմ, վոր կհայտնվին շատ նշանակալից յերևույթներ:

ՄԱԽԱՏ.—Շատ հետաքրքրական է, շատ:

ՀԱՍՏ. ՏԻԿ.—(Սիմեոնին նայելով) Mais il et tres bien.

ՏԱՆՏԻՐ.—Ինչպես բուժեալի ծառա, այո, բայց միայն...

ՄԱԽԱՏ.—Կանայք միշտ չեն հավատում իրենց մարդոց գործերին. դուք բոլորովին չեք ուզում հավատար:

ՏԱՆՏԻՐ.—Իհարկե վոչ. Կապչիչի մեջ, ձիշտ է, ելի մի առանձնահատուկ բան կար, բայց սա արդեն աստված գիտե, թե ինչ բան է:

ՀԱՍՏ. ՏԻԿ.—Վոչ, թույլ ավեք, Աննա Պավլովնա, այդ չի կարելի այդպես վճռել: Յերբ վոր յես դեռ մարդու չեյի գնացել, տեսա մի գարմանալի յերազ: Յերազները գիտեք լինում են աչնպես, վոր դուք չգիտեք, թե յերբ են սկսվում, յերբ են վերջանում: Հենց յես մի այդպիսի յերազ տեսա...

ՏԵՍԻԼ 17

Նույնք, Վախիլի Լեոնիդիչ յել Պեսրիչեյի

ՀԱՍՏ. ՏԻԿ.—Յեկ ինձ համար շատ բան պարզվեց այդ յերազով: Հիմա մեր ժամանակում այդ յերիտասարդները (ցույց տալով Պեսրիչեյիին յել Վախիլի Լեոնիդիչին) ամեն բան հերքում են:

ՎԱՍ. ԼԵ.—Իսկ յես յերբեք, յես ձեզ ասեմ վոչինչ չեմ հերքում: Ա, ինչպես:

ՏԵՍԻԼ 18

Նույնք, մեկուս եմ Բեդսի յել Մարիա Կոնստանտինովնա (սկսում են խոսակցել Պեսրիչեյի հետ)

ՀԱՍՏ. ՏԻԿ.—Ինչպես կարելի չե հերքել գերբնականը, ասում են համաձայն չե բանականության: Գուցե բանականութունն է հիմար, այն ժամանակ, ոյ ահա, Մադովայա փողոցում, դուք լսել եք—ամեն գիշեր հայտնվում եր: Մարդուս յեղբայրը, այդ ինչպես է կոչվում... վոչ beau frere այլ մեր լեզվով, վոչ կերասար, այլ ինչ վոր մի ուրիշ տեսակ... յես յերբեք չեմ կարող միտքս պահել այդ անունները, հա, նա յերբեք գիշեր միմյանց վրա գնաց է այնուամենայնիվ վոչինչ չտեսալ, և յես ասում եմ...

ԼԵՈՆ. Փ.—Ուրեմն ո՞վ է ո՞վ է մնում:

ՀԱՍՏ. ՏԻԿ.—Յես, յես:

ՄԱԽԱՏ.—Յես:

ՏԻՐՈՒՀԻ—(Բժշկին) Միթե դուք ել եք մնում:

ԲԺՒՇԿ—Այո, պետք է գոնե մի անգամ նայել այստեղ ինչ է գտնում Ալեքսեյ Վլադիմիրովիչը: Առանց ապացույց ունենալու հերքել նույնպես չի կարելի:

ՏԻՐՈՒՀԻ—Ուրեմն անպատճառ ընդունել այս յերեկո:

ԲԺՒՇԿ—Ո՞ւմ ընդունել... ամ, գեղի մասին է խոսքը, այո, ընդունեք լավ կլինի, այո, այո, ընդունեցեք... յես կանցնեմ:

ՏԻՐՈՒՀԻ—Խնդրեմ, (բարձր) յերբ վոր կվերջացնեք messieurs et mesdames, խնդրեմ համեցեք ինձ մոտ հուշերից հանդրատանալու, վիստն ել կվերջացնենք:

ՀԱՍՏ. ՏԻԿ.—Մնապատճառ:

ՄԱԽԱՏ.—Այո, այո:

ՏԻՐՈՒՀԻ—(Գնում է):

ՏԵՍԻԼ 19

Նույնք, առանց ցանկառու

ԲԵԴՍԻ—(Պեսրիչեյիին) Յես ձեզ ասում եմ մնացեք, յես ձեզ խոստանում եմ արտասովոր բաներ, ուզում եք գրազ գանք:

ՄԱՐԻԱ Կ.—Բայց միթե դուք հավատում եք:

ԲԵԴՍԻ—Այսոր հավատում եմ:

ՄԱՐԻԱ Կ.—(Պեսրիչեյիին) Իսկ դուք հավատում եք:

ՊԵՏՐԻՇ.—«Վոչ հավատամ, վոչ հավատամ խոստմանց նենգավորը» դե, յեթե Յելիզավետա Անդրեևնան հրամայում է...

ՎԱՍ. ԼԵ.—Մնանք, Մարիա Կոնստանտինովնա, ամ, ինչպես, յես մի épatant բան կմտածեմ:

ՄԱՐԻԱ Կ.—Վոչ, դուք մի ծիծաղեցնեք, յես չեմ կարող ինձ զսպել:

ՎԱՍ. ԼԵ.—(Բարձր) Յես մնում եմ:

ԼԵՈՆ. Փ.—(Խիստ) Խնդրում եմ նրանց, վորոնք մնում են, կատակներ չանեն, սա լուրջ գործ է:

ՊԵՏՐԻՇ.—Լսում ես. դե ուրեմն մնանք. Վովո, այստեղ նրստիք, տես, չվախենաս:

ԲԵԴՍԻ—Դուք ծաղրում եք, այ, շուտով կտեսնեք թե ինչեր կլինի:

ՎԱՍ. ԼԵ.—Իսկ ի՞նչ կանենք, յեթե իսկապես մի բան լինի. այ թե ինչ ոյին կլինի. ամ, ինչպես:

ՊԵՏՐԻՇ.—(Գողում է) Վայ, վախենում եմ, վախենում, Մարիա Կոնստանտինովնա վախենում եմ, վոտքերս դողում են:



վաղուց: Գուշակություններ, նախազգացումներ, տեսիլքներ և  
և ուրիշ շատ բաներ, վոչ այլ ինչ են, յեթե վոչ մեղիումական  
եներգիացի արտահայտություն: Նրանց առաջացրած յերևույթ-  
ները հայտնի յեն վաղուց հետե, բայց ինքը եներգիան մինչև  
վերջին ժամանակներս չեր ընդունվում վորպես այդպիսին, մին-  
չև վոր ընդունելի չեղավ այն միջավայրը, վորի յերերումը և  
առաջացնում է մեղիումական յերևույթներ, և ճիշտ այնպես, ինչ-  
պես լույսի յերևույթները ընդունելի չեղան այնքան ժամանակ,  
մինչև վոր ընդունվեց անկշիռ նյութի, յեթերի գոյությունը:  
Այնպես ել մեղիումական յերևույթները թվում ելին խորհրդա-  
վոր այնքան ժամանակ, մինչև վոր ընդունելի չեղավ այն, ներ-  
կայումս անկասկածելի ճշմարտությունը, վոր յեթերի մասնիկ-  
ների ծալքերում գտնվում է, ուրիշ յեթերից ավելի նուրբ, ան-  
կշիռ նյութ, յերեք չափի որենքներին չենթարկվող...

(Նորից թուկ, քրիզ յեկ նշոցեք)

ՊՐՈՅԵՍ.—(Նորից խիստ հայտնի է ձգում իր շուրջը) Յեկ  
ճիշտ այնպես, ինչպես մաթեմատիկական հաշվարկումները ապա-  
ցուցել են անկշիռ յեթերի անվիճելի գոյությունը, յեթերի, վոր  
առաջացնում է լույսի և էլեկտրականության յերևույթները,  
այնպես ել հանճարավոր Հերմանի, Շմիտի և Իոսիֆ Շմա-  
ցոֆենի մի շարք փայլուն և ամենաճիշտ փորձերը ապացուցել  
են այն նյութի գոյությունը, վորով լցված է տիեզերքը և վորոնց  
կարող է անվանել հոգևոր յեթեր:

ՀԱՍՏ. ՏԻԿ.—Այո, այժմ յես հասկանում եմ. ինչպես յես  
շնորհակալ եմ...

ԼԵՈՆ. Ֆ.—Այո, բայց չի՞ կարելի արդոք Ալեքսեյ Վլադի-  
միրովիչ, մի քիչ կրճատել:

ՊՐՈՅԵՍ.—Յեկ այդպես զուտ գիտական փորձերի և հետա-  
գոտությունների մի շարք, ինչպես պատիվ ունեցա ձեզ հաղոր-  
դել, մեզ պարզեցին մեղիումական յերևույթների որենքները:  
Այդ փորձերը մեզ պարզեցին այն, վոր մի քանի անձնավորու-  
թյունների հիպոտետիկալ դրության մեջ ընկնելը, սովորական  
քնից տարբերվում է միայն այն բանով, վոր այդ դրության  
մեջ յեղած միջոցին ֆիզիկոլոգիական գործունեությունը, վոչ մի-  
այն չի նվազում, այլ միշտ սաստկանում է, ինչպես քիչ առաջ  
տեսանք այդ—բանից յերևաց, վոր վորևե անհատի այդ տեսակ  
դրության մեջ ընկնելը, հոգեկան յեթերում անպայման առաջաց-  
նում է շարժումներ, բոլորովին նման այն յերևույթին, յերբ

մի կոշտ մարմին, սուզվում է հեղուկի մեջ: Այդ շարժումներն  
ել այն են, ինչ վոր մենք կոչում ենք մեղիումական յերևույթ-  
ներ... (քրիզ յեկ թուկ):

ՍԱԽԱՍ.—Այդ կատարելապես ճշմարիտ է և հասկանալի յե-  
բայց թույլ տվեք հարցնել, յեթե վոր, ինչպես դուք հաճեցիք ասել  
մեղիումի քնի մեջ ընկնելը առաջացնում է հոգեկան յեթերի շար-  
ժումներ, ել ինչո՞ւ համար այդ շարժումներն արտահայտվում  
են, մշտապես ինչպես այդ կարգի սեանսների ժամանակ սովոր-  
ապես ընդունված է, մեռած անձնավորությունների հոգիների  
գործունեության յերևույթներով:

ՊՐՈՅԵՍ.—Վորովհետև այդ հոգեկան յեթերի մասնիկները  
վոչ այլ ինչ են, յեթե վոչ կենդանի, մեռած և չմեռած մարդ-  
կանց հոգիները, այնպես վոր, այդ հոգեկան յեթերի ամեն մի  
ցնցումը անպայման առաջացնում է նրա մասնիկների վորևե  
շարժում: Այդ մասնիկներն ել վոչ այլ ինչ են, յեթե վոչ այն  
մարդկանց հոգիները, վորոնք, այդ շարժումով կապակցվում են  
միմյանց հետ:

ՀԱՍՏ. ՏԻԿ.—(Սախասովին) Ի՞նչ կա այստեղ չհասկանալու:  
Դա այնքան հասարակ բան է... շատ, շատ շնորհակալ եմ ձե-  
զանից:

ԼԵՈՆ. Ֆ.—Յես կարծում եմ այժմ ամեն բան պարզ է, և  
մենք կարող ենք սկսել:

ԻժԻՇԿ.—Տղան շատ նորմալ դրության մեջ է, Չերմու-  
թյունը 37 և 2. զարկերակը 74:

ՊՐՈՅԵՍ.—(Հանում է հուշատետր յեկ գրի յե առևում) Ապա-  
ցույց այն բանի, վոր յես պատիվ ունեցա հաղորդել ձեզ, կա-  
րող է ծառայել այն, վոր մեղիումի քնի մեջ ընկնելը անխու-  
սափելիորեն, ինչպես այժմ մենք կտեսնենք, կառաջացնի Չեր-  
մություն և զարկերակի բարձրացում, ճիշտ այնպես, ինչպես  
հիպնոզի ժամանակ:

ԼԵՈՆ. Ֆ.—Այո, այո, ներողություն, յես միայն ուզում  
ելի հարցնել Սերգեյ Իվանովիչին այն մասին, վոր նա հարցրեց  
—ինչպես ենք մենք իմանում, վոր մեզ հետ հարաբերություն են  
ուսնենում մեռելների հոգիները: Մենք այդ իմանում ենք նրա-  
նից, վոր այն վոզին, վորը գալիս է, ուղղակի մեզ, ասում է—  
պարզ, ինչպես յես խոսում եմ—ասում է մեզ թե ո՞վ է նա, և  
ինչո՞ւ յե յեկել, և վորտեղ է, լսվ է զգում իրեն. վերջին սե-  
անսում յեկավ սպանացի Դոն—Կաստիլիոսը և նա ամեն բան



մեզ ասաց: Նա մեզ ասաց, թե ով է ինքը, չե՞րբ է մեռել և այն, թե ի՞ր համար շատ ծանր է այն բանը, վոր նա մասնակցել է ինկվիզիցիայի որերին: Բացի դրանից, նա մեզ հաղորդեց և այն, թե ինչ պատահեց նրան, յերբ նա խոսում եր մեզ հետ. նա պետք է նորից ծնվեր յերկրում և դրա համար չկարողացավ վերջացնել մեզ հետ սկսած խոսակցութունը... Այ, հիմա դուք ինքներդ կտեսնեք:

ՀԱՍՏ. ՏԻԿ.—(տոսքը կտեսնու) Ա՛խ, ինչ հետաքրքրական է, կարելի չէ թե հիմա մեր տանը ծնվեց սպանացին և ինչ վոքքիկ է հիմա:

ԼԵՈՆ. Ֆ.—Շատ կարելի չէ:

ՊՐՈՖԵՍ.—Յես կարծում եմ ժամանակ է սկսելու:

ԼԵՈՆ. Ֆ.—Յես հենց ուզում եյի ասել...

ՊՐՈՖԵՍ.—Արդեն բավական ուշ է:

ԼԵՈՆ. Ֆ.—Դե լավ, ուրեմն կարող ենք սկսել, խնդրեմ,

Անտոն Բարխուդիչ, քնացրեք մեզիումին:

ԳՐՈՍՄԱՆ.—Ի՞նչպես կուզեք վոր քնացնեմ այս աղային. գործածելի շատ տեսակներ կան, Բրեդի միջոցը, կամ յեզիպտական սիմվոլը՝ կա Շարկոյի մեթոդը:

ԼԵՈՆ. Ֆ.—(Պրոֆեսորին) Այդ միեւնույն է յես կարծում եմ:

ՊՐՈՖԵՍ.—Այո, միեւնույն է:

ԳՐՈՍՄԱՆ.—Դե ուրեմն, յես գործ կզնեմ իմ միջոցը, վոր յես գործադրել եմ Ողեստում:

ԼԵՈՆ. Ֆ.—Խնդրեմ, խնդրեմ:

ԳՐՈՍՄԱՆ.—(Ձեռքով հովհարում է Սիմեոնի յերեսն ի վեր. Սիմեոնը վազում է աչքեր յել ձգվում է):

ԳՐՈՍՄԱՆ.—(Նայում է Սիմեոնի յերեսին) Արդեն քնում է, քնեց: Հիպնոզի գարմանալի արագ առաջացում, ակնհայտնի յե, վոր այս մարդն արդեն հասավ անզգայական դրության: Զարմանալի և արտասովոր շուտ յենթարկվող անձնավորութուն: Սա կարող եր շատ հետաքրքրական փորձերի պետք գալ... (նրսում է, վեր է կենում յել նորից նստում): Հիմա կարելի չէ ծակել սրա ձեռքերը, յեթե ցանկանում եք...

ՊՐՈՖԵՍ.—(Լեոնի քննարկիչին) Նկատում եք, ինչպես մեզիումի քունը ներգործում է Գրոսմանի վրա: Նա սկսում է յերեքվել:

ԼԵՈՆ. Ֆ.—Այո, այո... Հիմա կարելի չէ հանգցնել:

ՍԱՆԱՍ.— Բայց ի՞նչ է հարկավոր մթությունը:

ՊՐՈՖԵՍ.—Մթությունը, նրա համար, վոր մթությունը այն պայմաններից մեկն է, վորի ժամանակ յերևան է գալիս մեզիումական ուշօր արտահայտությունը, ինչպես վոր վորոշ բարեխառնությունը պայման է քիմիական կամ դինամիքական եներգիայի արտահայտության:

ԼԵՈՆ. Ֆ.—Վոչ միշտ, շատերին, ինչպես և ինձ հայտնվել են և մոմի լույսով, ինչպես և արևի ժամանակ:

ՊՐՈՖԵՍ.—(տոսքը կտեսնու) Կարելի չէ հանգցնել:

ԼԵՈՆ. Ֆ.—Այո, այո, (հանգցնում է մոսեր) պարոններ, այժմ ինդրում եմ ուշադրություն:

ՏԱՆՅԱ.—(Դուրս է գալիս բազմոցի ակից յել ձեռքն է առնում մեծ մոմակալին կապած քելի մի ծայրը):

ՊԵՏՐՈՅ.—Ձե, ինձ շատ դուր յեկավ սպանացին, թե ինչպես նա խոսակցության կեսին մեջ ընկավ... ինչպես ասում են pigur une tête:

ԲԵՆՍԻ.—Վոչ, դուք դեռ սպասեցեք տեսեք ինչ է լինելու:

ՊԵՏՐՈՅ.—Իսկ յես վախում եմ թե Վոլոն խողովի պես չձգձգա:

ՎԱՍ. ԼԵ.—Ողում եք յես կանեմ...

ԼԵՈՆ. Ֆ.—Պարոններ, ինդրում եմ չխոսել, խնդրում եմ... (լուսքում):

ՍԻՄԵՈՆ.—(Լիզում է մասը, քում է ձեռքում բռնած լուցիներին յել օարծվում է):

ԼԵՈՆ. Ֆ.—Լույս, տեսնում եք լույսը:

ՍԱՆԱՍ.—Լույս, այո, այո, տեսնում եմ: Բայց թույլ աըվեք...

ՀԱՍՏ. ՏԻԿ.—Ո՛ւր է, ո՛ւր է, վայ յես չտեսա, ահա, ահա տեսա, ախ...

ՊՐՈՖԵՍ.—(Լեոնի քննարկիչին, ցածր ձայնով ինչ վոր ասում է ցույց տալով Գրոսմանին, վոր օարծվում է) Դուք նկատում եք, թե նա ինչպես յերեքվում է: Կրկնակի ուշօ (նորից լույս է յերեկում):

ԼԵՈՆ. Ֆ.—(Պրոֆեսորին) Այ ահա, սա նա յե:

ՍԱՆԱՍ.—Ո՛վ է:

ԼԵՈՆ. Ֆ.—Հույն Նիկոլայը: Նրա լույսն է, այդպես չէ, Ալեքսեյ Վլադիմիրովիչ:

ՍԱՆԱՍ.—Ի՞նչ բան է հույն Նիկոլայը:



ՊՐՈՑԵՍ.—Վոյն հուզն, Բյուզանդիայում արեղա, Կոնստանդին մեծի ժամանակ, և վորը վերջերս այցելում ե մեզ:

ՀԱՍՏ. ՏԻԿ.—Ո՛ւր ե, ո՛ւր ե նա, յես չեմ տեսնում:

ԼԵՈՆ. Ֆ.—Նրան դեռ չի կարելի տեսնել... Ալեքսեյ Վլադիմիրովիչ, նա միշտ առանձնապես բարեհաճ ե դեպի ձեզ, հարց տվեք նրան...

ՊՐՈՑԵՍ.—(Մի առանձին ձայնով) Նիկոլայ, այդ դժե չես...

ՏԱՆՅԱ.—(Յերկու անգամ պատին քիսկացնում ե):

ԼԵՈՆ. Ֆ.—(Ուրախացած) Նա չե, նա չե:

ՀԱՍՏ. ՏԻԿ.—Վայ, վայ, յես հեռանում եմ այստեղից:

ՍԱՆԱՍ.—Ինչից եք յենթադրում, վոր նա չե:

ԼԵՈՆ. Ֆ.—Յերկու հարված, դրական պատասխան ե, թե չե լուսթյուն կլիներ: (Լուսթյուն. զայված ծիծաղ յերիսասարգների մեջ):

ՏԱՆՅԱ.—(Սեղանի վրա յե ձգում լամպի լուսամփոփք, մասիս, գրիչների մաքրիչը):

ԼԵՈՆ. Ֆ.—(Յած ձայնով) Նկատում եք պարոններ, անա լամպի լուսամփոփքը, ելի ինչ վոր մի բան, մատիտ, Ալեքսեյ Վլադիմիրովիչ, մատիտ:

ՊՐՈՑԵՍ.—Լավ ե, լավ ե, յես հետևում եմ թե այդ բաներին և թե Գրոսմանին, դուք նկատում եք:

ԳՐՈՍՄԱՆ.—(Վեր ե կենում յեվ մտիկ ե քալիս սեղանի յերեսի վրա ընկած առարկաներին):

ՊՐՈՑԵՍ.—Այո, այո, տարրինակ ե, տարրինակ ե:

ՍԱՆԱՍ.—Սպասեցեք, յես կուզեյի տեսնել թե այդ ամենը վորտեղից ե:

ԼԵՈՆ. Ֆ.—Կասկածում եք, դե, ուրեմն մոտ նստեցեք և բռնեցեք ձեռքից և համոզված յեղեք, վոր նա քնած ե:

ՍԱՆԱՍ.—(Մոտենում ե, գլխով կաշում ե քելին, վոր բաց ե քաղնում Տանյան յեվ վախեցած կռանում ե, բռնում ե Սիմեոնի արմուկից): Այո... ո-ո Տարրինակ ե, տարրինակ:

ՄԻՄԵՈՆ.—(Բառաչում ե):

ՊՐՈՑԵՍ.—(Լեռնիդ Ֆեոդորովիչին) Լսում եք ինչպես ե աղում Գրոսմանի ներկայությունը: Նոր յերևույթ ե, պետք ե դրի րել: (Վազում ե մի կողմ յեվ գրում ե, հետս վերադառնում իր

ՆՈՆ. Ֆ.—Բայց չի կարելի Նիկոլային թողնել առանց պապետք ե սկսել...

ԳՐՈՍՄԱՆ.—(Վեր ե կենում, մոտենում ե Սիմեոնին, նրա ձեռք բարձրացնում ե յեվ նորից իջեցնում) Հիմա հետաքրքրական կըլիներ կոնտրակտուրա կատարել, տղան լիակատար հիպնոզի մեջ ե գտնվում:

ՊՐՈՑԵՍ.—(Լեռնիդ Ֆեոդորովիչին) Դուք տեսնում եք, տեսնում եք:

ԳՐՈՍՄԱՆ.—Յեթե դուք կցանկաք...

ԲԺԻՇԿ.—Դե, թույլ տվեք սիրելիս, թող Ալեքսեյ Վլադիմիրովիչը կարգադրություններ անի, լուրջ բան ե դուքս գալիս: ՊՐՈՑԵՍ.—Թողեք նրան, նա արդեն քնի մեջ ե խոսում:

ՀԱՍՏ. ՏԻԿ.—Ինչպես ուրախ եմ, վոր վորոշեցի մնալ, սարսափելի չե, բայց և այնպես յես ուրախ եմ, վորովհետե յես մարդու միշտ ասում եյի...

ԼԵՈՆ. Ֆ.—Խնդրում եմ լռեք:

ՏԱՆՅԱ.—(Թելն անց ե կացնում հաստ քիկնոջ գլխով):

ՀԱՍՏ. ՏԻԿ.—Վայ:

ԼԵՈՆ. Ֆ.—Ի՞նչ ե, ի՞նչ ե:

ՀԱՍՏ. ՏԻԿ.—Նա իմ մազերս բռնեց: ԼԵՈՆ. Ֆ.—(Յածռ ձայնով) Մի վախենաք, վոչինչ, տվեք նրան ձեր ձեռքը. ձեռքը լինում ե սառը բայց յես սիրում եմ այդ:

ՀԱՍՏ. ՏԻԿ.—(Փախցնելով ձեռքը) Վոչ մի պայմանով:

ՍԱՆԱՍ.—Այո, տարրինակ ե, շատ տարրինակ ե:

ԼԵՈՆ. Ֆ.—Նա այստեղ ուղում ե մեզ հետ հաղորդակցության մեջ մտնել, ով ե ուզում վորևե բան հարցնել:

ՍԱՆԱՍ.—Թույլ տվեք յես հարցնեմ:

ՊՐՈՑԵՍ.—Յեղեք այդքան բարի:

ՍԱՆԱՍ.—Յես հավատում եմ թե վոչ:

ՏԱՆՅԱ.—(Խփում ե յերկու անգամ):

ՊՐՈՑԵՍ.—Պատասխանը դրական ե:

ՍԱՆԱՍ.—Թույլ տվեք յես մի բան ել հարցնեմ, իմ զբրպանումս տաս ըուրլիանոց թղթադրամ կա թե վոչ:

ՏԱՆՅԱ.—(Խփում ե ռաս անգամ յեվ քելը անց ե կացնում Սալասովի գլխին ֆելով):

ՍԱՆԱՍ.—Ա՛խ... (ձեռքն ե գցում քելը յեվ կհրում ե):

ՊՐՈՑԵՍ.—Յես կխնդրեյի ներկա յեղողներից չանել առորոչ և կատակաձև հարցեր, նրան անհաճո յե:

ՍԱՆԱՍ.—Չե, թույլ տվեք, իմ ձեռքում թեղ կա:



ԼԵՈՆ. Ֆ.—Թե՛ր, բռնեցե՛ք այդ թե՛լը, դա հաճախ է պատահում. վոչ միայն թե՛լ, այլ մետաքսյա ժապավեններ, շատ հնազարդյան տեսակից:

ՍՍ.ՆԱՍ.—Վոչ, իսկապես վո՞րտեղից է այդ թե՛լը:

ՏԱՆՅԱ.—(Ձգում է նրա վրա բարձր):

ՍՍ.ՆԱՍ.—Սպասեցե՛ք, սպասեցե՛ք, ինչ վոր փափուկ բան գլխիս դիպավ. լույս տվե՛ք, այստեղ ինչ վոր բան...

ՊՐՈՑԵՍ.—Մենք ձեզ խնդրում ենք չխանդարել հայտադործությունները:

ՀԱՍ. ՏԻԿ.—Ի սեր ասածո մի խանդարեք, չես ել ուզում եմ բան հարցնել. կարելի՞ յե:

ԼԵՈՆ. Ֆ.—Կարելի յե, կարելի յե, հարցրե՛ք:

ՀԱՍ. ՏԻԿ.—Յես ուզում եմ հարցնել, իմ ստամոքսի մասին, կարելի՞ յե. յես ուզում եմ հարցնել թե ի՞նչ դեղ ընդունեմ, աղոնի՞տ, թե բելլադոնա:

(Լուսքյուն, յերիսասարգների միջեվ ցածր խոսակցություն. յեվ հանկարծ Վաս. Լեոնիդիչը նշում է ինչպես ծծի յերիսա) ուււ, ուււ: (Քրիչ, որիորդներ բռնելով քերք յեվ բերաններ յեվ փոքկալով Պես-րիչեվի հետ դուրս են վազում):

ՀԱՍ. ՏԻԿ.—Հա, դա ճիշտ է, այն արեղան նորից ծնվեց:

ԼԵՈՆ. Ֆ.—(Կատաղություն, բարկացիկ յեվ ցածր ձայնով) Հիմարություններից բացի, քեզանից ուրիշ բան սպասել չի կարելի: Յեթե դու քեզ չես կարող վայելուչ պահել, գնա:

ՎԱՍ. ԼԵ.—(Գնում է):

ՏԵՍԻԼ 20

Լեոնիդ Ֆեոդորովիչ, պրոֆեսոր, հաս սիկին, Սախասով, Գրուաման, բժիշկ, Սիմեոն յեվ Տանյա (մուք յեվ լուռ)

ՀԱՍ. ՏԻԿ.—Ա՛յ ափսոս, հիմա արդեն չի կարելի հարցնել. նա ծնվեց:

ԼԵՈՆ. Ֆ.—Բողբովին վոչ. դա Վովոյի հիմարությունները են: Իսկ նա այստեղ է, հարցրե՛ք:

ՊՐՈՑԵՍ.—Դա հաճախ է պատահում, այդ կատակները, ծաղր ու ծանակը սովորական յերևույթներ են. յես կարծում եմ, վոր նա դեռ այստեղ է, ասենք մենք կարող ենք հարցնել, Լեոնիդ Ֆեոդորովիչ, դո՞ւք կհարցնեք:

ԼԵՈՆ. Ֆ.—Վոչ, խնդրեմ, դուք, այդ ինձ վրդովեցրեց, ինձ դուր չի գալիս, դա անտակա վերաբերմունք է:

ՊՐՈՑԵՍ.—Լավ... լավ, Նիկոլայ, դու դեռ այստեղ ես: (Տանյան յերկու անգամ բաղխում է յեվ գանգահարում: Սիմեոնը սրկսում է բառաչել յեվ ձեռքեր ստրածել, բռնում է Սախասովին— յեվ պրոֆեսորին յեվ սեղմում է նրանց):

ՊՐՈՑԵՍ.—Ի՛նչ անսպասելի յերևույթ, ներդործություն հենց իրեն, մեղումի վրա. այսուխի բան չեր պատահել: Լեոնիդ Ֆեոդորովիչ, դիտեցե՛ք, ինձ անհարմար է, նա սեղմում է ինձ: Մեկ նայեցե՛ք ինչ է անում Գրոսմանը. հիմա հարկավոր է լիակատար ուշադրություն:

(Տանյան գյուղացիների պայմանաբուլքը գցում է սեղանի վրա):

ԼԵՈՆ. Ֆ.—Ինչ վոր բան ընկավ սեղանի վրա:

ՊՐՈՑԵՍ.—Նայեցե՛ք ի՛նչ ընկավ:

ԼԵՈՆ. Ֆ.—Թուղթ, մի թերթ ծալված թուղթ: (Տանյան գցում է հանապարհորդական քանախամանը):

ԼԵՈՆ. Ֆ.—Թանաքաման:

(Տանյան գցում է գրիչը):

ԼԵՈՆ. Ֆ.—Գրիչ:

(Սիմեոն մոնչում է յեվ սեղմում):

ՊՐՈՑԵՍ.—(Սեղմված) Սպասեցե՛ք, թույլ տվե՛ք. բողբովին նոր յերևույթ: Գործում է այստեղ վոչ թե առջացրած մեղիումական ույժը, այլ ինքը մեղիումը: Համենայն դեպս բաց արեք թանաքամանը, և դրիչը դեք թղթի վրա, նա կգրի:

(Տանյան հետեվից մտնելում է Լեոնիդ Ֆեոդորովիչին յեվ կիթառով խփում է գլխին):

ԼԵՈՆ. Ֆ.—Գլխիս խփեց, (նստում է սեղանի վրա) գրիչը դեռ չի գրում, թուղթն էլ ծալված է:

ՊՐՈՑԵՍ.—Նայեցե՛ք ի՛նչ թուղթ է, շուտ արեք, յերեկ նրա և Գրոսմանի կրկնակի ույժն է առջացնում այդ շարժումները:

ԼԵՈՆ. Ֆ.—(Թուղթը ձեռքին դուրս է գնում դեպի դուր յեվ խփույց վերադառնում է) Ձտեսնված բան, այս թուղթը գյուղացիների պայմանագիրն է, վոր այսոր առավոտյան հրաժարվեցի ստորագրելուց: Յեվ հետո տվեցի գյուղացիներին, ինչպես յերեվում է, նա ուզում է, վոր յես ստորագրեմ այդ թուղթը:

ՊՐՈՑԵՍ.—Անկասկած, անկասկած, դե դուք հարցրե՛ք:

ԼԵՈՆ. Ֆ.—Նիկոլայ, մի՞թե դու ցանկանում ես...

(Տանյան բաղխում է յերկու անգամ):

ՊՐՈՑԵՍ.—Լսում եք, աղնայտնի բան:



(Լեոն. Ֆ. վերցնում է գրիչը յեվ դուրս է գնում):

(Տանյան բխրակացնում է, կիրառ յեվ հարմոն է ածում յեվ նորից մեկնում է բազմոցի սակ):

(Լեոն, Ֆ. վերադառնում է):

(Սիմեոն. ձգձգվում է յեվ հազում):

Լեոն. Ֆ.—Նա արթնանում է, կարելի չէ մոմերը վառել:

ՊՐՈՑԵՍ.—(Շատ) Բժիշկ, բժիշկ խնդրում եմ նրա ջերմության աստիճանը և զարկերակը: Դուք կտեսնեք, վոր այս բուսակին կ'երևա ջերմությունը խիստ բարձրացած:

Լեոն. Ֆ.—(Վառում է մոմերը) Դե, ինչպէս է, պարոնայք չհավատացողներ:

Բժիշկ.—(Մոտենում է Սիմեոնին յեվ դնում է ջերմաչափը): Դե, քեզ տեսնեմ յերիտասարդ, ի՞նչ, քնե՛լ եյիր, ապա վեր կաց և ձեռքդ տուր: (Նայում է ժամացույցին):

ՍԱՆՍԱ.—(Ուսերը քափահարում է) Կարող եմ հաստատել, վոր մեղիումը չէր կարող անել այն ամենը, ինչ վոր կատարվեց այստեղ, այդ թե՛լը... յես կցանկանայի բացատրել այդ բանը:

Լեոն. Ֆ.—Թե՛լը, թե՛լը, ինչ է թե՛լը, այստեղ ամենալուրջ յերևույթներ կատարվեցին:

ՍԱՆՍԱ.—Չգիտեմ, համենայն դեպս je reserve mon opinion?

ՀԱՍՏ. ՏԻԿ.—(Սախասովին) Վոչ, ինչպես դուք ասում եք je reserv mon opinion? Իսկ այն մանուկը վորքիկ թևերով, միթե՞ դուք չտեսաք: Յես սկզբից կարծեցի, թե դա միայն ինձ թվում է, բայց հետո պարզ, պարզ տեսա, ինչպես մի կենդանի եակ...

ՍԱՆՍԱ.—Յես կարող եմ ասել այն, ինչ վոր տեսա, իսկ այդպիսի բան չես չտեսա, չտեսա:

ՀԱՍՏ. ՏԻԿ.—Ինչպէս թե. բոլորովին պարզ յերևում եր: Իսկ ձախ կողմից ել մի վարդապետ սև շորերով. կուցավ դեպի նա...

ՍԱՆՍԱ.—(Հեռ—հեռ է գնում) Ինչպիսի՞ չափազանցութուն:

ՀԱՍՏ. ՏԻԿ.—(Դառնում է դեպի բժիշկը) Դուք պետք է վոր տեսնեյիք, նա ձեր կողմից բարձրացավ:

Բժիշկ.—(Չլսելով նրան ջարուհակում է համբել զարկերակը):

ՀԱՍՏ. ՏԻԿ.—(Դրումանին) Իսկ լույսը, նրանից տարածվող լույսը, մանավանդ դեմքի շուրջը, իսկ արտահայտությունը, հեզ, քնքուր, ինչ վոր մի տեսակ յերկնային եր: (Ինքն ել ֆեֆտեմ ժպտում է):

ԳՐՈՍՄԱՆ.—Յես տեսա Փոսֆորային մի լույս. տան մի քանի իրերը տեղափոխվեցին այս ու այն կողմ, ուրիշ վոչինչ չտեսա:

ՀԱՍՏ. ՏԻԿ.—Դե լավ, բավական է, դուք այնպես եք ասում. այդ նրանից է, վոր դուք Շարկոյի դպրոցի գիտնականները չէք ընդունում հանդերձյալ կյանք: Այսուհետև ինձ վոչ վոք չի կարող ապագա կյանքի մասին ունեցածս հավատը փոխել:

ԳՐՈՍՄԱՆ.—(Հաստ սիկնոցից նեռանում է):

ՀԱՍՏ. ՏԻԿ.—Վոչ, վոչ, ինչ ուզում եք ասացեք, բայց սա իմ կյանքի ամենաբախտավոր ընդհանրից մեկն յեղավ: Մեկ, յերբ վոր Սարազարեն նվազում եր, մեկ ել այս... (նրան վոչ վոչ չի լսում, նա մոտենում է Սիմեոնին) մեկ ասո՛ւ ինձ, տղա, դու ի՞նչ եյիր զգում, շո՞տ ծանր եր քեզ համար:

ՄԻՄԵՈՆ.—(Միծաղում է) Հրաման քեզ:

ՀԱՍՏ. ՏԻԿ.—Բայց և այնպես համբերել կարելի՞ չէ:

ՄԻՄԵՈՆ.—Հրաման քեզ: (Լեոնիդ Ֆեդորովիչին) կհրամայեք գնալ:

Լեոն. Ֆ.—Գնա, գնա:

Բժիշկ.—(Պրոնսեսորին) Զարկերակը նույնն է, իսկ տաքությունը իջել է:

ՊՐՈՑԵՍ.—Իջել է, (միտք է աճում յեվ հանկարծ գլխի յե բնկնում). այդպես ել պետք է լիներ, պետք է իջներ: Կրկնակի ույթերը միմյանց հանդիպելով պետք է առաջացնեյին ինչ վոր ինտերֆերենցիա. այո, այո:

(Բոլոր խոսում են միասին դուրս գալով)

Լեոն. Ֆ.—Համենայն դեպս յես ամոսում եմ, վոր մտերիալիզացիան լիակատար չեղավ, բայց և այնպես պարոններ, համեցեք ընդունարան:

ՀԱՍՏ. ՏԻԿ.—Մանավանդ ինձ ապշեցրեց այն, յերբ վոր նա թափահարեց թևերը և տեսա, թե ինչպես նա բարձրացնում եր:

ԳՐՈՍՄԱՆ.—(Սախասովին) Յեթե վոր հետևենք միայն հիպնոզին, կարելի չէ առաջացնել լիակատար ուշաթափություն, հաջողությունը կարող է լինել լիակատար...

ՍԱՆՍԱ.—Հետաքրքրական է, բայց այնքան ել համոզեցուցիչ չէ. ահա ինչ վոր կարող եմ ասել:



Լեռնիդ Ֆեոդորովիչ, բուլղոք ձեռքին. մտնում է Ֆեոդոր Իվանիչը  
ԼԵՈՆ. Ֆ.—Այ քեզ բան, Ֆեոդոր, ի՞նչ սեանս ունեցանք,  
զարմանալի: Բանից չերևում է, վոր, հողը պետք է արվի գյուղ-  
դացիներին, նրանց ուղած պայմաններով:

ՖԵՈՒ. ԻՎ.—Այ թե ինչ:

ԼԵՈՆ. Ֆ.—Հապա ի՞նչ ես կարծում: (Ցույց է ցույց բուլղոքը)  
յերևակալիր, թուղթը, վոր յես քեզ ավի, յերևաց սեղանի վրա,  
յես ստորագրեցի:

ՖԵՈՒ. ԻՎ.—Այդ ի՞նչպես ընկավ այդ թուղթը այստեղ:

ԼԵՈՆ. Ֆ.—Դե բանն էլ այն է, վոր ընկավ: (Գնում է):

ՖԵՈՒ. ԻՎ.—(Գնում է նրա հետևից):

ՏԵՍԻԼ 22

Տանյան մենակ, դուրս է գալիս բազմոցի սակից յեվ ծիծա-  
ղում է:

ՏԱՆՅԱ.—Ո՛յ, ոյ, ոյ, ոյ... տեր աստված... այ թե վախից  
թուլացա չերբ նա թե լից բռնեց, (նշում է) դե, բայց է այնպես  
հաջող անցավ—ստորագրեց:

ՏԵՍԻԼ 23

Տանյա յեվ Գրիգորիյ

ԳՐԻԳՈՐ.—Այդ ուրեմն դեռ էյիր նրանց հիմարացնում:

ՏԱՆՅԱ.—Ձեզ ինչ:

ԳՐԻԳՈՐ.—Բա ի՞նչ. կարծում ես խանումը այդ բանի հա-  
մար քեզ շատ կգովի. չե, հիմա լավ բռնվեցիր: Յեթե իմ ասածը  
չես կատարի...

ՏԱՆՅԱ.—Վոչ ձեր ասածը կկատարեմ, վոչ էլ դուք կարող  
եք ինձ մի բան անել:

Վ.Ս.Ր.Ա.Գ.ՈՒՅՐ

Ա.Ր.Ա.Ր.Վ.Ա.Ծ IV

Քեմը ներկայացնում է առաջին արարվածի սեստրանը

ՏԵՍԻԼ 1

Ֆեդու կառք—ուղեկցող լակեյներ (լիվրեյ հագած), Ֆեոդոր Իվանիչ  
յեվ Գրիգորիյ

Ա. ԼԱԿԵՅ.—(Սպիտակ բախենբուրգներով) Այստեղ ձեզ մտա  
ենք. յերբորդ հերթն է. գոհ եմ, վոր հիմա մի կողմի վրա յեն  
ընդունելության որերը: Առաջ ձեզ մտա հինգշաբթի որերն եր  
ընդունելությունը:

ՖԵՈՒ. ԻՎ.—Հետո փոխեցինք շաբաթ որերին, վորպեսզի  
Գալովկինների, Գրադե Ֆոն Գրաբենների հետ միևնույն որը լինի:

Բ. ՍՊԱՍ.—Շչերբակովների մտա այնպես լավ է, ինչպես  
մի խնջույք, այնպես վոր, սպասավորներին հյուրասիրում են:

ՏԵՍԻԼ 2

Նույն, վերելից իջնում են իշխանուհին, իշխանագնուհու հետ. Բեդ-  
սին հանապարհ է դնում նրանց: Իշխանուհին նայում է աղջկան,  
նայում ժամացույցին յեվ նստում է սնդուկի վրա: Գրիգորին հագ-  
ցնում է նրա կոփիները

ԻՇԽԱՆԱՋՆ.—Վոչ, խնդրում եմ վոր դաս, թե չե դու  
հրաժարվում ես, Դոդոն էլ չի ուզում, ուրեմն վոչինչ չի դուրս  
դա:

ԲԵԴՍԻ.—Ձգիտեմ. Շուրինների մտա պետք է գնանք ան-  
պատճառ. հետո փորձ ունենք:

ԻՇԽԱՆԱՋՆ.—Կհասնես. չե, խնդրեմ անպատճառ. Ne nous  
fais pas faux bond. Ֆեդյան կլինի է կոկոն:

ԲԵԴՍԻ.—J' en ai par dessus la tête de votre Coco.



ԻՇԽԱՆԱԶՆ.—Յետ կարծում ելի թե նա այստեղ կ'լինի.  
Ordinairement il est d'une exactitude...

ԲԵԴՄԻ.—Նա անպայման կզա:

ԻՇԽԱՆԱԶՆ.—Յերբ վոր յես նրան տեսնում եմ քեզ հետ, յես կարծում եմ, թե նա հենց նոր առաջարկությունն է արել, կամ պիտի անի:

ԲԵԴՄԻ.—Այո, հավանական է. մնում է մի կերպ դուրս պրծնել. և այնպես անհաճո յե ինձ այդ բանը:

ԻՇԽԱՆԱԶՆ.—Խեղճ Կոկո, նա այնպես սիրահարված է:

ԲԵԴՄԻ.—Cessez, les gens.

ԻՇԽԱՆԱԶՆ.—(Նստում է բազմոցիկի վրա, կամաց խոսելով, Գրիգորը հագցնում է նրա կոբիկները):

ԻՇԽԱՆԱԶՆ.—Ուրեմն մինչև չերեկո:

ԲԵԴՄԻ.—Կաշխատեմ:

ԻՇԽԱՆԱԶՆ.—Ուրեմն ասեք պապային, վոր յես վոչ մի բանի չեմ հավատում, բայց կզամ նայելու նրա նոր մեղիումին. թող նա մեզ իմաց աս. ցտեսություն, ma toute belle. (համբուռում է յեվ գնում է աղջկա հետ):

(Բեգրի. գնում է վերել)

ՏԵՍԻՒ 3

Յերկու լակեյը, Ֆեոդոր Իվանիչ յեվ Գրիգորիչ

ԳՐԻԳՈՐ.—Ձեմ սիրում պառավների կոշիկները հազցնել. բոլորովին չեք թեքվում. փորից դենը չեք տեսնում. հենց հրում է ուղղակի. ուրիշ բան է ջահել աղջիկը, հաճելի վոտիկը ձեռքի մեջ առնել...

Բ. ԼԱԿԵՅ.—Սա էլ է ջոկում պառավն ու ջահելը:

Ա. ԼԱԿԵՅ.—Մեզ պես մարդկանց այդպիսի բաներ չեն սաղում:

ԳՐԻԳՈՐ.—Ի՞նչու չջոկենք. միթե մենք մարդիկ չենք, այդ նրանք են այդպես կարծում, թե չենք հասկանում: Ինչպես վոր հիմա խոսեցին, խոսեցին, նայեցին ինձ և իսկույն՝ լե ժան:

Բ. ԼԱԿԵՅ.—Այսինքն թե:

ԳՐԻԳՈՐ.—Դա նշանակում է թե, մի խոսիք, հասկանում են: Ճաշի ժամանակ ել նույնն եր. իսկ յես հասկանում եմ, դուք ասում եք տարբերություն. վոչ մի տարբերություն չկա:

Ա. ԼԱԿԵՅ.—Տարբերությունը մեծ է, ով հասկանում է:

ԳՐԻԳՈՐ.—Վոչ մի տարբերություն չկա: Այսոր յես լակեյ եմ, դուցե վաղը կարող եմ ապրել նրանից վոչ պակաս: Լակե-

յի հետ ել են աղջիկներն ամուսնանում: Միթե չի պատահել Գնամ ծխեմ: (Գնում է):

ՏԵՍԻՒ 4

Նույն, առանց Գրիգորի

Բ. ԼԱԿԵՅ.—Համարձակ է ձեր այդ յերիտասարդը:

ՖՆՈՐ. ԻՎ.—Դատարկ աղա յե. ծառայության անընդունակ. գրասենյակի գործակատար եր. չեքես է առել: Յես ել խորհուրդ չավի սրան ընդունել. բայց խանութին դուր եր յեկել. լավ տեսքով է, իրեն հետ միասին դուրս գնալու համար:

Ա. ԼԱԿԵՅ.—Յես նրան կտանեյի մեր կոմսի մոտ. նա նրան խելքի կբերեր: Ա՛յ թե չի սիրում այդպիսի թեթևալիկներին: Լակեյ ես, դե լակեյ չեղիր ու քո կոչումդ արգարացրու:

ՏԵՍԻՒ 5

Նույն, վերելից վազում է Պետրիչեյը պապիքոս հանելով

ՊԵՏՐԻՇ.—(Մտնողությամբ) Այո, այո, իմ յերկրորդը նույնն է ինչ վոր «կա», կար-տոժ-կա, իմ ամբողջս... այո, այո: (Նրան դռան մոտ հանդիպում է Կոկո Կլիմգենը պեմսնեյով) Կոկոշա, այ կարտոշա, վհրտեղից:

ԿՈԿՈ—Շչերբակովների մոտից, դու միշտ հիմարություններ ես անում:

ՊԵՏՐԻՇ.—Ձե, դու լսիք, մի շարագ. իմ առաջինը նույնն է ինչ վոր «կին», իմ յերկրորդը նույնն է ինչ վոր «կա», իսկ իմ ամբողջը հեռու-յե քշում հորթերին:

ԿՈԿՈ—Չգիտեմ, չգիտեմ, յես ժամանակ չունեմ:

ՊԵՏՐԻՇ.—Ելի ուր պետք է գնաս:

ԿՈԿՈ—Ի՞նչպես թե ուր. Իվինների մոտ, յերգեցողության փորձեր են, պետք է գնալ. հետո Շուրիների մոտ, հետո փորձի: Ձե վոր դու ել պետք է այնտեղ լինես:

ՊԵՏՐԻՇ.—Ինչպես չե, անպատճառ և փորձերին և թե մորձերին: Յես առաջ վայրենի եյի. իսկ հիմա և վայրենի չեմ և գենեբալ:

ԿՈԿՈ—Իսկ յերեկվա սեանսը ինչպես անցավ:

ՊԵՏՐԻՇ.—Մազալու. մի գլուզացի յեր, գլխավորն է, բոլորը միության մեջ: Վովոն նորածին յերեխայի պես ճշում եր, պրոֆեսորը բացատրություններ եր ասլիս. իսկ Մարիա Վասիլիանսի վիճարանում եր, զվարճելի յեր, ափսոս վոր դու չկայիր:



ԿՈԿՈ—Վախենում եմ, mon cher, դու ինչպես միշտ կատակներով կարողանում ես գուրս պրծնել, իսկ ինձ միշտ թվում է, թե այս ե անա մի խոսք կասեմ, իսկույն այնպես շուռ կտան, վոր իբր յես առաջարկութուն արի. Et ca ne m'arrange pas du tout, du tout. Mais du tout du tout!

ՊԵՏՐԻՇ.—Իսկ դու առաջարկութուն արա ստորոգյալի հետ, և վոչինչ չի լինի. դե մտիր Վոլոյի մոտ, մենք միասին կգնանք փորձ ու մորձի:

ԿՈԿՈ—Չեմ հասկանում դու ինչպես ես ժամանակ անցկացնում այդ հիմարի հետ. շատ ախմարն է, այ ջեղ իսկական դատարկապորտ:

ՊԵՏՐԻՇ.—Իսկ յես նրան սիրում եմ: Սիրում եմ Վոլոյին, բայց «странною любовью»! К нему не зарастет народная тропа... (Գնում ե Վասիլիյ Լեոնիլիչի սենյակը):

ՏԵՍԻԼ 6

Յերկու լակեյ Ֆեոդոր Իվանիչ, Կոկո Կլինգեմ յեվ Բեդսի (Բեդսին նախապահում է մի սիկնոց)

(Կոկոն խոր գլուխ է սալիս)

ԲԵԴՍԻ—(Թորվում է նրա ձեռքը կողից, ապա դառնալով սիկնոցը) Դուք ծանոթ չե՞ք:

ՏԻԿԻՆ—Վոչ:

ԲԵԴՍԻ—Բարոն Կլինգեմ... ինչ՞ուր յերեկ չեկաք:

ԿՈԿՈ—Չկարողացա, հնարավոր չեղավ:

ԲԵԴՍԻ—Ափսոս, շատ հետաքրքրական էր: (Ծիծաղում է) դուք կ'զարմանայիք, թե ինչպիսի մանիֆեստատսիոններ տեղի ունեցան: Ե, ինչպե՞ս է մեր շարադը, առաջ գնձե՞մ է:

ԿՈԿՈ—Ո, այո, mon second-ի վրա զրված, վրտանավորը պատրաստ է, ընկերս է շարադրել, իսկ յես յեղանակ եմ հարմարեցրել:

ԲԵԴՍԻ—Ինչպե՞ս թե... ապա ասացելք:

ԿՈԿՈ—Թույլ տվե՞ք, ինչպե՞ս... հա, ասպետը յերգում է Նաննային: (Յերգում է) նա, նա, նա...

ԲԵԴՍԻ—Դուք հասկանում եք, ինչ... անմիտ բան է:

ԿՈԿՈ—Հենց անմտության մեջ է նրա համը:

ՏԻԿԻՆ—Ո՞վ է այդ Նանայը:

ԲԵԴՍԻ—Յես եմ. յես զգեստ եմ գնել, իսկ մայրիկը չի թույլ տալիս հագնելու թե «անվայելուչ» է: Իսկ յես կասեմ, վոր

ավելի վայելուչ է, քան թե պարահանդեսներում հագնում են: (Ֆեոդոր Իվանիչին) Ի՞նչ է, յեկե՞լ է Բուրդեի արտելչիկը:

ՖԵՈԴ. ԻՎ.—Այո, յեկել է, խոհանոցում նստած է:

ՏԻԿԻՆ—Իսկ ո՞ւր մնաց Նաննայը:

ԲԵԴՍԻ—Դուք կտեսնե՞ք. չեմ ուզում ձեր հաճույքը խանդարել. au revoir.

ՏԻԿԻՆ—Ց'տեսութուն: (Մնաւ-բարով են անում. սիկնոք գրնում է):

ԲԵԴՍԻ—(Կոկոյին) Գնանք մամայի մոտ: (Գնում է Կոկո Կլինգեմի հետ վերել):

ՏԵՍԻԼ 7

Ֆեոդոր Իվանիչ, յերկու լակեյը յեվ Յակոֆը (դուրս է գալիս բուժեֆից մասուցարանով, քեյով նուտակով յեվ նախապենյակից անցնելով՝ նեվալով գնում է վերել)

ՅԱԿՈՖ—(Լակեյներին) Հարգանքներս: (Լակեյները գլուխ են սալիս)

ՅԱԿՈՖ—(Ֆեոդոր Իվանիչին) Գոնե հրամայելիք Գրեգոր Միխայելովիչին մի քիչ ինձ ոգներ, հոգիս դուրս յեկալ: (Քրնում է):

ՏԵՍԻԼ 8

Նույնք, առանց Յակոֆի

Ս. ԼԱԿԵՅ—Աշխատասեր մարդ է յերևում այդ մարդը:

ՖԵՈԴ. ԻՎ.—Լավ աղա յե, բայց արի տես, վոր մեր տիկնոջը դուր չի գալիս, մի կարգին տեսք չունի, ասում է, իսկ հիմա ել խեղճի վրա մեղք կպցրին, թե յերեկ գյուղացիներին դու յես տարել խոհանոց: Վայ թե ճանապարհ գնեն, ափսոս, լավ աղա յե:

Բ. ԼԱԿԵՅ—Ի՞նչ գյուղացի:

ՖԵՈԴ. ԻՎ.—Մեր կուրսկի գյուղից յեկել էյին հոգ գներու, գիշեր ժամանակ էր և իրենք ել համադյուղացիք. մեկը մեր բուֆետի ծառայի հայրն է, դե դրա համար ել նրանց տարել են խոհանոց, իսկ այստեղ յերեկ մտքերի գուշակութուն էր կատարվում: Բան էյին թագցրել խոհանոցում, յեկել էյին բոլոր պարոններն ու տիկիներնը միասին այդ թաքցրած բանը զբոնեկու՝ և հանկարծ տիկիները նկատել է նրանց: Այ քամբախտութուն, ինչպե՞ս կարելի յե, ասում է, այս մարդկանց թույլ տալ խոհանոց մտնելու, վորոնք կարող են վարակված լինել... նա շատ վախեցած է այդ վարակումից:



Նույնի յեվ Գրիգորի

ՅԵՈՂ. ԻՎ.—Գնացեք, Գրիգորի, ոգնեցեք Յակոֆ Իվանի-  
չին, իսկ յես այստեղ կմնամ, մենակ չի հասցնում:

ԳՐԻԳՈՐ.—Գործին վարժ չե, դրա համար ել չի հասցնում:  
(Գնում է):

ՏԵՍԻԼ 10

Նույնի, առանց Գրիգորի

Ա. ԼԱԿԵՅ.—Այդ ի՞նչ նոր մոզա յե հիմա—այդ վարակում-  
ները... Ձերն ել է վախում ուրեմն:

ՅԵՈՂ. ԻՎ.—Կրակից ավելի. մեզ մոտ հիմա միակ հոգսը  
ծուխ տալը, լվանալը է սրսկելն է:

Ա. ԼԱԿԵՅ.—Դրո՞ համար է, վոր այստեղ ողն այնպես ծանր  
է. (զվարացած) չեմ հասկանում, ի՞նչ ցավս են այդ վարակում-  
ները: Վա՛տ ժամանակի հասանք. մինչև անգամ առածուն են  
մոռացել: Այ մեր խնումի քրոջ, իշխանուհի Մասլովայի աղ-  
ջիկը մեռնում եր, և ի՞նչ եք կարծում, վոչ մայրը, վոչ հայրը  
նրա սենյակը չձառն և մնաս բարով չարին, իսկ աղջիկը լաց  
եր լինում, կանչում եր, վոր վերջին անգամ յերեսները տես-  
նի՛ և չ՛գնացին: Բժիշկը ինչ—վոր վարակիչ բան եր գտել: Բայց  
չէ՞ վոր հիվանդի մոտ միշտ լինում էյին թե աղախինը, թե հի-  
վանդապահ կինը: Հապա ինչո՞ւ նրանց վոչ մի բան չեղավ և  
հիմա ել վոզ՛ առողջ են:

ՏԵՍԻԼ 11

Նույնի, Վասիլի Լեոնիդի յեվ Պետրիչեկ

(դուրս են գալիս դուրսից պապիտոսներ բերաններին)

ՊԵՏՐԻՇ.—Դե գնանք, յես միայն ինձ հետ կառնեմ Կոկոշ-  
կա—Կարտոշային:

ՎԱՍ. ԼԵ.—Հայվան է քո Կոկոշկան, յես քեզ ասեմ, նրան  
տեսնել չեմ կարողանում. ա՛յ թե դատարկ տղա յե, հա, իսկա-  
կան հատակ սրբող. վոչ մի բանով չի պարսպում, միայն թա-  
փառում է, ա՞, ինչպես:

ՊԵՏՐԻՇ.—Դե, սպասիր, համենայն դեպս գոնե ցտեսու-  
թյուն ասեմ:

ՎԱՍ. ԼԵ.—Լավ, լավ. յես գնամ կառապանների մոտ, շնե-  
րին նայելու. մի գամբո ունեմ վորքան չարն է, կառապանն ա-  
սում է քիչ եր մնացել վոր նրան ուտեր: Ա՞, ինչպես:

ՊԵՏՐԻՇ.—Ո՞վ ում պետք է ուտեր, մի՞թե կառապանը  
գամբոն:

ՎԱՍ. ԼԵ.—Դե դու ել միշտ... (Հագնվում է յեվ գնում):

ՊԵՏՐԻՇ.—(Մտածկոս) Մա-կին-տոժ, կար-տոժ-կա, այո, այո:  
(Գնում է վերել):

ՏԵՍԻԼ 12

Յերկու Լակեյը, Ֆեոդո Իվանի յեվ Յալոն (Տեալի սկիզբին յեվ  
վերջին անցուդարձ է անում բեմի վրա)

ՅԵՈՂ. ԻՎ.—(Յակոֆին) Ելի ի՞նչ է:

ՅԱԿՈՆ.—Բուտերբուրդ չկա, յես ասում եմ... (Գնում է):

Բ. ԼԱԿԵՅ.—Մեկ ել մեր պարոնի յերեխան հիվանդացավ,  
խսկուչն նրան տարան հիվանդանոց դայակի հետ, այնտեղ ել  
մեռավ առանց մոր:

Ա. ԼԱԿԵՅ.—Յեվ մեղքից ել չեն վախենում: Յես հավա-  
տացած եմ, վոր ասածուց վոչ վոք փախչել չի կարող:

ՅԵՈՂ. ԻՎ.—Յես ել եմ այդպես կարծում:

(Յակոն. նես է վազում բուտերբուրդով):

Ա. ԼԱԿԵՅ.—Այս ել աչքի առաջ ունեցեք, վոր թե վոր  
հիմա ամեն բանից պետք է վախենանք, ուրեմն պետք է չորս  
պատի մեջ փակվենք ինչպես բանտում և նստենք մենակ:

ՏԵՍԻԼ 13

Նույնի, Տանյա, նեսն Յակոն

ՏԱՆՅԱ.—(Դուլիս է ասլիս լակեյներին) Բարև ձեզ:

(Լակեյները նույնպես գլուխ են ասլիս):

ՅԵՈՂ. ԻՎ.—Հապա, ի՞նչ կասես...

ՏԱՆՅԱ.—Ֆեոդոը Իվանիչ, ելի յեկել են գյուղացիները...

ՅԵՈՂ. ԻՎ.—Լավ, ել ի՞նչ կա վոր, չէ՞ վոր յես թուղթը  
տվի Սիմեոնին:

ՏԱՆՅԱ.—Թուղթը յես նրանց տվեցի. ինչպես են շնորհա-  
կալ լինում, ել չեմ կարող ասել: Հիմա խնդրում են, վոր նրան-  
ցից փողերը ստանա:

ՅԵՈՂ. ԻՎ.—Հապա վորտեղ են:

ՏԱՆՅԱ.—Այստեղ են, դրսի դրան մոտ կանգնած են:

ՅԵՈՂ. ԻՎ.—Լավ, յես կասեմ:

ՏԱՆՅԱ.—Մի խնդիր ել ունեմ ձեզ, Ֆեոդոը Իվանիչ, սիրե-  
լիս:

ՅԵՈՂ. ԻՎ.—Ի՞նչ է ելի:



**ՏԱՆՅԱ.**—Այն է, Ֆեոդոր Իվանիչ, վոր յես այլ ևս չեմ կարող մնալ այստեղ, խնդրեցեք, վոր ինձ արձակեն:

(Յակոֆը ներս է վազում)

**Ֆեոդ. Իվ.**—Դձև ինչ:

**ՅԱԿՈՖ.**—Ուրիշ սամավար են ուզում, մեկ էլ նարինջներ:

**Ֆեոդ. Իվ.**—Տեսեսուհուն ասա:

(Յակոֆը վազում է դուրս)

**Ֆեոդ. Իվ.**—Տար ինչքան վոր կա:

(Յակոֆը դուրս է վազում)

**Ֆեոդ. Իվ.**—Այդ ինչո՞ւ համար այդպես:

**ՏԱՆՅԱ.**—Բա ինչպես, հիմա իմ բանն ուրիշ է:

**ՅԱԿՈՖ.**—(Ներս վազելով) Նարինջները քիչ են:

**Ֆեոդ. Իվ.**—Ժամանակ ես գտել հիմա. տեսնում ես ինչպես խառնված ենք:

**ՏԱՆՅԱ.**—Ինքներդ գիտեք, Ֆեոդոր Իվանիչ, այս շփոթութիւնը վերջ չկա, ինչքան էլ սպասես—ինքներդ գիտեք, վոր իմ գործը ինչ գրութեան է: Սիրելիս, Ֆեոդոր Իվանիչ, ինչպես վոր ինձ բարութեան արիք, յեղեք ինչպես հարազատ հայր, մի փոքր ժամանակ գտեք և ասացեք, թե չե կըսրկանա և չի արձակի:

**Ֆեոդ. Իվ.**—Այդ ինչ գու աչգպես, հանկարծ գլխիդ քամի փչեց:

**ՏԱՆՅԱ.**—Ուրիշ ինչ անելի, Ֆեոդոր Իվանիչ: Գործս հիմա գլուխ չեկավ, յես ուզում ելի մորս, կնքամորս մոտ գնալ, պատրաստվել, իսկ կարմիր կիրակելին հարսանիքը: Ասացեք, Ֆեոդոր Իվանիչ:

**Ֆեոդ. Իվ.**—Հիմա գնա—ժամանակը չե:

(Վերելից իջնում է մի հասակն առած պարոն յով անխա գնում է ք. լակելի հետ):

**ՏԱՆՅԱ.**—(Դուրս է գնում):

**ՏԵՍԻԼ 14**

Ֆեոդոր Իվանիչ, ա. լակել յով Յակոֆ. (մտնում է)

**ՅԱԿՈՖ.**—Սա ինչ բան է, Ֆեոդոր Իվանիչ, սա հո ծանր վերավորանք է. ուզում են հաշիվս վերջացնելը Դու, ասում է, ամեն բան կտարում ես, շանը մոռացել ես կերակրել և հակառակ իմ հրամանին գյուղացիներին խոհանոց ես թողել. գուք ինքներդ գիտեք, վոր յես վոչ մի բանից տեղեկութուն չունեմ: Ինձ միայն Տատյանան ասաց, թե սրանց խոհանոց ասք. իսկ յես չգիտելի, թե ում հրամանովն եք:

**Ֆեոդ. Իվ.**—Ի՞նչ է, միթե նա այդպես ասաց:

**ՅԱԿՈՖ.**—Այո, հիմա ասաց: Պաշտպանեցեք ինձ, Ֆեոդոր Իվանիչ, թե չե ընտանիքս նոր եր սկսել մի քիչ խելքը գլուխը

հավաքել. յերբ տեղիցս զրկվեմ, նորից կթշվառանա: Ֆեոդոր Իվանիչ, խնդրում եմ:

**ՏԵՍԻԼ 15**

Ֆեոդոր Իվանիչ, ա. լակել յով ամսիրուհի Տանս. նամակարն է դնում կեղծ մագեր յով ասաներ ունեցող պառավ կոմսուհուն

(Ա. լակելը հագցնում է կոմսուհուն)

**ՏԻՐՈՒՀԻ.**—Անպատճառ. ինչպես չե, յես իսկապես գգած ված եմ:

**ԿՈՄՍՈՒՀ.**—Յեթե անատողութունս չլիներ, յես ավելի շուտ-շուտ ձեզ մոտ կգալի:

**ՏԻՐՈՒՀԻ.**—Իսկապես, ձեզ հետ բերեք Պյոտր Պետրովիչին, նա կուպիտ է. բայց վոչ վոք չի կարող նրա պես հանգստացնել: Այնպես հասարակ է, այնպես պարզ է նրա ամեն ինչը:

**ԿՈՄՍՈՒՀ.**—Չե, յես արդեն սովորել եմ:

**ՏԻՐՈՒՀԻ.**—Յեղեք ավելի զգուշ:

**ԿՈՄՍՈՒՀ.**—Merci, mille fois merci!

**ՏԵՍԻԼ 16**

Նույն յով Գրիգորիյ (գզգզված յով այրալված դուրս է բռնում բուժեցից. նրա նետվից յերելում է Սիմեոնը)

**ՍԻՄԵՈՆ.**—Իսկ դու մի ընկնիր նրա հետեից:

**ԳՐԻԳՈՐ.**—Յես քեզ ցույց կամ, սրիկա, թե ինչպես են կովում: Այ գու անողամ:

**ՏԻՐՈՒՀԻ.**—Սա ինչ բան է, ինչ է, դուք գինեաման եք, ինչ է:

**ԳՐԻԳՈՐ.**—Յես չեմ կարող մնալ այդ կոպիտ մուժիկի հետ:

**ՏԻՐՈՒՀԻ.**—(Ափսոսանքով) Դուք գովել եք, ինչ է, միթե չեք տեսնում: (Վաճառում) Merci, mille fois merci. A mardi.

(Վաճառելիս յով լակելը գնում են)

**ՏԵՍԻԼ 17**

Ֆեոդոր Իվանիչ, ամսիրուհի, Գրիգորիյ յով Սիմեոն

**ՏԻՐՈՒՀԻ.**—(Գրիգորիյին) Սա ինչ բան է:

**ԳՐԻԳՈՐ.**—Յես պաշտոնով լակել եմ, բայց յես ունեմ իմ պատվասիրութունը և չեմ թույլ աս, վոր ամեն մի մուժիկ ինձ ձեռ տա:

**ՏԻՐՈՒՀԻ.**—Ի՞նչ է պատահել:



ԳՐԻԳՈՐ.— Ա՛յ, ձեր Սիմեոնը գոռոզանու՞մ է, թե ինքը պարոններին հետ նստել վեր ե կացել: Կռիվ ե սարքում:

ՏԻՐՈՒՀԻ— Ի՞նչ բան է, ինչո՞ւ համար:

ԳՐԻԳՈՐ.— Ասոված գիտե, թե ինչո՞ւ համար:

ՏԻՐՈՒՀԻ— (Սիմեոնին) Սա ի՞նչ ե նշանակում:

ՍԻՄԵՈՆ— Ինչո՞ւ յե դա Տանյայի հետեից ընկնում:

ՏԻՐՈՒՀԻ— Դե մի ասացեք ի՞նչ ե պատահել:

ՍԻՄԵՈՆ— (ժպտալով) Այն ե պատահել, վոր դա Տանյայի, աղախնի հետեից ե ընկել, ձեռքը գցում ենրան, իսկ նա չի ուզում: Յես ել ձեռքով աչն կողմը հրեցի, այնպես, կամաց:

ԳՐԻԳՈՐ.— Լավ կամաց եր, քիչ մնաց կողերս ջարդեր, ֆրակս ել պատառոտեց: Ինչ ե ասում, տեսեք, ասում ե «ինձ վրա չերեկվա ույժն ե մնացել» և սկսեց սեղմել:

ՏԻՐՈՒՀԻ— (Սիմեոնին) Ինչպե՞ս ես համարձակվում ի՞մ տան մեջ կռիվ սարքել:

ՅԵՈՒԴ. Ի՛՛՛՛.— Թույլ տվեք տեղեկացնել ձեզ, Աննա Պավլովնա. պետք ե ձեզ ասեմ, վոր Սիմեոնը դեպի Տանյան վորոշ դպացմունքներ ունի և հիմա նրանք նշանված են: Իսկ Գրիգորը պետք ե ճիշտն ասել, վարվում ե տղեղ, անազնիվ: Դե, դրանից ել, յես կարծում եմ, Սիմեոնը նեղացել ե նրա վրա:

ԳՐԻԳՈՐ.— Բոլորովին վո՛չ. դա չարությունից ե. վորովհետև չես բաց արի նրանց բոլոր ոյինբազությունները:

ՏԻՐՈՒՀԻ— Ի՞նչ ոյին:

ԳՐԻԳՈՐ.— Սեանսի ժամանակ. չերեկվա բոլոր ոյինները, վոչ թե Սիմեոնն եր անում, ալլ Տանյան: Յես ինքս տեսա, չերը նա բազմոցի տակից դուրս չեկավ:

ՏԻՐՈՒՀԻ— Ի՞նչ ես ասում, բազմոցի տակից...

ԳՐԻԳՈՐ.— Կարող եմ ձեզ ազնիվ խոսք տալ: Նա եր թուղթը բերեց և գցեց սեղանի վրա: Թե վոր նա այդ բաները չաներ, վոչ թուղթը կստորագրվեր, վոչ ել հողը կվաճառվեր:

ՏԻՐՈՒՀԻ— Դուք ինքներդ տեսա՞ք:

ԳՐԻԳՈՐ.— Աչքերովս տեսա, հրամայեցեք կանչեմ նրան. նա չի թաքցնի այդ բանը:

ՏԻՐՈՒՀԻ— Կանչեցեք Տանյային:

(Գրիգորը գնում ե):

ՏԵՍԻՒՂ 18

Նույնք, առանց Գրիգորի (բեմի հետևից աղմուկ)  
ՇՎԵՅՑԱՐ— (Բեմի հետևից) Ձի կարելի, չի կարելի (յերեվում)

ե դռներում) (նրա կողից ներս են խուժում յերեք գյուղացիներ, առաջ ե ընկած բ. գյուղացին. գ. գյուղացին սալքափում ե յեվ ընկնում. քիթը բռնած վեր ե կենում)

ՇՎԵՅՑԱՐ— Ձի կարելի ասում եմ, չի կարելի:

Բ. ԳՅՈՒԴ.— Լավ, լավ, վոչինչ, մենք վատ բանի համար

չենք չեկել, մենք փող ենք տալու:

Ա. ԳՅՈՒԴ.— Դրուստ ե, ինչպես վոր թուղթը ձեռք քաշած գործը վերջացրած ե, մենք փողերն ենք բերել, մեր շնորհակալության հետ միասին:

ՏԻՐՈՒՀԻ— Սպասեցեք, սպասեցեք շնորհակալություն հայտնել, այդ բոլորը խաբեբայություն ե չեղել. գործը դեռ չի վերջացրած... չի վաճառված... Լեոնիդ... կանչեցեք Լեոնիդ Ֆեոդորովիչին: (Շվեյցարը գնում ե):

ՏԵՍԻՂ 19

Նույնք յեվ Լեոնիդ Ֆեոդորովիչ

ԼԵՈՆ. Ֆ.— (Դուրս ե գալիս, բայց սեսնելով սիկնոզը յեվ գյուղացիներին ուզում ե գնալ):

ՏԻՐՈՒՀԻ— Վոչ, վոչ, համեցեք այստեղ: Յես ձեզ ասացի, վոր հողը չի կարելի վաճառել, ապառիկ: Բոլորն ել ասացին այդ բանը: Իսկ ձեզ խաբում են ինչպես ամենահիմար մարդուն:

ԼԵՈՆ. Ֆ.— Այսինքն ի՞նչ բանում, յես չեմ հասկանում ինչ խաբեբայություն ե:

ՏԻՐՈՒՀԻ— Գոնե ամաչեցեք. դուք սպիտակել եք, բայց և այնպես ձեզ խաբում են ինչպես մի չերեխայի և ծիծաղում ձեզ վրա: Ափսոսում եմ վորդու համար ինչ վոր 300 ռուբլի ինչպես վաչել և հասարակական դիրքի, իսկ ձեզ վորպես տխմարից հարմներ են սլկացնում:

ԼԵՈՆ. Ֆ.— Հանգստացիր Annette, հանգստացիր:

Ա. ԳՅՈՒԴ.— Մենք գումարը վճարելու համար այսինքն...

Գ. ԳՅՈՒԴ.— (Հանում ե փողեր) ձանապարհ դիր մեզ, Բըրիստոսի սիրուն:

ՏԻՐՈՒՀԻ— Սպասեցեք, սպասեցեք:

ՏԵՍԻՂ 20

Նույնք, Գրիգորի յեվ Տանյա

ՏԻՐՈՒՀԻ— (խառնեմ, Տանյային) Դու չերեկ չերեկոյան սեանսի ժամանակ յեղել ես փոքր ընդունարանում:



**ՏԱՆՅԱ**—(Հագոց հանելով նայում ե Ֆեոդոր Իվանիչի, Լեոնիդ Ֆեոդորովիչի յեվ Սիմեոնի յերեսներին):

**ԳՐԻԳՈՐ**—Լավ, ել պատե-պատ մի ընկնիր, քանի վոր յես ինքս եմ տեսել:

**ՏԻՐՈՒՀԻ**—Ասա, յեղել ես. յես ամեն ինչ գիտեմ, խոստովանիր. յես քեզ վոչինչ չեմ անի, յես միայն ուզում եմ անա սեւ խաբւած լինելը յերեւան հանել (ցույց ե ցալիս Լեոնիդ Ֆեոդորովիչին) նրան, աղիդ... թուղթը դու պեցեցիր սեղանի վրա:

**ՏԱՆՅԱ**—Յես չգիտեմ ինչ պատասխանեմ. մի բան. չի կարելի ինձ արձակեք տուն:

**ՏԻՐՈՒՀԻ**—(Լեոնիդ Ֆեոդորովիչին) Ահա, տեսում եք, ձեզ հիմարացնում են:

ՏԵՍԻԼ 21

Նույնք, Բեդոսին մտնում ե տեսիլի սկզբում յեվ մյուսներից աննկատելի կոնգնում ե

**ՏԱՆՅԱ**—Արձակեցեք ինձ, Աննա Պավլովնա:

**ՏԻՐՈՒՀԻ**—Վոչ, սիրելիս դու կարելի չես թե մի քանի հազարի վնաս ես ավել: Ծախել ենք հողը, վորը չպետք ե ծախվել:

**ՏԱՆՅԱ**—Արձակեցեք ինձ, Աննա Պավլովնա:

**ՏԻՐՈՒՀԻ**—Չե, դու կպատասխանես. խարդախություն անել չի կարելի, յես գործը կտամ հաշտարար դատավորին:

**ԲԵԴՍԻ**—(Առաջ գալով) Արձակեցեք նրան, մայրիկ. իսկ յեթե կուզեք նրան դատի հանձնել, ինձ ել նրա հետ. յես նրա հետ ելի յերեկ ամեն բան անում:

**ՏԻՐՈՒՀԻ**—Հո, յեթե արդեն դու ել ես մեջը յեղել, բացի զվելի բանից, ուրիշ վոչինչ չեք կարելի սպասել:

ՏԵՍԻԼ 22

Նույնք յեվ պրոֆեսոր

**ՊՐՈՓԵՍ**—Բարե ձեզ, Աննա Պավլովնա, բարե ձեզ, որիորդ: Ահա յես Լեոնիդ Ֆեոդորովիչ, բերում եմ ձեզ Չիկագոյի սպիրիտուալիստներին 13-րդ համագումարի տեղեկագիրը: Զարմանալի ճառ ե Շմիտի ճառը:

**ԼԵՈՆ. Ֆ.**—Ա, շատ հետաքրքրական ե:

**ՏԻՐՈՒՀԻ**—Յես ձեզ ավելի հետաքրքրականը կասեմ: Բանից յերևում ե, վոր ձեզ ել, իմ մարդուն ել հիմարացրել ե այս աղջիկը: Բեդոսին իր վրա յե վերցնում, վոր ինձ զայրացնե, իսկ

հիմարացրել ե ձեզ այդ անպարզեւ աղջիկը ե դուք դեռ հավատում եք: Յերեկ վոչ մի մեղիւումական յերևույթ չե յեղել ձեզ մոտ, այլ բոլորը արել ե սա (ցույց ե ցալիս Տանյային):

**ՊՐՈՓԵՍ.**—(Հանելով վերահյուն) Ինչպե՞ս, այսինքն...

**ՏԻՐՈՒՀԻ**—Այնպես վոր նա մթության մեջ թե կիթառ ե ածել, թե իմ մարդու գլխին թակել ե եւլի ուրիշ հիմարություններ. այս բոլորին խոստովանեցրի:

**ՊՐՈՓԵՍ.**—(Ժպտալով) Այդ ինչ ե ուրեմն ապացուցանում:

**ՏԻՐՈՒՀԻ**—Ապացուցանում ե այն, վոր ձեք մեղիւումիզմը—հիմարություն ե. ահա ինչ ե ապացուցանում:

**ՊՐՈՓԵՍ.**—Ուրեմն չեթե այդ աղջիկն ուզեցել ե մեղ խաբել, նշանակում ե մեղիւումիզմը հիմարություն ե—այդ ինչպես եք բարեհաճում արտահայտվել, (ժպտալով) տարբրինակ յեզրուկացություն: Շատ կարելի չես թե այդ աղջիկը կամեցել ե խաբել. դա հաճախ ե պատահում. կարելի չես թե նա մի բան արել ե, բայց այն, ինչ վոր նա ե արել՝ արել ե նա. իսկ այն ինչ վոր մեղիւումական ուշի հետեանք ե, նա ել հետեանք ե մեղիւումական ուշի: Նույն իսկ շատ հավանական ե, վոր այն, ինչ վոր անում եր այս աղջիկը, առաջացնում եր մարմնացում, այսպես ասած, մեղիւումիքական ուշի արտահայտություն, ավել ե նրան վորոշ ձեւավորություն:

**ՏԻՐՈՒՀԻ**—Դարձյալ դատախոսություն...

**ՊՐՈՓԵՍ.**—(կրպ) Դուք ասում եք, Աննա Պավլովնա, վոր այս աղջիկը, կարելի չես թե ե այս նազելի որիորդը ինչ վոր մի բան արել են, բայց լուրջ, վոր մենք ամենքս տեսանք, ե առաջին դեպքում ջերմության իջեցումը ե յերկրորդ դեպքում բարձրացումը, իսկ Գրոսմանի ալլալությունը ե յերերումը—ինչ ե, մեթե այդ ել այս աղջիկն ե արել: Իսկ դրանք ապացույցներ են, Աննա Պավլովնա: Զե Աննա Պավլովնա, կան բաներ, վորոնք պետք ե լիակատար կերպով ուսումնասիրել ե հասկանալ, վորպեսզի խոսել նրանց մասին. դրանք լուրջ, շատ լուրջ խնդիրներ են:

**ԼԵՈՆ. Ֆ.**—Իսկ յերեխան, վոր այնքան պարզ տեսավ Մարիա Վասիլևնան, յես ել տեսա... Դա ել հո չեք կարող այդ աղջիկն անել:

**ՏԻՐՈՒՀԻ**—Դուք կարծում եք, թե դուք խելոք եք. դուք հիմարի մեկն եք:

**ԼԵՈՆ. Ֆ.**—Դե յես գնում եմ, Ալեքսեյ Վլադիմիրովիչ, զը-



նանք, ինձ մոտ: (Գնում են առանձնասենյակը):

ՊՐՈՓԵՍ.—(Ուսերը քափահարելով գնում է նրա հետևից)  
Ա, ուր, դեռ մենք ինչքան հեռու յենք Յեվրոպայից:

ՏԵՍԻՒ 23

Տիրուհի, յերեք գյուղացի, Ֆեոդոր Իվանիչ, Տանյա, Բեդալի, Գրիգորի, Սիմեոն, (Յակոֆ մեկնում է)

ՏԻՐՈՒՀԻ.—(Լեռնիդ Ֆեոդորովիչի հետևից) Նրան խաբուր են ինչպես մի հիմարի, իսկ նա վոչինչ չի տեսնում: (Յակոֆին) քեզ ինչ է հարկավոր:

ՅԱԿՈՖ.—Շատ մարդու համար էք հրամայում սեղան պատրաստել:

ՏԻՐՈՒՀԻ.—Շատ մարդու համար. Ֆեոդոր Իվանիչ ստացեք դրանից արծաթեղենը: Դուրս, այս բոլորին: Բոլորը դրանից յեղավ: Այդ մարդն ինձ դերեղման կտանի. յերեկ քիչ մնաց խեղճ շանը սատկեցնեք քաղցից, վոր իրեն վոչինչ չեք արել: Այդ դեռ քիչ եր, նա վարակված գյուղացիներին յերեկ տարել եր խոհանոցը և նրանք դեռ այնտեղ են: Նրանցից ամեն բան սպասելի յե: Դուրս, այս բոլորին, դուրս. հաշիվը ավեր. հաշիվը: (Սիմեոնին) իսկ յեթե դու մյուս անգամ թույլ կտաս քեզ իմ տան մեջ աղմուկ բարձրացնել, յես քեզ, անպիտան մուժիկ, այնպես կխրատեմ...

Բ. ԳՅՈՒՆ.—Ել ինչ է, յեթե նա անպիտան մուժիկ է, ել ինչու յես պահում, հաշիվը տուր, թող դնա, ուրիշ վոչինչ:

ՏԻՐՈՒՀԻ.—(Լսելով նրան նայում է գ. գյուղացուն) Դե մեկ նայեցեք սրա քթի պղուկներին, նա հիվանդ է, նա վարակում է մի ամբար է. յես յերեկ ասացի, վոր սրանց այստեղ չթողնեք. իսկ նրանք ելի այստեղ են: Դուրս արեք դրանց բուրի:

ՖԵՈՒԴ. ԻՎ.—Ինչ է, չեք հրամայում փողերն ընդունել:

ՏԻՐՈՒՀԻ.—Փողերը. փողերը վերցրու, բայց իրանց, մանավանդ այս հիվանդին դուրս, այս բոլորին դուրս. նա բուրբուրվին փթում է:

Գ. ԳՅՈՒՆ.—Չուր է, մայրս, աստված վկա դուր է, իմ պառավին, ասենք հարցրու, թե յես փթամ եմ. յես ինչպես աղաղկի յեմ:

ՏԻՐՈՒՀԻ.—Դեռ խոսում ել ե... Դուրս, դուրս, հենց կարծես զիտմամբ չարացնելու համար: Չե, յես չեմ կարող, չեմ

կարող... Ուղարկեցեք կանչելու Պետր Պետրովիչին (փախչում է անյնը նվագեցնելով):

(Յակոֆ, Գրիգորի գնում են)  
ՏԵՍԻՒ 24

Նույնի, առանց տրուհու, Յակոֆի յեվ Գրիգորի յի  
ՏԱՆՅԱ.—(Բեդալիին) Որիտրդ, աղափնյակս, ի՞նչ անեմ հիմա:  
ԲԵԴԱՅ.—Վոչինչ, վոչինչ, արի գնանք մեզ հետ, յես բանը կսարքեմ: (Գնում են):

ՏԵՍԻՒ 25

Ֆեոդոր Իվանիչ, յերեք գյուղացիներ, Տանյա յեվ Եվիցար  
Ա. ԳՅՈՒՆ.—Ի՞նչպես, պատվելի. հիմա փողերն ստանալու մասին:

Բ. ԳՅՈՒՆ.—Արձակիր մեզ:  
Գ. ԳՅՈՒՆ.—(Փողերը անում տրուհու է) Յեթե գիտենայի բանն այսպես է լինելու, յես յերեք հանձն չեյի առնի:  
ՖԵՈՒԴ. ԻՎ.—(Շվիցարին) Տար սրանց ինձ մոտ. այնտեղ համրիչ ել կա, յես կհաշվեմ և փողերը կստանամ: Գնացեք, գնացեք:

ՇՎԵՅՅԱՐ.—Գնանք, գնանք:  
ՖԵՈՒԴ. ԻՎ.—Շնորհակալ չեղեք Տանյայից. յեթե նա չըլիներ, դուք հող չեյիք ունենա:

Ա. ԳՅՈՒՆ.—Դուրստ է, ինչպես վոր խոսք ավեց, այնպես ել կատարեց:

Գ. ԳՅՈՒՆ.—Նա մեզ մարդ դարձրեց, թե չե ինչ կլիներ: Հողը քիչ է, վոչ թե տավար, հավը ասենք, տեղ չկա պահելու: Բարով մնաս խելոք աղյիկ: Գյուղ կգաս, յեկ մեղը ուտելու:

Բ. ԳՅՈՒՆ.—Թող մի տուն գնամ, հարսանիքի պատրաստություն կտեսնեմ, դարեջուր կպատրաստեմ: Միայն թե արի: Գյուղացիք գնում եմ):

ՏԱՆՅԱ.—Կ'գամ, կ'գամ (նչում է) Սիմեոն, սո՛ք թե ինչ լավ կլինի:


ՏԵՍԻՒ 26

Ֆեոդոր Իվանիչ, Տանյա յեվ Սիմեոն  
ՖԵՈՒԴ. ԻՎ.—Աստված ձեզ հետ. տես Տանյա, յերբ վոր տուն — տեղ սարքես, յես քեզ մոտ հյուր կգամ, կընդունես:

ՏԱՆՅԱ.—Սիմեոն Ֆեոդոր Իվանիչ, ինչպես հարազատ հայր ձեզ կընդունեմ: (Փարսավում է յեվ համբուրում է նրան):  
Վ. Ա. Ր. Ա. Գ. ՈՒՅՐ









ԳԻՆԸ 2 ՌՈՒԲ.



Л. Н. ТОЛСТОЙ  
Плоды просвещения  
Гиз ССР Армении, Эривань, 1936 г.



ՀՀ Ազգային գրադարան



NL0327237



